



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Հայաստան

Վերլուծական հաշվետվություն

Էկոնոմիկայի նախարարության համար

30-ը հունիսի, 2015թ.

Ներդրումային քաղաքականություն և
ներդրումների խթանում

Առևտուր և մրցակցային գործունեություն

Համաշխարհային բանկի խումբ

Բովանդակություն

Ներածություն.....	2
I. Հայաստանի տեսլականը՝ տնտեսությունում ՕՈՒՆ-ների դերակատարության հարցում.....	4
A. Ներդրումների կենսափուլը և Ներդրումների տիպոլոգիան. ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման Բարեփոխումների կազմակերպման շրջանակը	5
II. ՕՈՒՆ, արտահանումների և տնտեսական բազմազանության ամփոփ նկարագրություն.....	10
A. ՕՈՒՆ վերջին միտումները	10
B. ՕՈՒՆ տարածաշրջանային բաշխվածությունը	12
C. ՕՈՒՆ ոլորտային բաշխվածությունը.....	14
D. Արտահանումների տնտեսական բազմազանությունը	16
E. Միջազգային շուկաներից օգտվելու հնարավորությունը.....	20
III. Մրցունակության և ներդրումային միջավայրի հետ կապված նկատառումներ	22
IV. Ներդրումային քաղաքականության շրջանակը	31
A. Կանոնակարգող շրջանակը	32
B. Առևտրի բացությունը	38
C. Ինստիտուցիոնալ կառուցվածքը.....	40
D. Ներդրումների վրա ազդող սահմանափակումները.....	41
i. Ներգրավում և խթանում	42
ii. Մուտքը երկիր.....	43
iii. Պաշտպանություն և պահպանում	44
V. Ներդրումային քաղաքականության բարեփոխումները. քաղաքական բնույթի առաջարկություններ	48
Հավելված աղյուսակ 1. Ներդրման տիպոլոգիան	53
Հավելված աղյուսակ 2. Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրություն. Ժողովրդագրական տվյալներ.....	58
Հավելված 3. Համաշխարհային բանկի խմբի դիտողությունները Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության 1994թ. օրենքի վերաբերյալ.....	59
Հավելված 4. Ներդրողներին երկրում պահելու և վերջիններիս վստահությունը ձեռք բերելու մեխանիզմի մոդել.....	78

1. Չնայած բարեփոխման շարունակական ջանքերին, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը նշանակալի բացասական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, իսկ արտագաղթի դադարեցման և աղքատության նվազեցման նպատակով բավարար աշխատատեղերի ստեղծման գործում առկա խոչընդոտները վերացված չեն¹: Հայաստանը մոտ 3 միլիոն բնակչությամբ, շուրջ 10 միլիարդ ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով և մեկ շնչի հաշվարկով 3,830 ԱՄՆ դոլար ՀՆԱ-ով ստորին միջին եկամուտ ունեցող փոքր երկիր է, որի տնտեսությունը 1991թ. անկախությունից ի վեր հիմնավորապես վերափոխվել է: Կայուն աճը, հավակնոտ բարեփոխումները, ինչպես նաև կապիտալի և դրամական փոխանցումների ներհոսքն օգնել է ձևավորել շուկայամետ միջավայր և պահպանել այն: Վերջին ժամանակներս այս խնդիրները սրվել են Ռուսաստանի տնտեսության վատթարացման հետևանքով, ինչը բացասաբար է անդրադարձել արտահանման և արտագնա աշխատողների կողմից դրամական փոխանցումների վրա:

2. Այս համատեքստում Հայաստանի կառավարությունն ընդունել է, որ օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈւՆ), ինչպես նաև միջպետական ձեռնարկությունների կողմից ոչ կանոնադրական կապիտալում ներդրումները (NEM)² կարևոր դերակատարություն են ունեցել զարգացման հետ կապված նպատակների իրագործման հարցում և ՀՀ կառավարությունը հետաքրքրված է այնպիսի բարեփոխումների իրականացմամբ, որոնք կապահովեն ներդրումային քաղաքականության համապատասխանությունը այդ նպատակներին:

3. Սույն վերլուծական հաշվետվությամբ Հայաստանին ներկայացվում է այն շրջանակը, որով երկիրը կարող է ձևավորել ներդրումների վերաբերյալ իր տեսլականը և ներդրումային քաղաքականության բարեփոխումներով խթանել դրա իրականացումը: Լինելով ինտերակտիվ գործընթացի արդյունք, որում ներգրավված են եղել ՀՀ կառավարության և մասնավոր հատվածի բարձրաստիճան և տեխնիկական բնույթի ներկայացուցիչներ, հաշվետվությունը ծառայում է որպես զարգացման ուղղվածություն ունեցող և նպատակային ներդրումային քաղաքականության բարեփոխումների մեկնակետ և քաղաքականություն մշակողներին առաջարկում է գործիքաշար, որը կարող է կիրառվել ներդրումային քաղաքականության բարեփոխումների տարբերակները քննարկելիս և առաջնահերթությունները սահմանելիս:

4. Հաշվետվությունը, ինչպես նաև դրա հիմքում ընկած մասնակցային գործընթացը հետևյալ երեք հիմնական նպատակներն ունեն.

¹ IMF 2014, Հոդված IV, Խորհրդակցություն և առաջին վերանայում՝ ընդլայնված կարգավորման շրջանակներում, Անձնակազմի հաշվետվություն (2015թ. մարտ).

² Ոչ կանոնադրական կապիտալում կատարվող ներդրումները վերաբերում են օտարերկրյա և տեղական ներդրողների միջև պայմանագրային հարաբերություններին՝ ֆրանչայզինգի, լիցենզավորման, պայմանագրային հիմունքներով արտադրության կազմակերպման, ծառայությունների պատվիրակման և նման այլ եղանակներով: Օտարերկրյա գործընկերը սովորաբար տրամադրում է նոու-հաուն, իսկ տեղացի գործընկերը տրամադրում է ներդրումն սկսելու համար անհրաժեշտ կապիտալը: Ոչ կանոնադրական կապիտալում ներդրումները զարգացման մեծ ներուժ ունեն՝ տեխնոլոգիաների տարածման, ձեռնարկությունների զարգացման և գլոբալ արժեշտիներից օգտվելու հարցում զարգացող երկրներին օգնելու տեսանկյունից:

- (i) Կառավարության քննարկումներն ուղղել ներդրումային քաղաքականության համապատասխան հարցերին և սահմանափակումներին՝ ընդհանուր առմամբ նկատի առնելով ՕՈՆ-ները.
- (ii) օժանդակել Հայաստանի կառավարությանը՝ բարեփոխումների գերակայությունները սահմանելու հարցում, հատկապես արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների վերաբերյալ.
- (iii) օժանդակել Հայաստանի կառավարությանը՝ սահմանել որոշակի գործողությունների ցանկ, որոնք կհամապատասխանեն երկրի երկարաժամկետ ներդրումային տեսլականին և 2-3 տարվա կտրվածքով նշանակալի ազդեցություն կունենան:

5. Հաշվետվությունը ունի հետևյալ կազմությունը.

- Առաջին բաժնում նկարագրվում է Հայաստանի տեսլականը ՕՈՆ-ների և երկրի տնտեսական զարգացման գործում դրանց դերակատարության վերաբերյալ: Դրանում նաև պարզաբանվում է հաշվետվությունում կիրառված մեթոդաբանական շրջանակը և հիմնական հասկացությունները՝ Ներդրումների կենսափուլը և Ներդրումների տիպոլոգիան, որոնք կարող են օգտակար լինել ՀՀ կառավարության համար՝ ներդրումային քաղաքականությունն արդյունավետ կազմակերպելու և իր իսկ տեսլականն իրականացնելու նպատակով բարեփոխումները խթանելու համար.
- Երկրորդ բաժնում ներկայացված է ՕՈՆ հոսքերի և արտահանումների վերլուծական նկարագրությունը՝ գնահատելու համար, թե ներկայում ստացված ՕՈՆ տեսակն ու մակարդակը որքանով է համապատասխանում Հայաստանի տեսլականին և երկրի սոցիալական ու տնտեսական նպատակներին.
- Երրորդ բաժնում ներկայացված է Հայաստանի ընդհանուր մրցունակության և ներդրումային միջավայրի ամփոփ նկարագրությունը ՕՈՆ (մասնավորապես՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՆ) առումով, որն իր բնույթով արտահանման ուղղվածություն ունի.
- Չորրորդ բաժինը շարունակում է նախորդ բաժինը և կենտրոնանում Հայաստանի ներդրումային քաղաքականության շրջանակի վրա (*դե յուրե* և *դե ֆակտո* առումներով)՝ գնահատելու համար, թե որքանով է այն նպաստավոր ՕՈՆ համար ընդհանուր առմամբ, և արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար՝ մասնավորապես.
- Վերջին՝ հինգերորդ բաժնում ներկայացված են առաջարկություններ՝ Հայաստանի ներդրումային քաղաքականության շրջանակի բարեփոխման կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարների վերաբերյալ: Իրականացման դեպքում այդ բարեփոխումները կանդրադառնան Հայաստանում ներդրումներին խոչընդոտող հիմնական քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ գործոններին: Անհրաժեշտ է արդիականացնել ներդրումների մասին 1994թ. օրենքը՝ զուգահեռ ապահովելով իրավական և քաղաքական բարեփոխումների հետ ներդաշնակությունը³:

6. Սույն վերլուծական հաշվետվությունից և դրանում ներառված քաղաքական բնույթի առաջարկություններից բացի, առաջարկվում է, որ ՀՀ կառավարությունը հաստատի առանձին գործողությունների ծրագիր, որը կսահմանի քաղաքական առանձին

³ Համաշխարհային բանկի խմբի կողմից Ներդրումների մասին Հայաստանի օրենքի նախնական վերանայումը ներկայացված է սույն հաշվետվության թիվ 3 հավելվածում:

առաջնահերթությունները, գործողությունները, դրանց իրականացման առաջատար գերատեսչությունները և ժամանակացույցը:

I. Հայաստանի տեսլականը՝ տնտեսությունում ՕՈՒՆ-ների դերակատարության հարցում

7. ՕՈՒՆ-ների առնչությամբ Հայաստանի նպատակներն ու ակնկալիքները ձևակերպված են երկու հիմնական փաստաթղթերում. Հայաստանի զարգացման 2014-2025թթ. ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը.

- *Հայաստանի զարգացման ռազմավարություն (ՀԶՌ).* 2008 թվականին հաստատված նախկին Կայուն զարգացման ծրագիրը (ԿԶԾ) Հայաստանը փոխարինել է Հայաստանի զարգացման ռազմավարությամբ, և այս նոր ռազմավարությունը վերաբերում է 2014-2025թթ. ժամանակահատվածին: ՀԶՌ-ը չորս գերակայություն ունի. (i) աշխատատեղերի ավելացում. (ii) մարդկային կապիտալի զարգացում. (iii) սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում. (iv) պետական վարչարարության և կառավարման ինստիտուցիոնալ արդիականացում: Բիզնեսի և ներդրումային միջավայրի շարունակական կատարելագործումը դիտարկվում է որպես գերակայություն՝ բիզնեսների հիմնումն ու ներդրումները խթանելու և պետության անհարկի միջամտությունները նվազեցնելու միջոցով աշխատատեղերի ավելացման առումով: Ներդրումների և մրցակցության խթանումը պետք է շարունակեն մնալ որպես ՀԶՌ նպատակներ: Ներդրումային քաղաքականության արդյունավետության ավելացումը, ինչը նպաստում է առավել բարձր արտադրողականությանը, արտահանմանը և մրցունակության ավելացմանը, համարվում է այդ նպատակի իրագործման կարևոր բաղադրիչ⁴:

Ավելի որոշակի ասած, ՀԶՌ-ում նկարագրվում են քաղաքական բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են բիզնեսի և ներդրումային միջավայրի կատարելագործման համար, մասնավորապես. (i) պետության հետ ձեռնարկությունների և քաղաքացիների ուղղակի առնչության էական կրճատում՝ գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգերի ներդրման միջոցով. (ii) բիզնեսներին և քաղաքացիներին առնչվող պետական կանոնակարգերի միանվագ կրճատում և պարզեցում (շուրջ 50%-ով). (iii) տեսչական ստուգումների համակարգի բարեփոխում. (iv) կանոնակարգերի ազդեցության գնահատումներ. (v) բիզնես-կանոնակարգերի և ներդրումային միջավայրի լավագույն փորձի կանոնավոր ուսումնասիրություն և Հայաստանում դրանց կիրառում:

⁴ «... գործարար և ներդրումային միջավայրի անընդհատ բարելավումը կշարունակի հանդիսանալ զբաղվածության աճին ուղղված պետական շրջանակային քաղաքականության հիմնական գերակայություններից մեկը և ուղղված կլինի գործարարությունը և ներդրումների կատարումը դյուրինացնելուն և անհարկի պետական միջամտությունները էականորեն կրճատելուն: Օտարերկրյա ռազմավարական ներդրումների ներգրավման տեսանկյունից կարևոր է նաև ներդրողների շահերի պաշտպանության աստիճանի հետևողական աճը»: Հայաստանի զարգացման ռազմավարություն 2025, էջ 40.

ՀԶՌ-ով նաև արժարժվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին աջակցող քաղաքականության իրականացման հարցը, ներառյալ. (i) տեխնոպարկերի, ինկուբատորների և SS այլ ենթակառուցվածքների ստեղծման շարունակումը. (ii) աջակցությունը համալսարաններին արդիական դասընթաց իրականացնելու և անհրաժեշտ լաբորատորիաներ ձեռք բերելու գործում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցության խթանման միջոցով. (iii) SS ոլորտում արտահանման ներուժը խթանող նպաստավոր հարկային քաղաքականության իրականացումը. (iv) SS ոլորտի ՓՄՁ-ներին և նոր սկսող բիզնեսներին պետական աջակցության ծրագրերի իրականացումը. (v) ուղղակի աջակցությունը նորարարական արտադրանք կամ ծառայություններ առաջարկող SS ընկերություններին:

- *Հայաստանի Հանրապետության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն (2011թ.)*. Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության երկարաժամկետ նպատակը տնտեսական աճի նոր առաջատար ոլորտների ձևավորումն է՝ ի հաշիվ ներկայումս արտահանող, ինչպես նաև արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Այս *ռազմավարությամբ* ՀՀ կառավարությունը նախատեսում է ընդլայնել հիմնական արտահանելի հատվածները՝ արտադրական արդյունաբերություն և քլաստերներ ձևավորելու նպատակով, իսկ երկարաժամկետ նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության կառուցումն է: Առաջադրված երկարաժամկետ թիրախներն են. մինչև 2020 թվականը տնտեսության արտահանելի հատվածն ընդլայնել մինչև 19 տոկոս (Ապրանքների արտահանման և ՀՆԱ հարաբերակցությունը), դիվերսիֆիկացնել տնտեսության արտահանելի հատվածը՝ առանց մետաղական հանքահումքային արտադրանքի և ադամանդի՝ մինչև 2020 թվականը 1,300-1,500 ԱՄՆ դոլարի նշաձողով, և բարձրացնել հայկական ապրանքների մրցունակությունը՝ վերամշակող արդյունաբերության արտադրողականության (մեկ աշխատողի հաշվով ավելացված արժեքի) 4% իրական աճի նշաձողով: Այս նպատակներին նախատեսվում է հասնել օտարերկրյա ներդրումների և բիզնեսի կանոնակարգման միջավայրի բարելավումների միջոցով, ինչպես նաև, ի թիվս այլ քաղաքականությունների, ապահովելով բարենպաստ արտաքին առևտրային ռեժիմների առկայությունը և վերացնելով առևտրին խոչընդոտող հանգամանքները: ՕՈւՆ ներգրավումը դիտվում է որպես կարևոր աղբյուր՝ ֆինանսական ռեսուրսների և նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև կառավարման փորձի և շուկաների հասանելիության եղանակ:

A. Ներդրումների կենսափուլը և Ներդրումների տիպոլոգիան. ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման բարեփոխումների կազմակերպման շրջանակը

8. ՕՈւՆ-ը օժտված է տնտեսական աճի, դիվերսիֆիկացիայի, ուստին՝ կառուցվածքային վերափոխման կարևոր շարժիչը դառնալու ներուժով: Նոր աշխատատեղեր ստեղծելով, աշխատուժը ցածրարժեք աշխատանքից դեպի բարձրարժեք աշխատանքներ ուղղելու հնարավորություններ ընձեռնելով, ինչպես նաև աշխատուժին և տեղական ֆիրմաներին լրացուցիչ հմտություններ ու գիտելիքներ փոխանցելով՝ ՕՈւՆ-ը կարող է տեղական տնտեսության շարժիչը դառնալ:

9. **ՕՈՆ-ը նաև շարժիչ ուժ է տեղի տնտեսությունը միջազգային մասնավոր հատվածի հետ կապելու առումով՝ տեղական ընկերություններին տրամադրելով արտադրության համաշխարհային արժեզրթայում ինտեգրվելու լայն հնարավորություններ:** Արդի աշխարհում ապրանքների և ծառայությունների մեծամասնությունը սպառողներին հասնում է ավելի շատ օտարերկրյա մասնաճյուղերի, քան ուղղակի վաճառքի միջոցով: Ավելի քան 80,000 մասնաճյուղեր տիրապետում են ավելի քան 97 տրիլիոն ԱՄՆ դոլարի հասնող ակտիվների, վաճառելով ավելի քան 34 տրիլիոն ԱՄՆ դոլարի ապրանք ու ծառայություն և գոյացնելով 7 տրիլիոն ԱՄՆ դոլարի ավելացված արժեք⁵: Օտարերկրյա մասնաճյուղերը ողջ աշխարհում ուղղակիորեն ստեղծում են ավելի քան 71 միլիոն աշխատատեղ: ՕՈՆ-ները և առևտուրը անքակտելիորեն փոխկապակցված են՝ անդրսահմանային արժեզրթայներում ներգրավված միջազգային արտադրական ցանցերի միջոցով: Այս զարգացումը նոր հնարավորություն է բոլոր երկրների, այդ թվում Հայաստանի համար՝ ավելի լավ ինտեգրվելու գլոբալ արժեզրթայներում:


10. **Այս օգուտներն ինքնաբերաբար չեն ստացվում:** Առաջին հերթին, զարգացող երկրների միջև ՕՈՆ-ների համար գնալով ավելացող մրցակցությունը ենթադրում է, որ ընդունող երկրները պետք է իրականացնեն ՕՈՆ ներգրավելու ամենաարդյունավետ ռազմավարությունները՝ միաժամանակ ապահովելով և առավելագույնի հասցնելով դրա ներդրումը երկրի զարգացման նպատակների կենսագործման հարցում: Երկրորդ, ՕՈՆ տարբեր տեսակները իրենց բնորոշ առանձնահատկություններն ունեն, իսկ տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցություն գործելու դրանց կարողությունը տարբեր է: ՕՈՆ քաղաքական օրակարգը պետք է հաշվի առնի այս բազմազանությունը և համապարփակ և հարմարեցված մոտեցում ցուցաբերի՝ այս կամ այն համատեքստին անդրադառնալու նպատակով:

11. **ՕՈՆ-ների համար երկրի գրավչությունը, ինչպես նաև տեղական տնտեսությունների համար դրանց օգտակարությունն առավելագույնի հասցնելու համար ներդրումային քաղաքականություն մշակողները կարող են նկատի ունենալ երկու հիմնական գաղափար, որոնք կուղղորդեն քննարկումները ներդրումային քաղաքականության հետ կապված հարցերի՝ ներդրումների կենսափուլի և ներդրումների տիպոլոգիայի շուրջ:**

- *Ներդրումների կենսափուլը.* ՕՈՆ-ը ավելի շուտ բազմաթիվ շահագրգիռ կողմերի հետ շարունակական հարաբերությունների է հանգեցնում, քան պետության և ֆիրմայի միջև գործառնությունների: Ներդրումների կենսափուլը այն շրջանակն է, որն օգնում է պարզաբանել, թե ընդունող երկրում և տարբեր շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների տարբեր փուլերում ինչ խնդիրներ կարող են ծագել օտարերկրյա ֆիրմաների համար, և թե ներդրումային քաղաքականության բարեփոխումներն ինչպես կարող են օգնել այդ հարցերը լուծելու գործում: Ներդրումների կենսափուլը սկսվում է ընդունող երկրի ներդրումային տեսլականից և ՕՈՆ քաղաքական գերակայություններից և շարունակվում է ներդրման գործընթացի տարբեր փուլերում, մասնավորապես՝ ներգրավումը, մուտքը երկիր/գործարկումը, պահպանումը՝ պաշտպանության միջոցով, կապը ներպետական տնտեսության հետ և օգտակարությունը վերջինիս համար (գծապատկեր 1):

⁵ UNCTAD, Ներդրումների համաշխարհային զեկույց 2014թ. (Ժնև, UNCTAD).

Գծապատկեր 1. Ներդրումների կենսափուլը



- **Ներդրումների տիպոլոգիան.** Ներդրումների տարբեր տեսակները հանգեցնում են տարբեր օգուտների, հնարավորությունների և մարտահրավերների, և յուրաքանչյուր տեսակից օգուտ քաղելու համար անհրաժեշտ են քաղաքական տարբեր մոտեցումներ: Ներդրումների տիպոլոգիան այն շրջանակն է, որը պարզաբանում է ընդունող երկրի համար ներդրումների տարբեր տեսակների շարժառիթները, ազդեցությունը, ռիսկերն ու օգուտները և ներդրումային տարբեր քաղաքականությունների անհրաժեշտությունը: Տիպոլոգիայի շրջանակներում քննարկվում են ներդրումների գլխավոր տեսակները, տարատեսակներից յուրաքանչյուրի հիմնական շարժառիթները շարժիչ ուժերը, ինչպես նաև ազդեցությունը ներդրումային քաղաքականության վրա (տես Հավելված աղյուսակ 1. Ներդրումների տիպոլոգիայի մանրամասն նկարագրությունը):

Տիպոլոգիայում ներառված են ներդրումների հետևյալ տարատեսակները.


- **Ներդրում բնական ռեսուրսների բնագավառում.** Ներդրման այս տեսակն առկա է այն դեպքերում, երբ ֆիրման ապահովում է ընդունող երկրում տեղակայված որոշակի բնական ռեսուրսների առկայությունը: Ներդրողները փնտրում են այնպիսի բնական ռեսուրսներ, ինչպիսիք են՝ հողը, նավթը, հանքանյութերը, հումքը կամ գյուղատնտեսական արտադրանքը:
- **Շուկաների հայտնաբերմանն ուղղված ներդրում.** Ներդրման այս եղանակը պայմանավորված է ընդունող երկրում հաճախորդներին ապրանքներ և ծառայություններ մատակարարելով, և որպես այդպիսին՝ լիովին պայմանավորված է տեղական շուկայի ծավալով և բնութագրով: Այն կարող է աշխատանքի, այդ թվում՝ ծառայությունների հատվածի բարձր հմտություններ պահանջող և ավելի լավ վարձատրվող կարևոր աշխատանքների աղբյուր հանդիսանալ: Աշխարհի բազմաթիվ փոքր երկրներ հզորացրել են շուկաների հայտնաբերմանն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների իրենց ներուժը՝ երկկողմ կամ տարածաշրջանային արտոնյալ առևտրի կամ տնտեսական ինտեգրման համաձայնագրերի միջոցով տնտեսությունները կապելով/ինտեգրելով առավել խոշոր տնտեսությունների հետ:
- **Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրում.** Ներդրման այս տեսակը սովորաբար արտահանման ուղղվածություն ունի և առկա է այն դեպքերում, երբ ներդրողը ձգտում է բարելավել արտադրության ծախսային արդյունավետությունը՝ օգտվելով ձեռնարկության մրցունակությունը բարելավող գործոնների ընձեռած առավելություններից: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների բոլոր տեսակների հիմնական որոշիչ գործոնը երկրի «մրցունակությունն է»:

Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումը, օտարերկրյա ներդրումների մյուս տարատեսակների համեմատ, օժտված է առավել տրանսֆորմատիվ ներուժով, ընդ որում, ոչ միայն տեխնոլոգիաների և հմտությունների փոխանցման, այլև տնտեսությունը ապրանքների և/կամ ծառայությունների համաշխարհային արժեշտայում ներառելով տնտեսությունն արագորեն դիվերսիֆիկացնելու միջոցով:

- **Ռազմավարական ակտիվների հայտնաբերմանն ուղղված ներդրում.** Ներդրման այս տեսակն առկա է, երբ միջպետական ձեռնարկությունը մուտք է գործում շուկա՝ սովորաբար օտարերկրյա կորպորացիայի, սակայն նաև հենց տվյալ երկրի ակտիվները ձեռք բերելու նպատակով, որոնք կխթանեն ֆիրմայի երկարաժամկետ ռազմավարական նպատակների իրագործումը: Դրա միջոցով կարող են ձեռք բերել ոչ շարժական ռազմավարական ակտիվներ, ինչպիսիք են՝ բիզնես-տեղեկատվությունը, բաշխման ցանցերը, արտոնագրված տեխնոլոգիաները և բրենդները: Նման ձեռքբերումները համարվում են «ոյուրիին» եղանակ՝ հիմնելու նոր, լիարժեք գործող ընկերություն, որն ունի աղբյուրների և բաշխման սեփական ցանցը, առաջավոր տեխնոլոգիաներն ու բրենդները: Ռազմավարական ակտիվների հայտնաբերմանն ուղղված նման ներդրումները սովորաբար հանգեցնում են զարգացող երկրներում գտնվող ընկերությունների ձեռքբերման, որը տիրապետում է անհրաժեշտ ռազմավարական ակտիվների և մասնաճյուղերի/արժեշտայանների սեփական կորպորատիվ ցանցերի:

12. Ներդրումների տիպոլոգիայի շրջանակը կարևոր է ՕՈՆՆ յուրաքանչյուր տեսակի տարբեր օգուտների բերումով, և, որ կարևոր է, այն օգնում է երկրի համեմատական առավելությունները համապատասխանեցնել ներդրումների այն տարատեսակներին, որոնք կարող են օգնել երկրի նպատակներին հասնելու գործում: Օրինակ, ներդրման յուրաքանչյուր տեսակ կարող է տարբեր աշխատատեղեր գոյացնել: Թիվ 2 գծապատկերը նկարագրում է, թե համաշխարհային արտադրական ցանցերին միանալու եղանակով տնտեսական կատարելագործումն ինչպես է հանգեցնում աշխատանքների, որոնք հմտությունների և գիտելիքների առումով աստիճանաբար կարող են առավել պահանջկոտ դառնալ: Բնական ռեսուրսների, օրինակ՝ գյուղատնտեսության բնագավառում ներդրումները, առավելապես միտված են փոքրածավալ կենցաղային/ոչ ֆորմալ բնույթի կամ լուրջ հմտություններ չպահանջող աշխատանքներին, մինչդեռ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումները, ինչպիսիք են ավտոմատացված և SS սարքավորումների ոլորտում կատարվող ներդրումները, առավել հակված են ստեղծելու լուրջ հմտություններ պահանջող և տեխնոլոգիապես առավել պահանջկոտ աշխատատեղեր (գծապատկեր 2):

Եվ այսպես, Ներդրումների կենսափուլը և Ներդրումների տիպոլոգիան առաջարկում են օգտակար գաղափարներ, որոնք կարող են կիրառվել ներդրումային քաղաքականություն մշակելիս՝ ընդգծելով, որ նման քաղաքականությունը պետք է համապատասխանեցվի ներդրումների այն տարատեսակներին, որոնք երկիրը փորձում է ներգրավել ներդրումների կենսափուլի տարբեր փուլերում:



Գծապատկեր 2. Ստեղծված աշխատատեղերը՝ ըստ ոլորտների

Աշխատանքի տեսակը	Գյուղատնտեսություն	Հագուստի արտադրություն	Մեքենաշինություն	ՏՏ սարքավորում	Բիզնես-ծառայություններ
Գիտելիքի առումով պահանջկոտ					
Լուրջ հմտություններ պահանջող և տեխնոլոգիապես պահանջկոտ					
Միջին հմտություններ պահանջող, խառը արտադրական տեխնոլոգիաներ					
Լուրջ հմտություններ չպահանջող, աշխատատար					
Փոքրածավալ, կենցաղային					

Տնտեսական բարելավում

Աղբյուրը՝ Barrientos, S., G. Gereffi, & A. Rossi (2011), Տնտեսական և սոցիալական բարելավումը՝ գլոբալ արտադրական ցանցերում. փոփոխվող աշխարհի նոր կերպարը. Աշխատանքի միջազգային հետազոտություն. 'Economic and Social Upgrading in Global Production Networks: A New Paradigm for a Changing World', International Labour Review, 150(3-4): 319-40.

II. ՕՈՒՆ, արտահանումների և տնտեսական բազմազանության ամփոփ նկարագրություն

A. ՕՈՒՆ վերջին միտումները


13. ՕՈՒՆ կատարողականի առումով (որը չափվում է որպես ՕՈՒՆ/ՀՆԱ համամասնություն) Հայաստանը էապես ավելի լավ վիճակում է, քան համադրվող երկրները: Բաց տնտեսություններ ունեցող փոքր երկրները հակված են ՀՆԱ-ում ՕՈՒՆ համեմատաբար մեծ մասնաբաժին ունենալ, և Հայաստանը բացառություն չէ՝ առաջ անցնելով իրենից ավելի մեծ, ԵՄ անդամ հանդիսացող մի շարք երկրներից (օրինակ՝ Չեխիայի Հանրապետությունից, Սլովակիայից, Սլովենիայից), սակայն հետ մնալով Էստոնիայից և Վրաստանից (գծապատկեր 4բ): ՕՈՒՆ հոսքը 2010-2013թթ. ընթացքում միջինը կազմել է ՀՆԱ-ի 5.2%-ը՝ ստորին միջին եկամուտ ունեցող երկրների 2.2% ցուցանիշի համեմատ: Հայաստանի ցուցանիշները վատ չեն նաև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի զարգացող այլ երկրների համեմատ, որոնց դեպքում ՀՆԱ-ում ՕՈՒՆ հոսքի ցուցանիշը միևնույն ժամանակահատվածում կազմել է միջինը 2.8%:

14. Այդուհանդերձ, ՕՈՒՆ ավելի վաղ ժամանակների համեմատ Հայաստանի կատարողականի վատթարացումը մտահոգության տեղիք է տալիս: 2008 թվականի ֆինանսական ճգնաժամից հետո ՕՈՒՆ-ները Հայաստանում նվազում են ապրել թե՛ բացարձակ արժեքային արտահայտությամբ, և թե՛ ներպետական տնտեսության ծավալների համեմատ (գծապատկեր 3): Նախատեսվում է, որ գալիք հինգ տարիների ընթացքում (2015-2019թթ.) ՕՈՒՆ-ների հոսքը Հայաստան կկայունանա և կհաստատվի տարեկան 400-500 միլիոն ԱՄՆ դոլարի միջակայքում⁶, ինչը բավականին ցածր է 2006-2009թթ. արձանագրված շուրջ 700 միլիոն ԱՄՆ դոլարի ցուցանիշից:

Գծապատկեր 3. ՕՈՒՆ հոսքը Հայաստան

Արժեքը (մլն ԱՄՆ դոլար)

ՕՈՒՆ մասնաբաժինը ՀՆԱ-ում (%)




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ.

⁶ IMF, 2014թ., Հոդված IV, Խորհրդակցություն և առաջին վերանայում՝ ընդլայնված կարգավորման շրջանակներում, Անձնակազմի հաշվետվություն (2015թ. մարտ).


15. Հայաստանի ՕՈՆ հոսքերը տարածաշրջանում և դրանից դուրս գտնվող միանման այլ երկրների ՕՈՆ կատարողականի հետ համեմատելիս խառը պատկեր է ստացվում (գծապատկեր 4ա): Ստացված ներդրումների արժեքի առումով Հայաստանի դրությունը լավ է՝ համեմատած այլ փոքր երկրների հետ, ինչպիսիք են Մոլդովան, Բոսնիա և Հերցեգովինան, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունը, իսկ վերջերս նաև Սլովենիան (որը Եվրամիության՝ ԵՄ անդամ է), սակայն հետ է մնում ԵՄ անդամ մի շարք երկրներից (Խորվաթիա, Էստոնիա, Չեխիայի Հանրապետություն): Կատարողականի այս խառը պատկերը կարող է բացատրվել այդ տնտեսությունների մեծությամբ և ԵՄ անդամակցությամբ, քանի որ ԵՄ անդամները սովորաբար թե՛ ներքին, և թե՛ միջտարածաշրջանային ներդրումների առումով գրավիչ են ծախսային արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար վայրում արտադրություն կազմակերպելու համար, քանի որ այդտեղից կկարողանան մատակարարել ԵՄ ողջ շուկան:

Գծապատկեր 4ա. ՕՈՆ հոսքերը. համադրված երկրներ

(Մլն ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 4բ. ՕՈՆ մասնաբաժինը ՀՆԱ-ում, համադրված երկրներ (%)



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ.


B. ՕՈՒՆ տարածաշրջանային բաշխվածությունը

16. **2012թ. վերջի դրությամբ Ռուսաստանը զբաղեցնում էր Հայաստան ՕՈՒՆ ներհոսքի հանրագումարի կեսը՝ ընդգծելով Հայաստանի տնտեսական կապերն այդ երկրի հետ (գծապատկեր 5):** ԵՄ-ը զբաղեցնում է Հայաստանի ՕՈՒՆ հանրագումարի մեկ հինգերորդը: Այս պատկերն արտացոլում է պատմական միտումները և ցույց է տալիս Հայաստանի ՕՈՒՆ աշխարհագրական բաշխվածքում վերջերս տեղի ունեցած փոփոխությունը Ռուսաստանի կապակցությամբ: Համաձայն վերջին միտումների, ԵՄ-ից Հայաստան ՕՈՒՆ հոսքերի հանրագումարը 2010-2013թթ. ընթացքում էապես ավելացել է՝ երկրների այդ խումբը գետեղելով առաջին տեղում՝ Ռուսաստանից առաջ (գծապատկեր 5): Ֆրանսիան, որից հետո՝ Գերմանիան, ԵՄ անդամների շարքում ամենամեծ ներդրողներն էին Հայաստանում: Ի հակառակ նախորդ տարիների, Ռուսաստանից եկող ՕՈՒՆ հոսքերը 2012-2013թթ. էապես նվազել են: Ե՛վ 2012, և՛ 2013 թվականներին ԵՄ ներդրումները Ռուսաստանի համեմատ կրկնակի ավելի են եղել: ԵՄ-ից և Ռուսաստանից բացի, Հայաստանը ներդրումներ ստացել է աշխարհի ամենատարբեր երկրներից, որոնցից են՝ Շվեյցարիան, Արգենտինան, Լիբանանը և Միացյալ Նահանգները, երկրներ, որոնք կարող են ավելի ծավալվել՝ ՕՈՒՆ հավանական աղբյուրների ավելացմանը զուգընթաց:

17. **Հայաստանի և Ռուսաստանի միջև առավել ամուր հարաբերությունները՝ կապված Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) անդամակցության հետ, թույլ են տալիս ենթադրել, որ Ռուսաստանը կպահպանի խոշորագույն ներդրողի դիրքերը:** Ինչ վերաբերում է ԵՄ ներդրումներին, ՀԶՌ-ով ընդունվում են ՕՈՒՆ-ի հետ կապված մի շարք ռիսկեր՝ պայմանավորված ԵՄ հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագրին չմասնակցելով, ինչը, հավանաբար, կարող է բացասաբար անդրադառնալ մի շարք եվրոպական ներդրողների շահերի վրա:

Գծապատկեր 5. ՕՌՆ աղբյուր երկրները. ՕՌՆ աշխարհագրական բաշխվածությունը (2012թ. վերջի դրությամբ).

(Մլն ԱՄՆ դոլար)




- Ռուսաստանի Դաշնություն
- Ֆրանսիա
- Միացյալ Նահանգներ
- Արգենտինա
- Կիպրոս
- Շվեյցարիա
- Գերմանիա
- Լիբանան
- Միացյալ Թագավորություն
- Կանադա
- Վիրջինյան կղզիներ (Բրիտանական)
- Նիդերլանդներ
- Լյուքսեմբուրգ
- Լիխտենշտեյն
- Իրանի Իսլամական Հանրապետություն
- Իտալիա
- Սեյշելյան կղզիներ
- Ֆինլանդիա
- Իռլանդիա
- Լատվիա


Աղբյուրը՝ ԱՄՆ, Ուղղակի ներդրումների համակարգված հետազոտություն (CDIS) և Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն.

C. ՕՈՆ ոլորտային բաշխվածությունը

18. Ինչպես պատկերված է թիվ 6 գծապատկերում, ծառայությունների ոլորտին 2009-2013թթ. ժամանակահատվածում մշտապես հատկացվել է ՕՈՆ հոսքերի առյուծի բաժինը, թեև այդ ոլորտում ներդրումների ընդհանուր գումարը 2013 թվականին կտրուկ նվազել է: Այդ անկումը՝ 2012թ. 408 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 199 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2013 թվականին (գծապատկեր 6), բացատրվում է հեռահաղորդակցության ոլորտում ներդրումների կիսով չափ կրճատմամբ և անշարժ գույքի շուկայի անկմամբ: Առաջինի դեպքում անկումը պայմանավորված էր օտարերկրյա ներդրումային ծրագրերի ավարտով, մինչդեռ երկրորդ ոլորտի պարագայում անկումը պայմանավորված էր շինարարության դանդաղեցմամբ: Արտադրության և առաջնային ոլորտների մասնաբաժնում հստակ միտումներ չեն նկատվել. որոշ տարիների ընթացքում տեղի է ունեցել կապիտալի մեկանգամյա ներհոսք՝ կապված առանձին խոշոր ծրագրերի հետ: Դա 2011 թվականին տեղի ունեցավ հիմնային մետաղների արտադրության, իսկ 2012 թվականին՝ հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում: Արդյունաբերության ճյուղերի բաշխվածությանն առանձին անդրադառնալու դեպքում պետք է նշել, որ հեռահաղորդակցությունը 2010-2013թթ. ընթացքում ՕՈՆ ծանրակշիռ ներհոսք է արձանագրել, իսկ էլեկտրականության և գազի ոլորտը ՕՈՆ հոսք ունեցել է 2010-2011 թվականներին:

Գծապատկեր 6. ՕՈՆ ներհոսքն ըստ ոլորտի և արդյունաբերության ճյուղի (Հազար ԱՄՆ դոլար)






Աղբյուրը՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն

19. Ներդրումների տիպոլոգիայի շրջանակը Հայաստանի ՕՈՆ հոսքերի նկատմամբ կիրառելով կարելի է նկատել շուկաների հայտնաբերմանն ուղղված ներդրումների գերակայությունը: Հաշվարկվել է, որ 2009-2013թթ. ընթացքում ներդրումների հոսքերի հանրագումարի 78 տոկոսն ուղղված է եղել շուկաների հայտնաբերմանը (գծապատկեր 7), որը մեծ մասամբ բաղկացած է ոչ առևտրային ծառայություններից, որոնց համար շուկայի առկայությունն այդ ծառայությունները մատուցելու միակ եղանակն է (օրինակ՝ պահեստավորումը, պրոֆեսիոնալ ծառայությունները, փոխադրումները): Բնական ռեսուրսների բնագավառում ներդրումը փոքր է եղել՝ կենտրոնացված հանքարդյունաբերության վրա, ինչն արտացոլում է երկրի տնտեսությունում այս ոլորտի փոքր ազդեցությունը: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների (օրինակ՝ էլեկտրոնիկայի, ռեսիսե և պլաստիկե ապրանքների արտադրության) փոքր մասնաբաժինը վկայում է, որ երկրին չի հաջողվել լիարժեք օգտվել տարածաշրջանային/համաշխարհային արժեշրթաններից, իսկ միջազգային շուկաներ մուտք գործելու արտոնությունները մրցունակության հետ կապված հարցեր են առաջացնում նման ներդրումների համար երկրի գրավչության առումով (տես հետագա բաժինները): Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների փոքր մասնաբաժինը չի համապատասխանում նաև Հայաստանի զարգացման տեսլականին, որը հակված է ավելացնելու հմտություններ պահանջող աշխատատեղերը, արտահանումները, տեխնոլոգիաների փոխանակումը, ինչպես նաև ձևավորելու գիտելիքահեն տնտեսություն:

Գծապատկեր 7. Հայաստանի ՕՈՆ-ի նկատմամբ կիրառված ներդրումային տիպոլոգիան⁷ (Ըստ հոսքերի հանրագումարի, 2009-2013թթ.)



<p>ՕՈՆ ավելի քան երեք քառորդը ուղղված է նոր շուկաների հայտնաբերմանը.</p> <p>➤ <i>Հիմնականում ոչ առևտրային ծառայությունների պարագայում՝ հաղորդակցություն, էլեկտրամատակարարում և գազամատակարարում, անշարժ գույք, հյուրանոցներ, շինարարություն՝ արտահանման վրա նվազագույն ազդեցությամբ.</i></p>
<p>Արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՆ-ը ցածր է և ներգրավված է միայն մի քանի ոլորտներում.</p> <p>➤ <i>Ինչպիսիք են սնունդը, խմիչքը և տեղեկատվական տեխնոլոգիաները.</i></p>
<p>Ներդրում բնական ռեսուրսների (հիմնականում՝ հանքարդյունաբերության) բնագավառում.</p> <p>➤ <i>Ուղղակիորեն առնչվում է արտահանումներին, սակայն երկիրը խոցելի է մնում հումքի գների տատանումների առումով.</i></p>

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկի հաշվարկները՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա

D. Արտահանումների տնտեսական բազմազանությունը

20. Տնտեսական բազմազանության տեսանկյունից⁸ Հայաստանի ընդհանուր վարկանիշը 44 է (144 երկրների շարքում)՝ 2012թ. տնտեսական բազմազանության 0.54

⁷ Չուշում. Շուկաների հայտնաբերմանն ուղղված ներդրումը առնչվում է բոլոր ծառայություններին, բացառությամբ համակարգչային ծրագրավորման, խորհրդատվության և հարակից գործունեության: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումը վերաբերում է արտադրության բոլոր ձևերին, համակարգչային ծրագրավորմանը, խորհրդատվությանը և հարակից գործունեությանը: Բնական ռեսուրսների բնագավառում ներդրումն առնչվում է բուսաբուծությանն ու անասնաբուծությանը, որսորդությանն ու հարակից ծառայություններին (վերջինները առանձին չեն կարող վերցվել), մետաղի հանքաքարի արդյունահանմանը և հանքարդյունաբերության այլ ձևերին: Քանի որ արտադրության յուրաքանչյուր ճյուղում օտարերկրյա մասնաձյուղերի կողմից արտահանման ծավալները գնահատելու հստակ եղանակ գոյություն չունի, ենթադրվում է, որ օտարերկրյա մասնաձյուղը արտահանում է այդ ճյուղերից յուրաքանչյուրում իրենց թողարկած արտադրանքի առնվազն կեսը, ուստի դրանք համարվում են արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ:


⁸ Վերլուծության հիմքում ընկած շրջանակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես Ռիկարդո Հաուսման, Սեզար Ա. Հիդալգո և այլք, Տնտեսական բազմազանության ատլաս. Դեպի բարգավաճում տանող ուղիների քարտեզագրում, MIT Press, Cambridge, Mass.

ցուցիչով (ՏԲՑ): Տնտեսական բազմազանությունն արտացոլում է գիտելիքի պաշարը, որը ներդրվել է տնտեսության արտադրական կառուցվածքում: Եվ վերջապես, երկրի արտահանման զամբյուղի ՏԲՑ-ը սերտորեն կապված է ՀՆԱ-ի մասով համաշխարհային վարկանիշում վերջինիս զբաղեցրած տեղով: Բնական ռեսուրսների արդյունահանումից ստացված եկամուտների հաշվին մեկ շնչի հաշվարկով բարձր եկամուտ ունեցող երկրներից բացի, եկամտի բարձր մակարդակի հասնելու հավանականություն ունեն նաև ՏԲՑ բարձր ցուցանիշներ ունեցող երկրները: Հայաստանի վարկանիշը երկիրը տեղավորել է Ռուսաստանի Դաշնության և Բոսնիա և Հերցեգովինայի հարևանությամբ և առաջ անցել Ֆիլիպիններից և Հունաստանից (տես Գծապատկեր 8, գույնով ընդգծված շրջանը): Այս դիրքը յոթ կետով ավելի ցածր է նախորդ տարվա ցուցանիշից, երբ առաջին անգամ գնահատվեց Հայաստանի ՏԲՑ-ը:

Տնտեսական բազմազանության բարձր աստիճան ունեցող ապրանքներ արտահանելու՝ երկրի կարողությունը խոսում է մրցունակության նշույլների առկայության մասին: Ինչպես պատկերված է թիվ 8 գծապատկերում, սերտ առնչություն կա ՏԲՑ-ի և մեկ շնչի հաշվարկով եկամուտների միջև, ընդ որում, վերին աջ քառորդում թվարկված երկրները, որոնք արձանագրել են բարձր ՀՆԱ և ՏԲՑ, առավել արդյունաբերական տնտեսություններն են: ՏԲՑ բարձր ցուցանիշ ունեցող արտադրանքի արտահանումները կարող են հետագա ուսումնասիրման կարիք ունենալ՝ պատկերացնելու համար հնարավոր խոչընդոտները, ինչը հիմք կձառայի արտահանման նպատակ հետապնդող, արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման շուրջ ծավալվող քննարկումների համար:

21. **Իր ցուցանիշը բարելավելու համար Հայաստանին անհրաժեշտ կլինի ավելացնել արտահանվող ապրանքների թիվն ու բազմազանությունը** (ելնելով արտադրանքի բազմազանության ցուցիչից կամ ԱԲՑ-ից): Այդ հարցում հաջողություն արձանագրած երկրները կենտրոնանում են արտադրական այն կարողությունների վրա, որոնք բարդության բարձր ցուցիչ ունեցող ապրանքներ արտահանելու հնարավորություն են ընձեռում: Այս առումով դերակատարություն կարող է ունենալ արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ ճիշտ տարատեսակի ընտրությունը, ինչը կարող է օգնել բարդության առավել բարձր ցուցիչ ունեցող ապրանքների արտահանումը խթանելու և դիվերսիֆիկացնելու գործում: Մակայն, ինչպես քննարկվել է ավելի վաղ, նման ներդրումն անկայուն է, ինչպես նաև զգայուն է գնային գործոնների և քաղաքական նկատառումների նկատմամբ: Նման ներդրում ստանալու հնարավորությունն առավելագույնի հասցնելու համար Հայաստանին անհրաժեշտ կլինի ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ ներգրավված ներդրումները կարող են արդյունավետ կիրառվել ամենատարբեր արտադրական գործունեության համար:

Գծապատկեր 8. Տնտեսական բազմազանության ցուցիչի առումով Հայաստանի զբաղեցրած դիրքն աշխարհում



Armenia's ranking in terms of economic complexity index (ECI) was 44 (out of 144 countries) with a value of 0.54 in 2012

This places Armenia in the neighborhood of Russia and Bosnia and Herzegovina and ahead of the Philippines and Greece

Տնտեսական բազմազանության ցուցիչի (ՏԲՑ) գծով Հայաստանը զբաղեցնում էր 44-րդ հորիզոնականը (144 երկրներից) 0.54 ցուցանիշով: Դրա արդյունքում երկիրը տեղավորվել է Ռուսաստանի Դաշնության և Բոսնիա և Հերցեգովինայի հարևանությամբ և առաջ անցել Ֆիլիպիններից և Հունաստանից (տես Գծապատկեր 8, գույնով ընդգծված շրջանակը):

Աղբյուրը՝ MIT, Տնտեսական բազմազանության ատլաս, Հայաստանի զբաղեցրած դիրքը նշված է ընդգծված շրջանով.

22. **Հայաստանի ապրանքային արտահանման պատկերը դիվերսիֆիկացվել է, սակայն անցյալ տասնամյակում շոշափելի չի փոխվել:** Բացառությամբ ադամանդի արտահանման մասնաբաժնի նվազման (գծապատկեր 9), Հայաստանը շարունակում է կախված մնալ պղնձի արտահանումներից, ուստի՝ հիմնային մետաղների գներից, որոնք միջնաժամկետ հեռանկարում թերևս շարունակեն անկում ապրել⁹: Չնայած արտահանման զամբյուղի որոշակի ստատիկ վիճակին, որոշակի ոլորտներում ի հայտ են եկել նշույներ, ինչպիսիք են ավիացիոն ապրանքները, որոնք օժտված են արտադրանքի բազմազանության բարձր մակարդակով: Փաստը, որ Հայաստանն արդեն իսկ արտահանում է այդ արտադրատեսակները, խոսում է այն մասին, որ երկրի արտահանման կառուցվածքը նախանշաններ է ցույց տալիս, թեև դեպքերի մեծամասնությունում այդ արտահանումները կազմում են երկրի արտահանումների ընդհանուր ծավալի շատ փոքր մասը: Բարձր բազմազանություն ունեցող արտադրատեսակները (ինչպես բարձր ցուցանիշով նշագրված է թիվ 1 աղյուսակում ներկայացված ԱԲՑ-ում) բարդ ապրանքներ են, որոնք պետք է արտադրվեն բարձր որակավորում պահանջող աշխատանքի արդյունքում: Սակայն հանքանյութերը (օրինակ՝ չմշակված պղինձը կամ ոսկին) կամ պարզունակ գյուղատնտեսական արտադրանքը նշագրվում են ցածր ԱԲՑ-ով և դրանց արտադրությունը սովորաբար պահանջում է ոչ այնքան բարձր որակավորում:

Գծապատկեր 9. Արտահանումն ըստ ոլորտների, 2003թ. և 2012թ.

⁹ Երկրի ծրագրային ամփոփաթեթը. Համաշխարհային բանկ – Հայաստան գործընկերություն. Ապրիլ 2015թ.

2003թ.

2012թ.




Երկրի ընդհանուր առևտուրը. 737մլն ԱՄՆ դոլար
1.59մլրդ ԱՄՆ դոլար
Ադամանդ 31.94%

Երկրի ընդհանուր առևտուրը.
Երկաթի համաձուլվածք 7.56%

- Պլատին 14.18%
- Ոսկի 4.82%
- Ոսկերչական արտադրանք 3.54%
- Այլումինի նրբաթիթեղ 3.74%
- Այլումինի հանքանյութ 3.38%
- Երկաթի համաձուլվածք 1.95%
- Չմշակված պղինձ 1.59%
- Մոլիբդենի հանքաքար 2.94%
- Պղնձի հանքաքար 2.63%
- Թունդ լիկյոր 7.82%
- Ժամացույցի պատյաններ և մասեր 2.71%

- Այլումինի նրբաթիթեղ 5.14%
- Չմշակված պղինձ 6.55%
- Պղնձի հանքաքար 12.63%
- Երկաթի ջարդոն 0.8%
- Թանկարժեք մետաղների հանքաքար 1.57%
- Ցինկի հանքաքար 1.27%
- Թունդ լիկյոր 10.35%
- Գլանված ծխախոտ 2.63%
- Ոսկի 9.11%
- Ադամանդ 4.51%
- Օդանավեր, ուղղաթիռներ և/կամ սիեզերանավեր 4.31%
- Ջեռուցման այլ սարքավորում 2.12%



Երկրի ընդհանուր առևտուրը. 10.9մլրդ ԱՄՆ դոլար

Արտահանման արժեքը
 Մեքենաներ
 Մետաղներ
 Թանկարժեք մետաղներ
 Հանքային արտադրանք
 Սնունդ

Աղբյուրը՝ MIT, Տնտեսական բազմազանության ատլաս

23. Կան Հայաստանից ներկայումս արտահանվող որոշակի արտադրատեսակներ՝ թե՛ ԱԲՑ, և թե՛ Հայտնաբերված համեմատական առավելության (ՀՀԱ) բարձր ցուցանիշներով: Վերջին ցուցանիշը վկայում է, որ Հայաստանը նման արտադրատեսակների առումով ներկայումս համեմատական առավելություն ունի (ՀՀԱ>1-ը ցույց է տալիս, որ տվյալ ապրանքատեսակի ծավալը երկրի արտահանումների ընդհանուր ծավալում ավելի մեծ կշիռ է կազմում, քան այլ երկրների համախառն արտահանումներում): Արդյունաբերության հենց նման ճյուղերն են, որ հետաքրքրություն են ներկայացնում արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար, քանի որ դրանց փորձը, հատկապես՝ արտահանման առնչությամբ, կարող է կարևոր դասեր տալ, որոնք հիմք կհանդիսանան հետագա ուսումնասիրման համար:

Աղյուսակ 1. Հայաստանի արտահանումների տեսականի. Հայտնաբերված համեմատական առավելությունը (ՀՀԱ). Արտադրանքի բարդության ցուցիչը և արտահանման մասնաբաժինը

Արտադրատեսակը	ՀՀԱ	ԱԲՑ	Արտահանման մասնաբաժինը (2012թ.)	%
Երկաթի համաձուլվածք	40	0.92	7.56	
Ալյումինի նրբաթիթեղ	73	2.54	5.14	
Օդանավեր, ուղղաթիռներ և տիեզերանավեր	5.22	1.78	4.31	
Ջեռուցման այլ սարքավորում	9.31	3.49	2.12	
Ներքին այրման շարժիչներ	1.31	3.26	0.34	
Ոչ մեխանիկական ամբարձիչ մեքենաներ	5.07	3.73	0.30	
Էլեկտրական գոդման սարքավորում	2.73	2.97	0.18	
Թանկարժեք մետաղներից ժամացույցներ	1.53	1.98	0.12	
Այլ ժամացույցներ	4.38	2.53	0.06	

Աղբյուրը՝ MIT, Տնտեսական բազմազանության ատլաս

E. Միջազգային շուկաներից օգտվելու հնարավորությունը

24. Արտահանման ուղղվածության բերումով արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար հատկապես կարևոր է միջազգային շուկաներից օգտվելու հնարավորությունը: Որպես ցամաքով շրջափակված տնտեսությամբ երկիր, Հայաստանը պետք է ուղիներ որոնի, որպեսզի կարողանա արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ կատարողներին ցույց տալ, որ կարող է ծառայել որպես մոտակա կամ հեռավոր շուկաներ ապրանքներ արտահանելու սկզբնակետ: Լեռնային Ղարաբաղի շարունակվող հակամարտության հետևանքով իր չորս սահմաններից երկուսի (Թուրքիայի և Ադրբեջանի հետ) փակումը այս առումով լավ բան չի խոստանում: Նման սահմանափակումները օտարերկրյա շուկայի ծավալի 3.2/7 ցուցանիշով երկիրը 144-րդ երկրների շարքում ինքնըստինքյան զետեղում են Սրբունակության համաշխարհային 2014-2015 ցուցիչի 126-րդ տեղում և հանգեցնում են բարձր տրանսպորտային ծախսերի, ինչը կարող է ճնշել արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների մասով Հայաստանի ակնկալիքները:

25. Քանի որ հարևան շուկաները մատակարարելու նպատակով արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների հնարավորությունները կարող են սահմանափակ լինել, ներդրողները պետք է Հայաստանը դիտարկեն որպես սկզբնակետ, որտեղից կարող են ապրանքներ և ծառայություններ արտահանել տվյալ տարածաշրջանի սահմաններից դուրս գտնվող շուկաներ: Դա, անշուշտ, հնարավոր է. Հայաստանի վաճառքների գերակայող ուղղություններն ավանդաբար Ռուսաստանն ու Եվրամիությունն են (տես թիվ 10 գծապատկերը): Հայաստանը նաև Մերձավոր Արևելքի (օրինակ՝ Իրանի, հատկապես պատժամիջոցները հանելու ֆոնին) նոր գործընկերների հետ առևտրային խողովակ դառնալու ներուժ ունի՝ արտահանումներն ուղղելով աշխարհի այլ ծագեր, ներառյալ՝ Ասիա և Եվրոպա:


26. Հայաստանի ներդրումային և արտահանման ռազմավարության կարևոր նկատառումներից մեկը բարձր հավելյալ արժեք ապահովող սեզմնետում և առևտրային ծառայություններում արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներին հատկացվող դերն է: Ծրագրերի մշակումն ու պատվիրակումը, օրինակ, արտադրական արժեչողթայի կարևոր բաղադրիչ են, որ կարող են տեղ գտնել միջազգային մակարդակում, և որոնց վրա առևտրին խանգարող ֆիզիկական խոչընդոտներն այնքան էլ չեն ազդում, որքան ապրանքների դեպքում: Առկա է նաև SS ծառայությունների արժեչողության պատվիրակումից մինչև բարձր հավելյալ արժեք ապահովող ծառայությունների վերածելու ներուժ: Հայաստանի SS ոլորտն արդեն իսկ կապիտալիզացնում է նման հնարավորությունները, և տեղեկություններ կան, որ Հայաստանի SS արտադրանքի երկու երրորդն արտահանվել է ավելի քան 20 երկիր¹⁰:

Գծապատկեր 10. Հայաստանի հիմնական արտահանման շուկաները, 2000թ. և 2012թ.

¹⁰ Հայաստանը հարմար է SS ոլորտում ներդրումներ կատարելու համար՝ ունենալով լավ կրթություն ստացած, SS հմտությունների տիրապետող աշխատուժ՝ անգլերենի իմացությամբ, SS և հարակից գիտությունների ոլորտում մասնագիտացված համալսարանական ծրագրեր, SS ոլորտի աշխատանքի մրցունակ վարձատրություն և պետական աջակցություն SS ոլորտին, գումարած կապերը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում ապրող խոշոր և հաջողակ սփյուռքի հետ: Այս համատեղ նախաձեռնություններին աջակցելով՝ Հայաստանի կառավարությունն ապահովել է SS ոլորտի աճը և ամրապնդել է կապերը տեղական և համաշխարհային SS ֆիրմաների հետ:

2012թ.

1995-2012թթ.



- Ռուսաստան – 18.84%
- Գերմանիա – 10.04%
- Բելգիա-Լյուքսեմբուրգ – 8.1%
- Բուլղարիա – 6.42%
- Եմեն – 9.53%
- Վրաստան – 4.52%
- Շվեյցարիա – 4.96%
- Իսպանիա – 1.99%
- Նիդերլանդներ – 4.94%
- Չինաստան – 2.28%
- Կանադա – 9.58%
- Միացյալ Նահանգներ – 5.66%

Աղբյուրը՝ MIT, Տնտեսական բազմազանության ատլաս

III. Արցունակության և ներդրումային միջավայրի հետ կապված նկատառումներ


27. **Ներդրումային միջավայրի առջև կանգնած մի շարք առերևույթ խոչընդոտները (և դրանց հետ կապված ծախսերը) կարող են ֆիրմաներին հետ պահել Հայաստանում ներդրումներ կատարելուց կամ դրանք երկրում պահելուց:** Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների փոփոխական բնույթը պահանջում է պատշաճ ուշադրություն դարձնել ներդրումային միջավայրին սպառնացող խոչընդոտներին և մրցունակության հետ կապված գործոններին (ասենք՝ հմտություններին, ենթակառուցվածքներին, աշխատաշուկայի ճկունությանը և այլն), ինչպես նաև նման ներդրումներ ներգրավելու և դրանք պահպանելու ներդրումային քաղաքականությանը:

28. **Նախքան քաղաքականության շրջանակին անդրադառնալը կարելի է մի քանի ցուցիչներով գնահատել Հայաստանի մրցունակությունը՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներ ներգրավելու առումով:** Դրանցից են հանքանյութերի, ցածրարժեք, հմտություններ չպահանջող և պահանջող աշխատանքների

(որի պարագայում ծախսերը հարմարեցված են արտադրողականությանը), ֆիզիկական ենթակառուցվածքների (օրինակ՝ ճանապարհների, էլեկտրականության, հեռահաղորդակցության միջոցների) հասանելիությունը և դրանց հետ կապված ծախսերը, միջանկյալ ապրանքատեսակները (հուսալի տեղական արտադրողները կամ ներմուծումները) կամ միջազգային շուկաներից օգտվելու հնարավորությունը: Թեև այս գործոններից մի քանիսն առավել բնորոշ են արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՆ-ների որոշակի տեսակներին, և ոչ այնքան՝ մի շարք այլ տեսակներին (օրինակ՝ SS ոլորտում), դրանց ուսումնասիրությունը ներկայացնում է Հայաստանի համակարգային մրցունակության աստիճանի պատկերը՝ հնարավոր այլ ընդունող երկրների համեմատ:

29. Համաձայն Մրցունակության 2014-2015թթ. համաշխարհային զեկույցի, Հայաստանը 4.00 միավորով (բարձրագույն ցուցանիշը Շվեյցարիայի 5.70 ցուցանիշն է) 144 երկրների շարքում զբաղեցրել է 85-րդ հորիզոնականը: Համադրված այլ երկրների համեմատ Հայաստանը վերջին տեղն է զբաղեցնում թե՛ հարաբերական տեղակայման, և թե՛ փաստացի ցուցանիշի արդյունքում (տես թիվ 11 գծապատկերը): Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման առումով, հատկապես՝ բարձր հավելյալ արժեք ապահովող գործողությունների պարագայում, կարևոր է տաղանդավոր մարդկանց գրավելու և նրանց երկրում պահելու՝ երկրի կարողությունը: Այս երկու ոլորտներում էլ Հայաստանը հատկապես ցածր ցուցանիշներ ունի (թիվ 2 աղյուսակը): Տեղացի մատակարարների առկայությունը ևս կարևոր է. տեղացի մատակարարների որակի և քանակի առումով Հայաստանը զբաղեցնում է համապատասխանաբար 86-րդ և 79-րդ տեղերը, չնայած, որ գիտնականների և ինժեներների առկայության հարցում 75-րդ տեղում է: Բարձր հավելյալ արժեք ապահովող գործունեությանն առնչվող այլ ցուցիչները լավ բան չեն վկայում: Նորարարության ոլորտի մի շարք ցուցիչներով, օրինակ՝ գիտահետազոտական հաստատությունների որակը և գիտահետազոտական ասպարեզում համալսարան-արդյունաբերություն համագործակցությունը, Հայաստանը համեմատաբար ցածր տեղեր է զբաղեցնում, թեև բարձրագույն կրթությունում ներգրավվածության ցուցիչով զբաղեցնում է 59-րդ տեղը: Կապի ապահովվածության վարկանիշները տարբեր են. միջազգային ինտերնետային թողունակության ցուցիչով 48-րդ տեղում է, սակայն ինտերնետից օգտվող անհատների թվով՝ 71-րդը, իսկ անլար շարժական կապի բաժանորդագրության ցուցիչով՝ 67-րդը:

Գծապատկեր 11. Վարկանիշներն ըստ մրցունակության համաշխարհային ցուցիչի



Էստոնիա**
Ռումինիա
Մակեդոնիայի ՆՀՀ
Վրաստան
Խորվաթիա*
Մոլդովա
Հայաստան

Էստոնիա**
Ռումինիա
Մակեդոնիայի ՆՀՀ
Վրաստան
Խորվաթիա*
Մոլդովա
Հայաստան

Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, Մրցունակության համաշխարհային ցուցիչ 2014-15. *ԵՄ անդամ են 2013 թվականից. ** ԵՄ անդամ են 2004 թվականից.

Աղյուսակ 2. Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների ցուցիչները

Ցուցիչը	Գնահատականը	Վարկանիշը	Աղբյուրը	Կայքէջը
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ				
Ենթակառուցվածքը – ընդհանուր առմամբ	3.8	78/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Օտարերկրյա ֆիրմաները, որոնք փոխադրումները համարում են զգալի խոչընդոտ (% , 2013)	8.2	Առկա չէ	Բիզնես-միջավայրի համաշխարհային հետազոտություն (WBES)	
Օտարերկրյա ֆիրմաները, որոնք էլեկտրականությունը համարում են զգալի խոչընդոտ (% , 2013)	7.9	Առկա չէ	ԲՄՀՀ	http://www.enterprisesurveys.org/data/exploreeconomies/2013/armenia#infrastructure
Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը	3.1/7	64 /144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Ցանցային ապահովվածության ցուցիչը 2014	4.03	65/144	ՀՏՖ	http://www.weforum.org/global-information-technology-report-2014-data-platform
ԱՇԽԱՏԱՆՔ				
Գործազրկության ցուցանիշը (ընդհանուր աշխատուժի %-ը, 2014թ.)*	18	Առկա չէ	ԱՄՀ	https://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/02/weodata/weoselgr.aspx
Աշխատաշուկայի ճկունությունը	4.8	33/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/

Հնուտ աշխատուժի առկայությունը**	Առկա չէ	Առկա չէ	Առկա չէ	
Օտարերկրյա ֆիրմաները, որոնք պատշաճ կրթություն չունեցող աշխատուժը համարում են զգալի խոչընդոտ (% , 2010)	6.4	Առկա չէ	ԲՄՀՀ	http://www.enterprisesurveys.org/data/exploreeconomies/2013/armenia#workforce
Գիտնականների և ինժեներների առկայությունը	4	75/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
ՏԵՂԱՑԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ				
Տեղացի մատակարարների թիվը	4.5	79/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Տեղացի մատակարարների որակը	4.1	86/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Արժեշոթայի ընդգրկունություն***	3.6	94/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԼՈՂԻՍՏԻԿԱ				
Մաքանքային առևտուր (ՀՆԱ %-ը, 2013)****	57.1	Առկա չէ	ՀԲ	http://data.worldbank.org/indicator/TG.VAL.TOTL.GD.ZS
Արտահանումները (ՀՆԱ %-ը, 2013)	21.9	127/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Ծառայությունների առևտուր (ՀՆԱ %-ը, 2013)****	22.1	Առկա չէ	ՀԲ	http://data.worldbank.org/indicator/BG.GSR.NFSV.GD.ZS
Առևտրի ազատությունը	85.4	Առկա չէ	Heritage հիմնադրամ	http://www.heritage.org/index/explore
Առևտրին խոչընդոտող գործոնների տարածվածությունը	4.3	80/144	ՀՏՖ	http://reports.weforum.org/global-competitiveness-report-2014-2015/rankings/
Օտարերկրյա ֆիրմաները, որոնք մաքսային և առևտրային կանոնակարգերը համարում են զգալի խոչընդոտ (% , 2013)	19.8	Առկա չէ	ԲՄՀՀ	http://www.enterprisesurveys.org/data/exploreeconomies/2013/armenia#trade
Օտարերկրյա ֆիրմաները, որոնք աշխատանքային	1.8	Առկա չէ	ԲՄՀՀ	http://www.enterprisesurveys.org/data/exploreeconomies/2013/

կանոնակարգերը համարում են զգալի խոչընդոտ (% , 2013)				armenia#workforce
Լոգիստիկ կատարողականի ցուցիչը (2014)	2.67	92/150	ՀԲ	http://lpi.worldbank.org/international/scorecard/radar/128/C/ARM/2014#chartarea

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ (ՀԲ), Համաշխարհային տնտեսական ֆորում (ՀՏՖ), Մրցունակության համաշխարհային ցուցիչներ, 2014-15թթ., Heritage հիմնադրամ, Տնտեսական ազատության ցուցիչ, Հայաստանի ձեռնարկությունների հետազոտություն 2013 (ԲՄՀՀ). 2012թ. նոյեմբերից մինչև 2013թ. հուլիս հարցազրույցներ են վարվել 360 ֆիրմաների սեփականատերերի և բարձրագույն ղեկավարության հետ.

*Համաձայն ԱՄՆ տեղեկությունների, 2014թ. հոկտեմբեր.


**Բարձրագույն կրթություն ունեցող աշխատուժի տոկոսային արտահայտությունն ընդհանուր աշխատուժի թվում.

***Արժեշտայում նեղ կամ լայն ներկայացվածությունը, ընդ որում, 1 = նեղ, երբ ի սկզբանե ներգրավված է արժեշտայի անհատական քայլերում, իսկ 7 = լայն, երբ ներգրավված է ողջ արժեշտայում (ներառյալ՝ արտադրությունն ու մարքեթինգը, բաշխումը, դիզայնը և այլն՝ պայմանագրերը կատարելու նպատակով.

**** Ըստ Համաշխարհային բանկի տեղեկությունների.

30. Ինչ վերաբերում է ներդրումային միջավայրի ավելի լայն նկատառումներին, հարկ է նշել, որ բիզնես սկսելու, գործարկելու և այն ծավալելու հիմնական պայմանները հավասարապես կարևոր են օտարերկրյա և տեղացի ներդրողների համար և ազդում են երկուսի վրա էլ: Մրցունակության 2014-2015թթ. համաշխարհային զեկույցը և Հայաստանի ձեռնարկությունների 2013թ. հետազոտությունը համակարծիք են այն հարցում, որ հարկային խնդիրները առանձնակի մարտահրավեր են բիզնեսների համար (տես թիվ 12 և թիվ 13 գծապատկերները): Հարկային կանոնակարգերը, հարկային դրույքաչափերը և հարկային վարչարարությունը բարձր տեղ են զբաղեցնում այն գործոնների ցանկում, որոնք ֆիրմաների կողմից մատնանշվել են որպես խոչընդոտներ: Մեկ այլ էական խոչընդոտ է կոռուպցիան: Հարկային խնդիրները և կոռուպցիան կարևոր են ոչ միայն արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման, այլ նաև ՕՈՆ բոլոր տարատեսակների համար:


Գծապատկեր 12. Հայաստանում բիզնեսի իրականացման հիմնական խոչընդոտները



Այն ֆիրմաների տոկոսը, որոնք խնդիրը համարում են իրենց հիմնական խոչընդոտը

Հարկային դրույքաչափեր
Հարկային վարչարարություն
Քաղաքական անկայունություն
Մաքսային և առևտրային կանոնակարգեր
Կոռուպցիա
Ֆինանսավորման մատչելիություն
Ոչ ֆորմալ հատվածի առկայություն
Հողատարածքների հասանելիություն
Պատշաճ կրթություն չունեցող աշխատուժ
Աշխատանքային կանոնակարգեր

The most problematic factors for doing business



Note: From the list of factors above, respondents were asked to select the five most problematic for doing business in their country and to rank them between 1 (most problematic) and 5. The bars in the figure show the responses weighted according to their rankings.

Բիզնեսի համար առավել խնդրահարույց գործոնները
Կոռուպցիան
Ֆինանսավորման մատչելիության աստիճանը
Հարկային կանոնակարգերը


Հարկային դրույքաչափերը
 Կառավարության ոչ արդյունավետ վարչարարությունը
 Պատշաճ կրթություն չունեցող աշխատուժը
 Արտարժույթի հետ կապված կարգավորումները
 Ենթակառուցվածքների ոչ պատշաճ ապահովումը
 Ինֆլյացիան
 Աշխատանքային խիստ կանոնակարգերը
 Քաղաքականության անկայունությունը
 Նորարարություններ կատարելու անբավարար կարողությունը
 Կառավարության անկայունությունը/հեղաշրջումը
 Տեղի աշխատուժի մոտ նվազ աշխատանքային էթիկան
 Հանցավորությունը և հափշտակությունները
 Առողջապահության անմխիթար վիճակը

Տրված պատասխանների տոկոսը

Հուշում. Հարցվածներին խնդրվել է վերը թվարկված գործոններից ընտրել իրենց երկրում բիզնես իրականացնելուն խանգարող հինգ առավել խնդրահարույց գործոնները և գնահատել 1-ից (առավել խնդրահարույց) մինչև 5 (նվազ խնդրահարույց): Գծապատկերում բերված հորիզոնական գծերը ցույց են տալիս տրված գնահատականները՝ ըստ վարկանիշների:

Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, Մրցունակության համաշխարհային ցուցիչներ, 2014-15թթ., Համաշխարհային բանկ, Հայաստանի ձեռնարկությունների հետազոտություն 2013.

Գծապատկեր 13. Օտարերկրյա ֆիրմաների տոկոսը, որոնք գործոնը մատնանշել են որպես զգալի խոչընդոտ



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, Հայաստանի ձեռնարկությունների հետազոտություն 2013. Նշում. 10% կամ ավելի օտարերկրյա սեփականություն հանդիսացող ֆիրմաները.


31. **Բիզնեսի իրականացմանը խանգարող այս խոչընդոտները հակադրվում են *Doing Business 2015* հաշվետվությունում նշված եզրակացություններին:** Հայաստանը համեմատաբար լավ արդյունք է արձանագրել 2015թ. Doing business հաշվետվությունում՝ 189 երկրների շարքում զբաղեցնելով 45-րդ տեղը՝ նախորդ տարվա 49-րդի փոխարեն: Բիզնեսի իրականացման դյուրինության տեսակետից Հայաստանը տարածաշրջանային միջին ցուցանիշի համեմատ նպաստավոր դիրքերում է, սակայն տարածաշրջանի այլ

երկրներից հետ է մնում (գծապատկեր 14): Այն հատկապես լավ ցուցանիշ է արձանագրել քիզնես սկսելու հարցում՝ համաշխարհային վարկանիշում զբաղեցնելով տպավորիչ 4-րդ տեղը: 2010-ից 2015 թվականներին Հայաստանն իրականացրել է մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում քիզնես սկսելու համար 2 ընթացակարգ է պահանջվում, որոնց իրականացման համար պահանջվում է 3 օր և արժենում մեկ շնչի հաշվարկով՝ եկամտի 1 տոկոսը:

32. Պայմանագրային պարտավորությունների կատարման և էլեկտրականության հասանելիության հետ կապված հարցերը Հայաստանի թույլ կողմերն են: 189 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է համապատասխանաբար 119-րդ, 110-րդ և 131-րդ տեղերը: Բոլոր այս բնագավառները մեծ կարևորություն ունեն թե՛ տեղացի, և թե՛ օտարերկրյա ներդրողների, ինչպես նաև ներդրումների բոլոր տեսակների առումով: Անդասահմանային առևտուրն առանձնապես կարևոր է արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման համար, որի կարիքը Հայաստանն ավելի շատ ունի:

Գծապատկեր 14. Doing business վարկանիշները

Քիզնեսի իրականացման դյուրինությունը




- Վրաստան (վարկանիշը՝ 15)
- Բուլղարիա (վարկանիշը՝ 38)
- Հայաստան (վարկանիշը՝ 45)
- Ռումինիա (վարկանիշը՝ 48)
- Հունաստան (վարկանիշը՝ 61)

Տարածաշրջանի միջին ցուցանիշը (Եվրոպա և Կենտրոնական Ասիա, վարկանիշը՝ 68)
 Ռուսաստանի Դաշնություն (վարկանիշը՝ 62)

Հեռավորությունը սահմանային ցուցանիշից

Վարկանիշները՝ առանձին ցուցիչների գծով



Բիզնես սկսելը (4)

Շինարարության թույլտվությունների ստանալը (81)

Էլեկտրականությունը (131)

Գույքի գրանցումը (7)

Վարկեր ստանալը (36)

Փոքրամասնություն ներկայացնող ներդրողների պաշտպանությունը (49)


Հարկերի վճարումը (41)

Անդրսահմանային առևտուրը (110)

Պայմանագրերի կատարումը (119)

Մանկության հետ կապված հարցերի կարգավորումը (69)

Բիզնես սկսելը



Source: Doing Business database.

Հայաստան (վարկանիշը՝ 4)

Վրաստան (վարկանիշը՝ 5)

Ռուսաստանի Դաշնություն (վարկանիշը՝ 34)

Ռումինիա (վարկանիշը՝ 38)

Բուլղարիա (վարկանիշը՝ 49)

Հունաստան (վարկանիշը՝ 52)

Հեռավորությունը սահմանային ցուցանիշից

33. Անդրսահմանային առևտրի իրականացման ոլորտում Հայաստանի ներկայիս դիրքը տասներկու կետով առաջընթաց է արձանագրել՝ համաձայն *Doing Business 2015* հաշվետվության: Հայաստանի ձեռնարկությունների 2013թ. հետազոտությունը ցույց է տալիս, որ ուղղակի արտահանումների մաքսային ձևակերպումները տևում են 8.6 օր, մինչդեռ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային միջին ցուցանիշը 4.8 օր է: 160 երկրների շարքում Հայաստանը 92-րդ տեղն է զբաղեցրել 2014թ. լոգիստիկ կատարողականի ցուցիչում, և այս ցուցիչն արտացոլում է տեղերում գործող օպերատորների (համաշխարհային բեռնափոխադրողների և սուրհանդակային ծառայությունների) կարծիքներն այն երկրներում լոգիստիկայի նպաստավորության վերաբերյալ, որտեղ նրանք ծավալում են իրենց գործունեությունը կամ որտեղ կատարում են իրենց առևտուրը: Մաքսային և առևտրային կանոնակարգերը, ինչպես և բարդ մաքսային ընթացակարգերը խոչընդոտներ են առաջացնում: Հայաստանը (3.4/7 ցուցանիշով) 144 երկրների ցանկում զբաղեցրել է 108-րդ տեղը՝ համաձայն Մրցունակության համաշխարհային ցուցիչի: Թեև Հայաստանը կարող է ԵՏՄ շրջանակներում օգտվել մաքսային գրոյական դրույքաչափից՝ կազմակերպության անդամների հետ առտուր անելիս (Ռուսաստան, Ղազախստան և Բելառուս, իսկ Ղրղզստանը պատրաստվում է շուտով միանալ), միջազգային վարկանիշներից և ուսումնասիրություններից բխում է, որ դեռևս կան անելիքներ՝ ընկերություններին լոգիստիկայի հետ կապված խոչընդոտները հաղթահարելու և առավել ազատորեն առևտուր անելու հնարավորությունն ընձեռելու ուղղությամբ, ինչը Հայաստանն արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրողների (հատկապես ԵՏՄ-ից դուրս գտնվողների) համար առավել խոստումնալից կդարձնի:

34. Ամփոփելով, կարելի է ասել, որ Հայաստանը բավականին լավ արդյունքներ ունի արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների համար կարևոր մի շարք ասպարեզներում, սակայն թույլ է այլ ոլորտներում: Ուժեղ կողմերից է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների և դրանցից բխող հնարավորություններից օգտվելու պատրաստականությունը, աշխատաշուկայի ճկունությունը, աշխատուժի արժեքը և աշխատանքի արտադրողականությունը: Այդուհանդերձ, Հայաստանի ընդհանուր ենթակառուցվածքների որակը, տաղանդավոր մարդկանց գրավելու և նրանց երկրում պահելու կարողությունը, տեղացի մատակարարների առկայությունը և որակը, ինչպես նաև բիզնեսի ընդհանուր կատարելությունը և նորարարությունները համեմատաբար ցածր մակարդակի վրա են: Հարկային խնդիրները կարծեք թե համատարած են ներդրողների բոլոր տեսակների համար: Առևտրի և մաքսային կանոնակարգերը ևս մտահոգություն են հարուցում:

IV. Ներդրումային քաղաքականության շրջանակը

35. **ՕՈՆ, հատկապես՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների հոսքերի ավելացումը կարող է օգնել Հայաստանին՝ կենսագործելու զարգացման հիմնական նպատակները:** Ինչպես քննարկվել է ավելի վաղ, ՕՈՆ-ը Հայաստանին օգնելու կարևոր դերակատարություն ունի՝ գլոբալ արժեչոթաներում ինտեգրվելու, տնտեսությունը բարձր հավելյալ արժեք ապահովող արտադրատեսակներով դիվերսիֆիկացնելու, տեղական աշխատուժի հմտություններն ամրապնդելու հարցերում: Արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՆ-ները կարող են ավելացնել օգուտները՝ դրանց առյուծի բաժինն ուղղելով արտահանմանը: Այդ օգուտներն առավելագույնի հասցնելու համար պահանջվում է ներդրումային սահուն քաղաքականություն, որոնք կվերացնեն ՕՈՆ ներգրավելուն և պահպանելուն խանգարող իրավական, կանոնակարգային և վարչական խոչընդոտները: Նման քաղաքականությունները որոշակի ոլորտների ներուժի բացազատման և տնտեսության ընդհանուր մրցունակությունը բարելավելու նախադրյալներն են:

36. **Ներդրումների բոլոր տեսակների պարագայում ՕՈՆ ծրագիրն իրականացնելու համար պահանջվում է ամբողջական մոտեցում:** Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումը ներդրումների ամենից ճկուն տեսակն է, ուստի, քաղաքականության հետևյալ ասպարեզներում պահանջում է հետևյալ նախադրյալները.

1. *Բաց, ապահով և կանխատեսելի ներդրումային ռեժիմ, մասնավորապես.*

- Պարզ, սահուն և կանխատեսելի ընթացակարգեր՝ երկիր մուտք գործելու, այդ թվում՝ աշխատուժի շարժի վերաբերյալ.
- Միջազգային ներդրումային համաձայնագրերի պատշաճ ցանց, որը ներդրողներին և թրեյդերներին տրամադրում է հստակ կանոններ և գործունեության ոլորտներ առևտրի և ներդրումային հոսքերի համար՝ դրանով իսկ ապահովելով այն շուկաների առավել կանխատեսելիությունը, ուր նրանք ցանկանում են մուտք գործել.
- Կանոնակարգող միջավայրի կանխատեսելիություն և թափանցիկություն պետության և ներդրողների միջև, ինչպես սահմանված է Միջազգային ներդրումային համաձայնագրերով.
- Խրախուսող միջոցների թափանցիկ և լավ կառավարելի ռեժիմ:

2. *Արտահանման-ներմուծման արդյունավետ հոսքեր և գործառնություններ.*

Հիմնական գործընկերների հետ առևտրի և ներդրումների բաց ռեժիմներ, առևտրի արդյունավետ լոգիստիկա և առևտրի խթանման ընթացակարգեր (արտադրության դեպքում), քանի որ ՕՈՆ-ն ի սկզբանե առևտրային ուղղվածություն ունի, ազատ առևտրի ռեժիմը կարող է նպաստավոր լինել նման ներդրումներ ներգրավելու և պահպանելու համար:

A. Կանոնակարգող շրջանակը

37. Այս բաժնում ընդհանուր ներկայացված է ՕՈՆ-ների վերաբերյալ Հայաստանի իրավական շրջանակը ներպետական և միջազգային մակարդակներով, առևտրի բացության աստիճանը՝ արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումների և առևտրի միջև կապի լույսի ներքո, ինչպես նաև քաղաքականությունն իրականացնող և ՕՈՆ-ներին առնչվող պետական գերատեսչությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը:

38. Հայաստանի ներդրումային իրավական շրջանակը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության 1994թ. օրենքից, Ազատ տնտեսական գոտիների մասին օրենքից և հարկային օրենսդրությունից: Հայաստանի Սահմանադրությունը պաշտպանում է սեփականության բոլոր ձևերը և սեփականություն ունենալու և օգտագործելու՝ քաղաքացիների իրավունքը, իսկ օտարերկրյա քաղաքացիների դեպքում՝ վարձակալության իրավունքը: Սահմանադրությամբ անգամ պահանջվում է օտարված գույքի համար համարժեք փոխհատուցում՝ նախքան գույքը սեփականատիրոջից վերցնելը: Թիվ 3 աղյուսակն ամփոփում է Հայաստանի ներդրումային քաղաքականության հիմնական բաղադրիչները:

Աղյուսակ 3. Ներդրումային քաղաքականություն. հիմնական բաղադրիչները

<p>Փոխարկման և փոխանցման քաղաքականություններ</p>	<p>Օտարերկրյա արժույթի փոխանակման անսահմանափակ ռեժիմ ՕՈՒՆ-ների համար: ՕՈՒՆ առնչվող կապիտալի հոսքերը չեն վերահսկվում, իսկ օտարերկրյա ներդրումից ստացվող շահույթի արտահանման կամ արտարժույթով վճարումներ կատարելու սահմանափակումները բացակայում են: Չկան արտահանումից ստացվող մուտքերի հետ կապված սահմանափակումներ, և ֆիրմաները կարող են իրենց երկրում կամ արտերկրում արտարժույթով բանկային հաշիվներ ունենալ: Թեև Ներդրումների մասին օրենքը պարունակում է արտարժույթի փոխարկելիության և փոխանցման այս ողջամիտ երաշխիքները, դեռևս կան որոշակի պակասող կետեր, օրինակ՝ նման փոխանցումները ժամանակին և անհապաղ կատարելու երաշխիքը, փոխարկման ժամանակ կիրառվող փոխարժեքի կիրառումը և հնարավոր բացառությունները երաշխիքից:</p>
<p>Օտարում և փոխհատուցում</p>	<p>Օտարերկրյա ներդրումը չի կարող պետականացվել, բռնագրավվել կամ օտարվել, բացառությամբ բնական կամ պետական արտակարգ իրավիճակների հետ կապված բացառիկ դեպքերի՝ դատարանների որոշմամբ և պատշաճ փոխհատուցմամբ: Այդուհանդերձ, Ներդրումների մասին օրենքը չի անդրադարձնում օտարմանը և դրան համարժեք միջոցառումներին (անուղղակի օտարումներ):</p>
<p>Վեճերի լուծում</p>	<p>Օտարերկրյա ներդրումների մասին 1994թ. օրենքի համաձայն, օտարերկրյա ներդրողի և Հայաստանի Հանրապետության միջև ծագող բոլոր վեճերը պետք է քննվեն Հայաստանի Հանրապետության դատարաններում:</p>
<p>Կատարողականի հետ կապված պահանջներ և ներդրումների խթանում</p>	<p>Մասնավորեցման համաձայնագրերով ներդրողների վրա դրվել են կատարողականի հետ կապված պահանջներ, հատկապես խոշոր պետական ձեռնարկությունների պարագայում, ինչպիսիք են՝ հանքերը կամ հեռահաղորդակցության ցանցերը: Հայաստանն արտոնություններ է տրամադրում արտահանողներին (արտահանման տուրք սահմանված չէ, արտահանվող ապրանքների ու ծառայությունների համար</p>

	վճարված ԱԱՀ-ն վերադարձվում է), և օտարերկրյա ներդրողներին (ժամանակավորապես ազատվում են եկամտահարկից, կարող են կրած վնասները անորոշ ժամկետով փոխադրել հաջորդ հաշվետու ժամանակահատված և առաջնային հումքի համար սահմանել ներմուծման ժամանակավոր ռեժիմներ՝ առանց ԱԱՀ-ի և մաքսային տուրքերի):
Մասնավոր սեփականության իրավունք և գործարկում	Հայաստանի Սահմանադրությունը պաշտպանում է սեփականության բոլոր ձևերը և սեփականությունն ունենալու և օգտագործելու՝ քաղաքացիների իրավունքը: Կեցության հատուկ կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացիները չեն կարող հողատարածք տիրապետել, այլ կարող են միայն վարձակալել այն: Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին Հայաստանի օրենքը սահմանում է, որ օտարերկրյա ընկերությունները Հայաստանի ընկերությունների հետ ունեն մասնավորեցմանը մասնակցելու հավասար իրավունքներ:
Ազատ տնտեսական գոտի (ԱՏԳ)	Ազատ տնտեսական գոտիների մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որն ընդունվել է 2011թ. մայիսի 25-ին և հղում է կատարում առանձին գոտիների վերաբերյալ կանոնակարգերին և կառավարության որոշումներին, սահմանում է հետևյալը. ԱՏՀ կազմակերպիչները և գործարկողները ԱՏԳ տարածքում ծառայություններ մատուցելիս կամ ապրանք մատակարարելիս ազատվում են ԱԱՀ-ից: Իրավաբանական անձինք ազատվում են շահութահարկից, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ եկամտահարկից, եթե հանդիսանում են ԱՏԳ ռեզիդենտ կամ իրենց գործունեությունը ծավալում են ԱՏԳ-ում: ԱՏԳ ռեզիդենտներին պատկանող կամ նրանց կողմից ԱՏԳ-ում գործածվող հանրային և արդյունաբերական շինություններն ու կառույցներն ազատվում են գույքահարկից, «Ազատ տնտեսական գոտի ներմուծման» ռեժիմով թողարկված ապրանքները, ինչպես նաև այդ ապրանքների հիման վրա ԱՏԳ տարածքում արտադրված ապրանքները Հայաստանի Հանրապետությունից այլ երկրներ կարող են արտահանվել «Արտահանում ազատ շրջանառության համար» կամ «Վերաարտահանում» ռեժիմներով՝ առանց մաքսատուրքերի և ոչ մաքսային (non-tariff) միջոցների կիրառման: ԱՏԳ-ում պետական մարմինների անունից մատուցվող ծառայություններն իրականացվում են «մեկ պատուհանի» սկզբունքով:

39. Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության 1994 թվականի օրենքը (Այսուհետ՝ Ներդրումների մասին օրենք կամ Օրենք), սահմանում է մի շարք իրավունքներ, որոնք օտարերկրացիների համար համարվում են կարևոր, եթե ոչ՝ կարևորագույնը: Դրանք են՝

- Երաշխավորում է հավասար վերաբերմունք օտարերկրյա և տեղացի ներդրողների հանդեպ,
- Էապես սահմանափակում է ներդրողի սեփականությունը բռնագրավելու՝ կառավարության հնարավորությունը,
- Պահանջում է լիարժեք փոխհատուցում՝ պետության կողմից պետականացման կամ

բռնագրավման դեպքում,

- Օտարերկրյա ներդրումները թույլատրում է տնտեսության ամենալայն ճյուղերում և տարբեր եղանակներով,
- Հինգ տարի ժամկետով պաշտպանում է ներդրումները՝ օրենսդրության անբարենպաստ փոփոխությունների դեպքում,
- Առևտրային վեճերը լուծելու համար տալիս է հայաստանյան և միջազգային դատարաններ դիմելու հնարավորություն,
- Թույլ է տալիս արտահանել շահույթը և սեփականությունը,
- Պաշտպանում է մտավոր սեփականությունը:

40. Օրենքը բազմաթիվ դրական դրույթներ է պարունակում և ներդրումների և ներդրողների նկատմամբ բացության բարձր աստիճան է ենթադրում: Համաշխարհային բանկի խմբի կողմից Ներդրումների մասին օրենքի նախնական վերանայման համաձայն (Հավելված 3), Օրենքը չափազանց թույլ կամ անկատար չէ, սակայն էական բարելավման կարիք ունի որոշակի ոլորտներում: Օրինակ, Օրենքը.

- կողմնակից է օտարերկրյա և տեղացի ներդրողների միջև խտրականության բացառման ընդհանուր սկզբունքին: Այդուհանդերձ, Օրենքը չի ներառում որևէ դրույթ՝ առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի սկզբունքի վերաբերյալ՝ երաշխավորելու համար ներդրողի կամ ներդրման ծագման երկրով պայմանավորված խտրականության բացառումը:
- Առհասարակ բացակայում է Արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի սկզբունքը (ԱԱՎ): ԱԱՎ սկզբունքը խիստ կարևոր է և հաճախ սխալմամբ ընկալվում է որպես հեռահար հետևանքներ ենթադրող երաշխիք: Այն ամբողջացնում է ներդրողներին խտրականությունից պաշտպանող շրջանակը՝ ապահովելով *պատշաճ ընթացակարգեր*, ներառելով բարեխղճության, *թափանցիկության* սկզբունքները և պաշտպանելով *արդարադատության ոտնահարումներից*:
- Բոլոր ներդրողներին թույլ է տալիս լիովին տնօրինել սեփական եկամուտները, Հայաստանում բանկային և «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված այլ հաշիվներ»: Ավելին, 11-րդ հոդվածն օտարերկրյա ներդրողներին երաշխավորում է «ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման հետևանքով ստացած շահույթը (եկամուտը) և այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար կամ որպես փոխհատուցում»: Այս հոդվածները, միասին վերցված, կարող են դիտարկվել որպես արտարժույթի փոխարկելիության և փոխանցման ողջամիտ երաշխիքի տրամադրում, թեև կիրառված տերմինաբանության հետ կապված որոշակի խնդիրներ կան, իսկ որոշ տարրեր էլ բացակայում են:
- Ներդրողներին պաշտպանում է պետականացումից և բռնագրավումից: Դրանով սահմանվում է, որ օտարերկրյա ներդրումները չեն կարող ազգայնացվել, և որ առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: Այդուհանդերձ, հոդվածը ոչինչ չի ասում ուղղակի կամ անուղղակի օտարման մասին: Այն չի պարունակում «անհապաղ, պատշաճ և արդյունավետ» տերմինները, որոնք դարձել են պաշտպանության ոսկե ստանդարտը («Հալլի բանաձև»):
- Ներդրումների մասին օրենքը ո՛չ բիզնեսների միջև, ո՛չ էլ ներդրողի և պետության

միջև վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներից, ներառյալ՝ միջազգային արբիտրաժից օգտվելու հնարավորություն ուղղակիորեն չի երաշխավորում: 24-րդ հոդվածի համաձայն, օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը, որոնք ծագել են օտարերկրյա ներդրողի և Հայաստանի Հանրապետության միջև, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

41. Ազատ տնտեսական գոտիների (ԱՏԳ) մասին օրենքը նախատեսում է ԱՏԳ-ների ստեղծում, որի նպատակն էր՝ օժանդակել բարենպաստ տնտեսական միջավայրի ձևավորմանը և արտահանմանն ուղղված գործունեության մշակմանը՝ օտարերկրյա ներդրողների ակտիվ մասնակցությամբ: ԱՏԳ-ների մասին օրենքը սահմանում է ԱՏԳ ռեզիդենտների համար հարկային և մաքսային արտոնությունների ռեժիմի կարգավորման շրջանակը: Համաձայն ԱՏԳ մասին օրենքի, ազատ տնտեսական գոտու շահագործողներին տրվում են շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, մաքսատուրքի վճարման արտոնություններ¹¹:

Արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման՝ արտահանմանն ուղղվածություն ունենալու արդյունքում ԱՏԳ-ը կարող է կարևոր դերակատարություն ունենալ նախատեսված ոլորտներում ներդրումներ ներգրավելու և պահպանելու գործում: Սակայն կարող է լրացուցիչ գնահատումների անհրաժեշտություն լինել՝ գնահատելու համար ԱՏԳ գործող ռեժիմների արդյունավետությունը: Հայաստանն ունի գործող երկու ԱՏԳ. «Ալյանսը»՝ «ՌՍՕ Մարս» ՓԲԸ և «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի» հիման վրա, և «Մերիդիանը»: «Ալյանս» ԱՏԳ ուղղված է էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության բնագավառներում առաջատար և նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ ապրանքների արտադրության և արտահանման վրա (տվյալների/տեղեկատվության փոխանցման համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի մշակում և արտադրություն), ինչպես նաև արտադրում է այնպիսի ապրանքներ, որոնք Հայաստանի մեկ այլ վայրում չեն արտադրվում: «Մերիդիան» ԱՏԳ մասնագիտացված է ոսկերչության, ադամանդագործության և ժամագործության բնագավառներում: ԱՏԳ նպատակն է՝ խթանել արտահանումները, ստեղծել աշխատատեղեր և խթանել կայուն տնտեսական զարգացումը՝ ոսկերչության և ժամագործության ոլորտներում մասնագիտացված միջազգային ընկերություններից ներգրավելով ՕՈՒՆ-ներ:

42. Միջազգային մակարդակով Հայաստանը երկկողմանի ներդրումային համաձայնագրեր (ԵՆՀ) ունի 37 երկրի հետ¹²: Համահավասար վերաբերմունք ցուցաբերող կամ առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի կարգավիճակ ապահովելուց բացի, ԵՆՀ-երը բարենպաստ պայմաններ են սահմանում օտարերկրյա ներդրողների

¹¹ ԱՏԳ մասին լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Էկոնոմիկայի նախարարության կայքէջը՝ հետևյալ հղումով (<http://mineconomy.am/eng/505/free.html>).

¹² Արգենտինա, Ավստրիա, Միացյալ Նահանգներ, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Գերմանիա, Իրան, Լիբանան, Կանադա, Կիպրոս, Հնդկաստան, Հունաստան, Ղրղզստան, Միացյալ Թագավորություն, Վիետնամ, Վրաստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա, Իսրայել, Քաթար, Տաջիկստան, Ռուսաստան, Բելառուս, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ուրուգվայ, Ֆինլանդիա, Եգիպտոս, Նիդերլանդներ, Լատվիա, Շվեդիա, Լիտվա, Ղազախստան և Սիրիա:

համար, մասնավորապես՝ ներդրումների անձեռնմխելիություն, ծագած վեճերը միջազգային դատարաններում լուծելու հնարավորություն և ստացված շահույթի ազատ փոխանցում:

Հայաստանն ակտիվ ներգրավված է բանակցություններում՝ օգտվելով ՀՀ կառավարության կողմից 2012 թվականին հաստատված մոդելային երկկողմ ներդրումային համաձայնագրից: Այն նպատակ ունի «խթանել փոխշահավետ տնտեսական համագործակցությունը՝ պայմանավորվող կողմի պետության ներդրողների կողմից պայմանավորվող մյուս կողմի տարածքում ներդրումների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու միջոցով»: Մոդելային երկկողմ ներդրումային համաձայնագիրը ներառում է երկկողմ ներդրումային համաձայնագրերով տրամադրվող սովորական երաշխիքները, այն է՝ արդար և անկողմնակալ վերաբերմունքը, առավել նպաստավոր պայմաններ առաջարկելը և համահավասար վերաբերմունք ցուցաբերելը, վնասների հատուցումը, օտարումը միայն հանրային շահից ելնելով կատարելը և պատշաճ փոխհատուցելը, շահույթի ազատ փոխանցումները և միջազգային ներդրումային արբիտրաժներից օգտվելու հնարավորությունը: Մոդելային երկկողմ ներդրումային համաձայնագրի նորարարական տարրերից մեկը կատարողականի վերաբերյալ դրույթներ նախատեսելն է: 2.3 հոդվածը սահմանում է, որ ներդրումները չպետք է ենթարկվեն կատարողականի հետ կապված լրացուցիչ պահանջների, որոնք կարող են վտանգել դրանց կենսունակությունը կամ բացասաբար անդրադառնալ դրանց կիրառման, կառավարման, ընթացքի, գործարկման, ընդլայնման, վաճառքի կամ այլ հարցերի վրա: Այս արգելքը թույլ չի տա, որ պայմանավորվող կողմը հովանավորչական միջոցներ ձեռնարկի, ասենք՝ բիզնեսի գործարկում պայմանավորի տեղական արտադրանքի կիրառմամբ:

43. Հայաստանը անդամակցում է առևտրի և ներդրումների ոլորտի միջազգային հիմնական հարթակներին: Դրանցից են՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ)՝ 2003 թվականից, ինչպես նաև Ներդրողների իրավունքների պաշտպանության մասին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) բազմակողմ կոնվենցիան, Եվրասիական տնտեսական միության համաձայնագիրը, Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագիրը, Էներգետիկ խարտիայի պայմանագիրը, Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիան և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (ICSID): Հայաստանը նաև Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի կոնվենցիայի մասնակից է, որն ավելի շատ հայտնի է որպես Ապոստիլի մասին Հաագայի կոնվենցիա (1994 թվականից ի վեր), որը հիմնովին պարզեցնում է բյուրոկրատական ձևականությունները, որոնք անդամ երկրների ձեռնարկություններին պարտավորեցնում են հավաստել իրենց պաշտոնական հրապարակային փաստաթղթերի իսկությունը:

44. Ինչ վերաբերում է ներդրող-պետություն վեճերի լուծմանը, Հայաստանը միայն մեկ հայտնի ներդրող-պետություն վեճի կարգավորման դեպք է ունեցել՝ Հայաստան-Միացյալ Նահանգներ ԵՆՀ-ի շրջանակներում: Թեև մեզ հայտնի դեպքերից դատելով՝ Հայաստանը մեծապես ներքաշված չէ ներդրող-պետություն արբիտրաժային վեճերում, առևտրային արբիտրաժը որոշակի խնդիրներ հարուցում է: Առևտրային արբիտրաժի ասպարեզում արբիտրաժային ընթացակարգերի և դրանց իրականացման տևողությունը

բավականին երկար է: Արբիտրաժային ընթացակարգերի միջին տևողությունը 118 օր է, մինչդեռ ճանաչման և իրականացման ընթացակարգերին՝ 153 օր:¹³

B. Առևտրի բացությունը

45. **Համաձայն ԱՀԿ Առևտրային քաղաքականության 2010թ. ուսումնասիրության, Հայաստանը պահպանել է առևտրի ազատական ռեժիմը:** Հայաստանում առավել նպաստավոր պայմանների հետ կապված դրույքաչափերը ամենացածրերից են ԱՀԿ անդամների շարքում: Մինչ վերջերս Հայաստանի առևտրային ռեժիմը կարգավորվում էր 2001թ. Մաքսային օրենսգրքով: Օրենքը պահպանել է հետևյալ ռեժիմը.

- Հայաստանի բոլոր արտահանումներն ազատված էին մաքսատուրքերից.
- Արտահանման դրույքաչափերը կազմում էին 0% կամ 10%: 10%-անոց դրույքաչափը հիմնականում գանձվում էր սպառողական և պերճանքի առարկաների պարագայում.
- Սակագները սահմանվում էին ավելացված արժեքի հարկման տրամաբանությամբ և գանձվում էին ԻԱԲ (CIF) արժեքից.
- Ներմուծման մաքսատուրքեր չէին վճարվում հետևյալ դեպքերում.
 - Ներմուծված արտադրական ապրանքները, որոնք բիզնեսում կատարված ներդրման մաս են կազմում (ապրանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը),
 - Հայաստանի տարածքով փոխադրվող տարանցիկ ապրանքները,
 - Ներպետական կանոնավոր բեռնափոխադրումների համար օգտագործվող տրանսպորտային միջոցները,
 - Արտարժույթը և արժեթղթերը,
 - Մշակման կամ վերամշակման նպատակով ժամանակավորապես Հայաստան ներմուծված և Հայաստանից ժամանակավորապես արտահանված ապրանքները,
 - Ներմուծված արտադրական ապրանքները, որոնք բիզնեսում կատարված ներդրման մաս են կազմում (ապրանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը):

46. **2015 թվականից միասնական դրույքաչափերի համակարգին անցումը հանգեցրել է դրույքաչափերի, ինչպես նաև դրույքաչափերի հաշվարկման մեթոդի փոփոխությունների:** ԵՏՄ-ին միանալուց հետո Մաքսային օրենսգիրքն ուժը կորցրած ճանաչվեց, բացառությամբ այն դրույթների, որոնք վերաբերում են մաքսագերծ առևտրի խանութներին, մաքսային պահեստներին և մաքսային միջնորդներին (դրանք ուժը կկորցնեն 18 ամիս անց): Նոր համակարգով ներդրվում է դրույքաչափերի առավել համալիր ցանկ, որոնք կիրառելի են ապրանքների տարբեր նկարագրերի պարագայում: Թեև ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրների հետ առևտրի և ԱՀԿ առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների վրա ազդեցությունն ինքնին վերանայման կարիք

¹³ Pouget, Sophie. «Վեճերի արբիտրաժը և մեդիացիան. օտարերկրյա ուղղակի ներդրումների հետ կապված առևտրային վեճերի դեպքում արբիտրաժի և մեդիացիայի ռեժիմների փորձարկումը/benchmarking». Համաշխարհային բանկի քաղաքական հետազոտությունների աշխատանքային փաստաթուղթ 6632 (2013թ.).

ունի, միանշանակ է, որ դրույթաչափերի ցանկացած բարձրացում, որ կարող է չհամապատասխանել առկա պարտավորություններին, ենթակա է վերանայման ԱՀԿ-ի կողմից:

47. **Ծառայությունների ոլորտում Հայաստանը ստանձնել է ոլորտային պարտավորություններ (շուկայի հասանելիության և համահավասար վերաբերմունքի երաշխիքներ)¹⁴ 12 ոլորտներից 11-ում կամ Ծառայությունների ոլորտային դասակարգման ցանկի 160 ենթաոլորտներից 97-ում¹⁵:** Կարևոր բացառություն են փոստային ծառայությունները, ուղևորափոխադրումները և օդային ու երկաթուղային բեռնափոխադրումները: Շուկաների հասանելիությունը և համահավասար մոտեցումը դեռևս մնում են ոչ-պարտադիր՝ ֆիզիկական անձանց մասով, բացառությամբ այն անձանց, որոնց ժամանակավոր մուտքը կարգավորվում է Հայաստանի երկկողմանի պարտավորություններով: Ծառայությունների առևտրի ընդհանուր համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի մասով Հայաստանի արտոնությունների ցանկը ներառում է ավտոձանապարհային ուղևորափոխադրումները, ինչպես նաև խաղարկային ֆիլմերի և հեռուստահաղորդումների արտադրությանը և տարածմանն առնչվող աուդիովիզուալ ծառայությունները: Բոլոր այս միջոցները նախատեսված են անորոշ ժամկետով, բացառությամբ աուդիովիզուալ ծառայությունների, որոնք կարգավորվում են որոշակի ժամկետով կնքված երկկողմ համաձայնագրերով:

48. **Հայաստանը իր GATS պարտավորությունների ցանկում որոշակի սահմանափակումներ է դրել իրավական, հեռահաղորդակցության, ֆինանսական և տրանսպորտային ծառայությունների վրա:** Այդուհանդերձ, երկրի ներկայիս իրավական շրջանակը դեպքերի մեծամասնությունում (օրինակ՝ փոստային ծառայությունները, հեռահաղորդակցությունը և ֆինանսական ծառայությունները) ավելի ազատական է, քան նախատեսված է GATS իր պարտավորություններով: Հայաստանը ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրին (ՊԳՀ) միացած 15-րդ կողմն է: Այդ հանգամանքը դիտարկվում է որպես դրական տեղաշարժ, որը նպաստակ ունի ավելացնելու ներքին շուկաների բացությունն ու թափանցիկությունը:

49. **Հայաստանը բավականին բաց առևտրային ռեժիմ ունի, սակայն կարող են լրացուցիչ բարեփոխումներ անհրաժեշտ լինել՝ արդյունաբերության այնպիսի ճյուղերում արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումները խրախուսելու համար,**

¹⁴ GATS համաձայնագրում տեղ գտած պարտավորությունները կարելի է դասակարգել որպես **ընդհանուր պարտավորություններ**, որոնք կիրառելի են բոլոր Անդամների և ծառայությունների ոլորտների նկատմամբ, և **հատուկ պարտավորություններ**, որոնք վերաբերում են շուկայի հասանելիությանը և որոշակի ընտրված ոլորտներին համահավասար վերաբերմունքին: Այդպիսի պարտավորություններ սահմանված են առանձին երկրների ցանկերում, որոնցով նշվում են այն ծառայությունները, որոնց համար Անդամ-երկիրը երաշխավորում է շուկայի հասանելիությունն ու համահավասար վերաբերմունքը, ինչպես նաև ցանկացած սահմանափակում, որ կարող է դրվել: Ցանկերի մեծամասնությունը ներառում է միաժամանակ երկու տարբերակ. **«Հորիզոնական հատված»**, որը կիրառվում է թվարկված բոլոր ոլորտներում և հաճախ վերաբերում է ծառայությունների «մատակարարման եղանակին», հատկապես՝ առևտրային ներկայացվածությանը և ֆիզիկական անձանց ներկայությանը, ինչպես նաև **«Ոլորտային հատված»**, որում նշված կետերը կիրառվում են միայն ծառայության որոշակի տեսակի նկատմամբ:

¹⁵ Ոլորտային պարտավորությունների համար տե՛ս ԱՀԿ հետյալ փաստաթուղթը. WT/ACC/ARM/23/Add.2, 6-ը դեկտեմբերի, 2002թ.

որոնք հանգեցնում են համալիր ապրանքատեսակների արտահանման, ինչպես նաև գլոբալ արժեզրթայի հետ կապերի հաստատման: Նման բարեփոխումները կարող են անդրադառնալ առկա կանոնակարգող միջավայրին և առևտրին խոչընդոտող վարչական սահմանափակումներին (օրինակ՝ ներմուծումների վրա անդրադարձող մաքսային ընթացակարգերը, գյուղատնտեսական ապրանքների արտահանման սերտիֆիկատներ ստանալու ընթացակարգերը), արտահանումը խթանելուն (օրինակ՝ արտահանման օտարերկրյա հավանական շուկաների մասին տեղեկատվությունը) և արտահանման ընդհանուր ենթակառուցվածքին: Վերջինը հատկապես կարևոր է տեղական փոքր և ցամաքով շրջափակված շուկաների համար և փակ սահմանների պայմաններում: Ամրապնդված և բարելավված ընթացակարգերը կկրճատեն նաև անդրսահմանային առևտուր իրականացնելու համար ֆիրմաներից պահանջվող ժամանակը: Նման բարեփոխումները պետք է համապատասխանեցվեն նաև Հայաստանի՝ Արտահանմանն ուղղված արդյունաբերության քաղաքականությանը, որի համատեքստում ձեռնարկված ոլորտային գնահատումներն ի հայտ են բերել մի շարք ոլորտային մարտահրավերներ և առաջարկել կանոնակարգման բարեփոխումներ՝ արդյունաբերական քլաստերներն ամրապնդելու և ֆիրմաների արտահանման ներուժը կատարելագործելու նպատակով:

50. Առևտրային քաղաքականության բարեփոխումներից բացի, արտոնությունների տրամադրման համաձայնագրերի միջոցով միջազգային շուկաներից օգտվելու հնարավորությունը կարևոր է արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման առումով: Որպես ԱՊՀ անդամ, Հայաստանն ազատ առևտրի գործող համաձայնագրեր ունի ԱՊՀ գործընկերների հետ: Հայաստանն ազատ առևտրի համաձայնագրեր է կնքել Ռուսաստանի, Բելառուսի, Վրաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Ուկրաինայի հետ: Այս համաձայնագրերով ապրանքների արտահանումն ու ներմուծումն ազատված է մաքսային տուրքերից և համարժեք հարկերից ու վճարներից: Հայաստանը Արտոնությունների ընդհանրացված սիստեմների վերաբերյալ պայմանավորվածություններ ունի Կանադայի, Ճապոնիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի և Միացյալ Նահանգների հետ: Հայաստանը 2005 թվականից ի վեր պահպանում է ԵՄ շուկաներից օգտվելու արտոնյալ հնարավորությունները GSP պլյուսի շրջանակներում՝ օգտվելով կայուն զարգացման և լավ կառավարման հատուկ արտոնյալ պայմանավորվածություններից: Այդ պայմանավորվածություններով Հայաստանից կատարվող արտահանումներին արտոնյալ մուտք է ապահովվում ԵՄ շուկա, քանի որ դրանով գրոյական դրույքաչափ է սահմանված շուրջ 6400 սակագնային տողերով¹⁶: Այդուհանդերձ, ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի և Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) համաձայնությունների իրականացումը, ինչը կարող էր փոխադարձ խորացված առևտրային հարաբերությունների հանգեցնել, կասեցվեց 2013թ. սեպտեմբերին (երբ Հայաստանը որոշեց միանալ ԵՏՄ-ին):

C. Ինստիտուցիոնալ կառուցվածքը

51. Ներդրումային քաղաքականություն մշակելու, բիզնես-միջավայրի կառավարման և բարելավման պատասխանատուն Էկոնոմիկայի նախարարությունն է: Էկոնոմիկայի

¹⁶ Եվրոպական հանձնաժողով – Հայաստան. <http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/armenia/>.

նախարարությունը (ԷՆ) գլխավորում է Հայաստանի տնտեսական զարգացման, արդյունաբերության և ներդրումային քաղաքականությունների մշակումն ու իրականացումը: ԷՆ խնդիրները, ի թիվս այլոց, հետևյալն են. արդյունաբերության միջազգային մրցունակության ամրապնդում, ձեռնարկատիրության խթանում, ներդրումներ և արտահանումներ, ձեռնարկատիրության համար բարենպաստ և միջազգայնորեն մրցունակ միջավայրի ապահովում:

52. Հայաստանի զարգացման հիմնադրամը (ՀԶՀ) նորաստեղծ կազմակերպություն է, որը միավորել է Ազգային մրցունակության խորհուրդը և Արդյունաբերության զարգացման հիմնադրամը: Այդ կազմակերպության նախորդը՝ Ջարգացման հայկական գործակալությունը, լուծարվեց: ՀԶՀ նպատակները բազմազան են, այդ թվում՝ խթանել տնտեսական աճը՝ երկրի վարկանիշն ու մրցունակությունն ավելացնելու միջոցով, ներգրավել ներդրումներ, զարգացնել արտահանումները, բարելավել բիզնես-միջավայրը, իրականացնել տարածաշրջանային զարգացման ծրագրեր և զարգացնել զբոսաշրջությունը: Ի թիվս այլ նպատակների, ՀԶՀ-ը նպատակ ունի «մեկ պատուհանի սկզբունքով» և հետներդրումային ծառայությունների մատուցմամբ աջակցել օտարերկրյա ներդրողներին: Օտարերկրյա ներդրումների խթանման ոլորտում Գյուղատնտեսության նախարարությունը օտարերկրյա դեսպանատների և տեղական ցուցահանդես-վաճառքների միջոցով նախնական նախնականացրել է խթանմանն ուղղված սեփական գործողություններ՝ գյուղատնտեսական արտադրանքի ուղղվածությամբ:

53. Գոյություն ունեն մասնավոր հատվածի երկխոսության մի շարք հարթակներ, որոնց վրա հիմնվելով՝ ՀՀ կառավարությունը անդրադառնում է ներդրողների որոշակի մտահոգություններին և Հայաստանի առջև ծառայած առավել նշանակալի մարտահրավերներին: Պետական մարմինների և բիզնես-հանրության 50 ներկայացուցիչներից բաղկացած և Վարչապետի կողմից ղեկավարվող Արդյունաբերական խորհուրդը ձգտում է անդրադառնալ բիզնես-հանրության խնդիրներին և խթանել բիզնես-միջավայրի բարելավումները: Հայաստանի Առևտրի պալատը ստեղծվել է Հայաստանի տնտեսությունը խթանելու, այն համաշխարհային տնտեսությունում ինտեգրելու, ինչպես նաև առևտրային, տեղացի և օտարերկրյա ներդրողների միջև գիտական և տեխնիկական կապերն ամրապնդելու համար: Հայաստանի Առևտրի պալատը աջակցում է նաև ձեռնարկությունների համար շուկայական ենթակառուցվածքի ձևավորմանը: Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը մեկ այլ կարևոր հարթակ է՝ տեղացի արդյունաբերողների շահերը ներկայացնելու համար:

D. Ներդրումների վրա ազդող սահմանափակումները

54. Օրենքների և կանոնակարգերի իրականացման հետ կապված սահմանափակումները գնահատելու նպատակով Համաշխարհային բանկի խումբը մշակել և իրականացրել է ներդրողների ընկալումների հարցում: Հայաստանի ներդրողների ուսումնասիրությունը (AIS 2014), Հայաստանում տեղական և օտարերկրյա ներդրողների ճանաչվածության ոչ հրապարակային ուսումնասիրությունը իրականացվել է 2014թ. մայիսին (հարցման բովանդակության նմուշը տես Հավելված 2-ում): Էկոնոմիկայի նախարարության ցուցումով ուսումնասիրությունն առաջին հերթին

ուղղված էր սննդի և խմիչքի, ոսկերչության, դեղագործության և ճշգրիտ ինժեներիայի ոլորտի ներդրողներին: Այլ ոլորտների ներդրողները հրավիրվել էին մասնակցելու դրան, քանի որ ուսումնասիրության հարցերը չէին վերաբերում այս կամ այն առանձին ոլորտին: Ներդրողների վերջնական ցանկը կազմվել էր Էկոնոմիկայի նախարարության, ներդրողների ասոցիացիաների և Համաշխարհային բանկի խմբի երևանյան ներկայացուցչությանը հայտնի ընկերությունների կողմից ամփոփված տվյալների հիման վրա: Առցանց հարցաշարն էլեկտրոնային փոստով ուղարկվել էր 56 ներդրողների: Ստացվել էր 20 պատասխան, որը կազմում էր ներդրողների ընդհանուր թվի 36%-ը: Ուսումնասիրության հարցաշարը կազմված էր պատասխանների ընտրություն առաջարկող, ինչպես նաև նկարագրական պատասխան ակնկալող հարցերից, որոնք բաժանվել էին ութ խմբերի՝ հիմնականում ելնելով ներդրումների կենսափուլից. Հայաստանում ներդրումներ կատարելու դրդապատճառներ, մուտք, պաշտպանություն և վստահություն, բողոքների ներկայացում, պետական արտոնություններ, ազատ տնտեսական գոտիներ, տնտեսական ազդեցություն և հեռանկարներ: Սույն բաժնում ներկայացված եզրահանգումներն օգնում են լույս սփռել Հայաստանում ներդրողների առջև ծառայող *դե ֆակտո* (իրականացման հետ կապված) սահմանափակումների վրա՝ ի լրումն կանոնակարգերի հետ կապված և ներդրումներին խանգարող քաղաքական բնույթի այլ սահմանափակումների: Ուսումնասիրության եզրահանգումները լրացնելու նպատակով Համաշխարհային բանկի խումբը 2014-2015 թվականներին իրականացրել է մի շարք առաքելություններ՝ գնահատելու համար ներդրումներին խանգարող առավել խնդրահարույց գործոնները՝ քաղաքականության բարեփոխումների առաջնահերթությունների որոշման հիմքում դնելու համար:

i. Ներգրավում և խթանում

55. Թերևս պակասում է Հայաստանի՝ իբրև ներդրումների նպատակակետ համեմատական առավելությունների հստակ ձևակերպումը, ինչը կարելի է ասել նաև խոստումնալից ոլորտների և դրանցում ներդրումային հնարավորությունների մասին: Այս միտքն առաջին հերթին առնչվում է ԷՆ և ներդրումների խթանման գերատեսչության, ներկայումս՝ ՀԶՀ իրավասությանը: Կարևոր նշանակություն ունեն գործունեության առավել տեսանելիությունը, ՕՈՆԸ խթանումների իրավասության հստակությունը և իր նախորդների համեմատ ՀԶՀ արդյունավետության և ազդեցության չափելիությունը:

56. Ներդրումների խթանման գործում ՀՀ կառավարության ներգրավվածությունը մինչ այժմ սահմանափակ էր համարվում թե՛ գործողությունների, և թե՛ ներդրողների հետ անմիջական շփումների առումով: Շատ ներդրողներ չեն առնչվել առանձին ծրագրերին, փոխարենը դիմել են Հայաստանի ներդրումային միջավայրի և ներդրումների որոշակի հնարավորությունների մասին տեղեկատվության այլ՝ մասնավոր աղբյուրների: Ինստիտուցիոնալ տեսանկյունից, ՀԶՀ-ը պետք է ոլորտներն առաջ քաշելիս ապահովի կողմնապահությունը՝ ելնելով դրանց ներուժից: Այս առումով, անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր պետական գերատեսչությունների (այդ թվում՝ Գյուղատնտեսության նախարարության) կողմից ներդրումներ ներգրավելուն ուղղված համատեղ ջանքերը՝ դրանց առավելագույն հասանելիությունը և Հայաստանը գովազդելու առկա միջոցների արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

57. Ինչ վերաբերում է ՕՈւՆ-ների հետ կապված տարածքային արտոնություններին, Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության նախնական եզրակացությունն այն է, որ օտարերկրյա ներդրողներին տրամադրվող արտոնությունների մասին տեղեկատվությունն անբավարար է: Հարցված ներդրողների կեսի խոսքերով՝ իրենք բավարար տեղեկատվություն չեն ունեցել առկա արտոնությունների մասին: Այդ արտոնություններից օգտվելու դյուրինության մասին տարբեր կարծիքներ արտահայտվեցին. միջին հաշվով ստացվեց, որ արտոնությունից օգտվելու համար պահանջվում է 28 օր: Այս եզրահանգումներից հարցեր են ծագում առաջարկվող արտոնությունների մասին տեղեկատվության անբավարար տարածման և դրանք ստանալու գործընթացի բարելավման ուղիների վերաբերյալ: Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության եզրակացություններից բխող կարևոր նախագուշացումն այն է, որ դրանք տարբերակում չեն դնում ներդրումների տարբեր տեսակների միջև: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ քարտեզագրում՝ ներդրումների տիպոլոգիայի և ծախսային արդյունավետության վերլուծության համակցությամբ՝ պարզելու համար, թե դրանք որ դեպքերում են առավել նպատակահարմար եղել՝ Հայաստանի զարգացման նպատակների և ներդրողների համար օգտակարության տեսանկյունից: Նման վերլուծության արդյունքները կօգնեն առանձնացնել այն ոլորտները, որոնք արտոնություններ չեն պահանջում, ինչպես նաև նրանք, որոնց համար արդյունավետ արտոնությունների տրամադրումն օգտակար կլինի:

ii. Մուտքը երկիր

58. Ներդրողի՝ երկիր մուտք գործելու տեսանկյունից Հայաստանի ներդրումային ռեժիմը համեմատաբար բաց է: Օրենսդրությամբ օտարերկրյա ընկերություններն արժանանում են հայաստանյան ընկերությունների հետ համահավասար վերաբերմունքի (համահավասար վերաբերմունք). երկիրը նաև լավ ցուցանիշներ ունի սեփականության իրավունքի սահմանափակումների ասպարեզում՝ օտարերկրյա ներդրողների առջև, ըստ էության, չդնելով որևէ սահմանափակում: Համաձայն Ներդրումներ առանց սահմանների 2012թ. փաստաթղթի, օրենքով օտարերկրյա կապիտալի սեփականության հետ կապված ակնհայտ սահմանափակումներ առկա են երեսուներկու ոլորտներից միայն մեկում (լրատվամիջոցներ): Ներդրումների մասին օրենքը, սակայն, հստակ չի ձևակերպում սահմանափակումների առկայությունը, և չի սահմանում, թե առկայության դեպքում որ ոլորտներում են կիրառվում դրանք: Օրենքը դա պետք է անի «բացասական ցանկի» մոտեցման կիրառմամբ: Օտարերկրյա սեփականության հետ կապված սահմանափակումներից բացի, համաձայն Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության, ներդրողների համար կարող են բարդություններ առաջացնել գործառնական պահանջները, ասենք՝ կապված տեղում աշխատելու կարգի և արտահանման հետ, և կարող են երկիր մուտք գործելու պահին խոչընդոտ դառնալ:

59. Օտարերկրյա ներդրողների համար գրանցման ընթացակարգերի արդյունավետության վերաբերյալ եզրակացությունները խառը պատկեր են ներկայացնում: Մի կողմից, առկա են գրանցման արագացված ընթացակարգեր, իսկ օտարերկրյա ընկերության մասնաճյուղ գործարկելու համար անհրաժեշտ

ընթացակարգերի միջին թիվը 4-ն է, անհրաժեշտ օրերի միջին քանակը՝ 9-ը¹⁷: Համաձայն Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության, գրանցման գործընթացում անհրաժեշտ է կապվել միջինը երկու հաստատության հետ: Գրանցման գործընթացում ներգրավված պետական մարմինների միջև համակարգումը խնդիրներ չի առաջացնում, և դեպքերի մեծամասնությունում բավարար կամ լավ է գնահատվել: Մյուս կողմից, լիցենզիաներ և թույլտվություններ ստանալու դյուրինությունը Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության հարցվողների մեկ երրորդի կողմից նշվել է որպես երկիր մուտք գործելու հետ կապված էական խոչընդոտ, իսկ ևս 23 տոկոսը երկրում ձեռնարկության գրանցման դյուրինությունը գնահատել է որպես մեկ այլ էական խոչընդոտ: Մրանից հետևում է, որ անհրաժեշտ է լրացուցիչ ուսումնասիրություն՝ պարզելու համար հնարավոր առանձին խոչընդոտները, որ կարող են գործնականում ի հայտ գալ առանձին ոլորտներում:

iii. Պաշտպանություն և պահպանում

60. **Ներդրողների պաշտպանության բարձր աստիճանը կարող է ամրապնդել ներդրողների վատահությունը, ինչը հանգեցնում է նոր ներդրումների և քաջալերում է առկա ներդրողներին՝ ընդլայնել իրեն գործարքները:** Ողջ աշխարհում վերաներդրումները հանդիսանում են ՕՈՍ կարևոր բաղադրիչը՝ որպես վերաներդրված եկամուտ, ինչը կազմում է զարգացող երկրների կողմից ստացված ՕՈՍ հոսքերի մեկ քառորդից մինչև երկու երրորդը¹⁸: Ողջ աշխարհի ներդրողները բախվում են պաշտպանության հետ կապված խնդիրների, ինչպիսիք են՝ Կառավարության կողմից անկանխատեսելի, կամայական և ոչ հետևողական գործողությունները (ներառյալ՝ տարբեր գերատեսչությունների կողմից օրենքի ոչ միատեսակ կիրառումը, օրենքներում ոչ բարենպաստ կամ հաճախակի փոփոխությունների կատարումը առանց կանոնակարգային թափանցիկության), հազիվ թե ընդլայնման հորիզոններ բացահայտեն, և անգամ կարող են չեղարկել կատարված ներդրումները: 2013 թվականին հարցման ենթարկված գլոբալ կորպորատիվ ներդրողների ավելի քան մեկ քառորդը հայտնել է, որ նախորդ տարվա ընթացքում ներդրողների պաշտպանության խնդիրները, որոնք հանգեցրել են քաղաքական ռիսկերի, զարգացող երկրներում գործող իրենց ընկերություններին ստիպել են հետ կանչել կատարված ներդրումները կամ չեղարկել նախատեսված ներդրումները¹⁹:

61. **Համաձայն մասնավոր հատվածի հետ հարցազրույցների արդյունքների և Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության, Հայաստանում բիզնես վարելուն խանգարող հիմնական խոչընդոտը՝ կապված ներդրողների պաշտպանության հետ, պետական մարմինների գործողությունների անկանխատեսելիությունը, կամայականությունն ու անհետևողականությունն է:** Եվ դա՝ հարցվածների 80 տոկոսի կարծիքով:

¹⁷ Համաշխարհային բանկ, Ներդրումներ առանց սահմանների, 2012թ.

¹⁸ Համաշխարհային բանկի խմբի տվյալներ.

¹⁹ MIGA, Համաշխարհային ներդրումները և քաղաքական ռիսկայնությունը, 2013թ.

Հարցազրույցների արդյունքում ներդրողների պաշտպանության հետ կապված հիմնական հարցերից են՝

- a. Օրենքների և կանոնակարգերի մասին անգլերենով հավաստի և թարմ տեղեկատվության հասանելիության պակասը.
- b. Իրավական ռեժիմի երկակիությունը՝ կապված հայաստանյան օրենսդրությունը ԵՏՄ-ին ներդաշնակեցնելու հետ, ինչն ազդում է ներդրումային, մաքսային և հարկային ռեժիմների վրա: Օրինակ, ԵՏՄ-ը պահանջում է, որ բեռների յուրաքանչյուր առաքման համար արտահանողները դիմեն արտահանման լիցենզիա ստանալու հարցով, մինչդեռ Հայաստանի օրենքներով լիցենզավորում ընդհանրապես չի պահանջվում.
- c. Որոշակի օրենքների և կանոնակարգերի կամայական մեկնաբանությունը (օրինակ՝ կողմնորոշիչ գնագոյացման հիման վրա ներմուծման վճարների որոշումը հստակ չէ, ինչը կարող է հանգեցնել ներմուծման հետ կապված ոչ ողջամիտ պարտավորությունների).
- d. Բոլոր ներդրողների համար գործունեության պայմանների անհավասարությունը՝ պետական մարմինների կոռումպացվածության և միջամտությունների հետևանքով.
- e. Թույլ դատական համակարգերը, չափազանց երկարատև և ծախսատար գործընթացները: Արդարադատության նախարարությունը ստեղծել է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն: Այդուհանդերձ, վերջինիս արդյունավետության աստիճանը, ինչպես նաև մասնավոր հատվածը ներկայացնող կողմերի միջև (բացառությամբ բանկերի ներգրավվածությամբ դեպքերի) վեճերի և պետության ու մասնավոր հատվածի միջև բողոքների ու վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների անբավարարությունը թուլացնում են ներդրողների պաշտպանվածությունը.
- f. Որոշ դեպքերում՝ մասնավոր պայմանագրերի իրականացվելիության հետ կապված հարցերը կարգավորվում են օտարերկրյա օրենսդրությամբ և օտարերկրյա արբիտրաժային որոշումներով, չնայած այն փաստին, որ Հայաստանը Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (ICSID) անդամ է և Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի մասնակից:

Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրությունում ի հայտ բերված, ներդրողների պաշտպանությանն առնչվող այլ խնդիրներ էին.

- a. կոռուպցիան (հարցվածների 73 տոկոսը),
- b. օրենսդրության հաճախակի փոփոխությունները (67 տոկոս),
- c. քաղաքական ռիսկերը (67 տոկոս):

Թեև Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջին մի քանի տարիներին մի շարք բարեփոխումներ է ձեռնարկել, կոռուպցիան շարունակում է խնդիր մնալ, հատկապես ներդրողների համար կարևոր այնպիսի ոլորտներում, ինչպիսին դատական համակարգն է: Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության մեջ արձարծված՝ ներդրողներին մտահոգող մեկ այլ խնդիր՝ օտարումը, ցածր ցուցանիշներ է արձանագրել, սակայն Ներդրումների մասին օրենքը լիարժեք հստակությամբ չի սահմանում, թե այս ասպարեզում պաշտպանության ինչ միջոցներ է ապահովում: Ինչպես քննարկվել է ավելի վաղ, արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի սկզբունքի բացակայությունը

Ներդրումների մասին օրենքից կարող է սխալ ազդանշան լինել ներդրողների համար, ովքեր մտահոգություններ ունեն կանոնակարգերի թափանցիկության առնչությամբ: ԱԱՎ սկզբունքը ներդրողներին պաշտպանում է խտրականությունից՝ ապահովելով պատշաճ ընթացակարգեր, ներառելով բարեխղճության, թափանցիկության սկզբունքները և պաշտպանելով արդարադատության ոտնահարումներից:

62. Ներդրողների պաշտպանության միջազգային այլ ցուցիչները Հայաստանի վերաբերյալ խառը պատկեր են ձևավորում: Հայաստանը համեմատաբար լավ դիրք է զբաղեցնում կառավարության կողմից քաղաքականություն մշակելու թափանցիկության ցուցանիշով, սակայն ոչ այնքան լավ՝ դատական մարմինների անկախության և վեճերի լուծման իրավական շրջանակի արդյունավետության առումով: Համաձայն Տնտեսական ազատության ցուցիչի, Հայաստանի տնտեսական ազատության ցուցանիշը 2015թ. վարկանիշային ցուցակում կազմել է 67.1 (նույնը, ինչ Մակեդոնիան, և Սլովակիայից ու Կոստա Ռիկայից անմիջապես հետո)՝ 1.8 կետով իջնելով անցյալ տարվա ցուցանիշից՝ սեփականության իրավունքների, աշխատանքային և դրամական ազատության հետ կապված իրավիճակի վատթարացման հետևանքով: Հենց դատական համակարգի ներգրավում ենթադրող ոլորտներն են, որ ներդրողների պաշտպանության հետ կապված մտահոգություններ են առաջացնում:


Աղյուսակ 4. Ներդրողների պաշտպանության ցուցիչները Հայաստանի վերաբերյալ

Ցուցիչը	Գնահատականը	Վարկանիշը	Աղբյուրը
Վեճերի լուծման իրավական շրջանակի արդյունավետությունը	3.35/7	95/144	ՀՏՖ
Իրավական շրջանակի արդյունավետությունը՝ ոչ միանշանակ կանոնակարգերի պայմաններում	3.24/7	84/144	ՀՏՖ
Դատական մարմինների անկախությունը	2.91/7	107/144	ՀՏՖ
Կառավարության կողմից քաղաքականության մշակման թափանցիկությունը	4.45/7	39/144	ՀՏՖ
Պետական հաստատությունները	3.74/7	72/144	ՀՏՖ
Սեփականության իրավունքի պաշտպանությունը	4.15/7	67/144	ՀՏՖ
Մտավոր սեփականության պաշտպանությունը	3.45/7	84/144	ՀՏՖ
Ներդրումների ազատությունը	67.1/100	52/165	Heritage հիմնադրամ

Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, Heritage հիմնադրամ.

63. Ներդրողների պաշտպանության հետ կապված խնդիրները հաճախ հանգեցնում են բողոքների: Ուստի, կարևոր է, որ նման բողոքները լուծվեն՝ նախքան լրջանալը և ներդրող-պետություն ֆորմալ վեճերի վերածվելը (գծապատկեր 15): Համաձայն Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության, ներդրողների 93 տոկոսը պետության դեմ ֆորմալ բողոքներ չի ներկայացրել: Խնդիրը, սակայն, կարող է կապված լինել այն հարցում առկա անորոշության հետ, թե ինչն է համարվում ֆորմալ բողոք: Համաշխարհային բանկի խմբի հայաստանյան առաքելությունները պարզել են, որ ներդրողները նշանակալի բողոքներ ունեն ագրեսիվ և հաճախակի տեսչական ստուգումների կապակցությամբ (օրինակ՝ հարկային, բնապահպանական, էներգետիկ), ինչը ոչ միայն էական ժամանակի վատնում և ծախսեր է ենթադրում, այլև հաճախ հանգեցնում է անտեղի դատական գործընթացների: Հարկային տեսչական ստուգումները, ինչպես և հարկային մարմինների հետ կապված խնդիրները բողոքների առանձնակի առիթ են:

Գծապատկեր 15. Բողոքներ և վեճեր



Պետություն կամ համաձայնագիր
 Հակասությունը վերածվում է վեճի (ծանուցում ներդրող-պետություն արբիտրաժային
 գործընթաց սկսելու մտադրության մասին)
 Խնդիր - Բողոք
 Բողոքին ընթացք տալը
 Երկրները կարող են բարելավել իրենց ներդրումային միջավայրը՝ այս փուլում ընթացք
 տալով ներդրողի բողոքներին
 Ներդրող-պետություն արբիտրաժային գործընթաց
 Վեճի լուծում
 Պահանջների բավարարում

64. Բողոքներին առնչություն ունեցած ներդրողները երբեմն դիմել են պետական գերատեսչությունների հետ ոչ ֆորմալ խորհրդակցությունների՝ լուծում գտնելու նպատակով: Համաձայն Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրության, հարցված ներդրողների միայն 20 տոկոսն է, որ նախաձեռնել է բողոք ներկայացնելու

Ֆորմալ գրավոր գործընթաց: Անկախ ներդրողների նախընտրած լուծման եղանակից, Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրությամբ ի հայտ է բերվել բողոքները բավարարելու գործում պետության ցածր արդյունավետությունը, որը հիմնականում գնահատվել է խիստ ցածրից մինչև բավարար:

65. **Եվ վերջապես, Հայաստանը պետք է ապահովի տնտեսական օգուտները՝ ԵՏՄ-ում և դրա սահմաններից դուրս տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներում:** Դրա համար պահանջվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում Հայաստանի դիրքորոշման ամուր և կանոնավոր ներկայացում: Ի թիվս այլ նշաձողերի, Հայաստանը պետք է ԱՀԿ առջև ստանձնած պարտավորությունների մասով լրացուցիչ բանակցություններ վարի, ինչն ուղղակի կամ անուղղակի ձևով կանդրադառնա ներդրողների վրա: Այս համատեքստում մի շարք ներդրողներ կարևոր են համարել այդ խնդրի համար ապահովել առավելագույն կարողությունների և ռեսուրսների հատկացումը:

V. Ներդրումային քաղաքականության բարեփոխումները. քաղաքական բնույթի առաջարկություններ

66. **Հայաստանի ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման շրջանակի բարեփոխումները պետք է իրականացվեն փուլային մոտեցմամբ:** Նման մոտեցման ժամանակ հարկավոր է նկատի առնել մի շարք բաղադրիչներ.

- Համընդհանուր տեսլական և երկրի զարգացման նպատակներին համապատասխանեցված քաղաքականություն,
- Քաղաքականությանն աջակցող օրենքների համակարգ,
- Օրենքների իրականացման համապատասխան կանոնակարգեր, որոնք կապահովեն իրականացման հստակ կանոնները,
- Քաղաքականությանը հարմարեցված ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ փաստացի իրականացումն ապահովելու նպատակով:

67. **Հիմք ընդունելով սույն հաշվետվությունում արված գնահատումը և ներդրումային քաղաքականության և դրա խթանման բնագավառում առկա դրական միջազգային փորձը, հետևյալ բնագավառները պետք է մեծ տեղ զբաղեցնեն ՀՀ կառավարության կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների օրակարգում՝ ներդրումների հետ կապված հիմնական քաղաքական, իրավական և ինստիտուցիոնալ բնույթի սահմանափակումները վերացնելու նպատակով.**

- Ներդրումների լավ ձևակերպված տեսլական, որի հիմքում ընկած կլինի ՕՈՒՆ հստակ սահմանված համակարգային ռազմավարություն՝ ներդրումներ ներգրավելու և պահպանելու նպատակով, ինչպես նաև դրանց իրականացման շրջանակը.
- Ներդրումների ներգրավման տեսանելի և ազդեցիկ քաղաքականություն (այդ թվում՝ խթանման միջոցներ և արդյունավետ արտոնություններ), որը համապատասխանեցված կլինի ՕՈՒՆ ռազմավարությանը.

- Ներդրողների պաշտպանության և պահպանման արդյունավետ միջոցառումներ՝ անդրադառնալով ներդրողների խնդիրներին.
- Ներդրումային քաղաքականության և ՕՈՆ հետ կապված խնդիրների արդյունավետ միջգերատեսչական համակարգում.
- Հայաստանի սահուն ներկայացվածություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝ առևտրի և ներդրումային քաղաքականության հետ կապված հարցերով:

Դրան զուգահեռ, անհրաժեշտ է անհապաղ ձեռնարկել Ներդրումների մասին 1994թ. օրենքի արդիականացում՝ քաղաքական և իրավական բարեփոխումների զուգակցումն ապահովելու նպատակով:

Խորհուրդ է տրվում նաև, որ ՀՀ կառավարությունն առանձին գործողությունների ծրագիր մշակի՝ սահմանելով բարեփոխումների առաջնահերթություններն ու գործողությունները, առաջատար գերատեսչություններն ու դրանց իրականացման ժամանակացույցը:

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 1. Ներդրումների լավ ձևակերպված տեսլական, որի հիմքում ընկած կլինի ՕՈՆ հստակ սահմանված համակարգային ռազմավարություն՝ ներդրումներ ներգրավելու և պահպանելու նպատակով, ինչպես նաև դրանց իրականացման շրջանակը

Ներդրումային տեսլականը պետք է հստակ հայտարարի այն դերը, որ ՕՈՆ-ը, ներառյալ՝ արդյունավետության զարգացմանն ուղղված ներդրումը, պետք է ունենա երկրի զարգացման նպատակներին հասնելու գործում: ՕՈՆ ռազմավարությամբ պետք է սահմանվեն ներդրումային քաղաքականության և ներդրումների խթանման համար պատասխանատու գերատեսչությունների դերերն ու պարտականությունները՝ ռազմավարության արդյունավետ իրականացումը, ինչպես նաև արդյունավետության բարձրացմանն ուղղված և այլ բնույթի ՕՈՆ-ներին ուղղված քաղաքականությունների հետ կապերն ապահովելու նպատակով (օրինակ՝ արտահանման խթանումը, հարկային և առևտրային քաղաքականությունը, հմտությունների զարգացումը, ենթակառուցվածքների զարգացումը): Ռազմավարությամբ պետք է նաև սահմանվեն ներդրումների գերակա հատվածները, ինչը կօգնի հասնելու քաղաքական բնույթի նպատակներին (օրինակ՝ ստեղծել բարձր որակավորում պահանջող աշխատատեղեր և դիվերսիֆիկացնել արտահանումը): ՕՈՆ համակարգային ռազմավարություն ունենալը օգնում է ձևակերպել երկրի համեմատական առավելությունը՝ հիմնվելով ՀՀ կառավարության զարգացման տեսլականի վրա, և ձևավորել գրավիչ ազգային բրենդ: Ընդհանուր և հստակ տեսլականը և ռազմավարությունը ավելացնում են քաղաքականության մշակման արդյունավետությունը, սակայն նաև արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրողներին դրական ազդակներ է ուղարկում ներդրումային քաղաքականության հարցում Կառավարության լուրջ պատրաստակամության վերաբերյալ:

Առաջարկվող գործընկերները՝ Կառավարության կողմից. ԷՆ և ՀԶՀ՝ ՕՈՆ հետ կապված հարցերի համար պատասխանատու այլ նախարարությունների հետ համագործակցությամբ:

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 2. Ներդրումների ներգրավման տեսանկյունի և ազդեցիկ քաղաքականություն

Ներդրումային տեսլականը և ՕՈՆ ռազմավարությունը ներդաշնակեցնելու համար ՀՀ կառավարությունը պետք է ռազմավարական և գործառնական մակարդակներում համակարգի խթանման և ֆասիլիտացիոն ջանքերը: Ինչ վերաբերում է Հայաստանի զարգացման հիմնադրամին (ՀԶՀ), Կանոնադրությամբ ներկայումս սահմանված չափազանց լայն իրավասությունների պայմաններում (ավելի քան 40 գործառույթ), անհրաժեշտ է ցուցաբերել ավելի կենտրոնացված մոտեցում և դրսևորել ուժեղ կարողություններ՝ գերատեսչության հիմնական լիազորություններն իրականացնելիս: Պատշաճ գործունեության համար խիստ կարևոր են նաև բավարար բյուջետային և այլ միջոցները: Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսների կառավարմանը, անհրաժեշտ է ունենալ անձնակազմի համալրման հստակ, թափանցիկ և մրցակցային ընթացակարգեր: Մոնիթորինգն ու գնահատումը (ՄԳ) չափազանց կարևոր են, և դրանց ընթացքում պետք է անդրադառնալ գործողությունների/ֆինանսական հայտարարագրերի հրապարակայնացմանը և պլանները խորհրդին ներկայացնելուն, ինչպես նաև կատարողականի պարբերական արտաքին գնահատմանը:

Ներդրումների ներգրավման արտոնությունների համատեքստում անհապաղ օժանդակություն պահանջող բնագավառ է առաջարկվող ներդրումային արտոնությունների մասին ներդրողների իրազեկվածության բարձրացումը: Հավելյալ իրազեկվածությունն ու թափանցիկությունը կարող են օգտակար լինել ներդրողների համար գործունեության հավասար պայմաններ ապահովելու հարցում: Ավելին, կարճաժամկետ հեռանկարում կարող է անհրաժեշտ լինել վերլուծել տեղանքով և գործելակերպով պայմանավորված ներդրումային արտոնությունները, հատկապես արդյունավետության բարձրացմանն ուղղված ոլորտներում՝ քաղաքական ցանկալի նպատակներին հասնելու գործում դրանց արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով մրցակցության վրա ազդող բացասական ներգործությունը: Այս գործողությունները կարող են հանգեցնել արտոնությունների (այդ թվում՝ ԱԱԳ սխեմաների շրջանակներում տրամադրված) ծախսային արդյունավետության վերլուծության:

Առաջարկվող գործընկերները՝ Կառավարության կողմից, ԷՆ և ՀԶՀ, ներդրումների ներգրավման և արտոնություններ առաջարկելու համար պատասխանատու այլ նախարարություններ (այդ թվում՝ Ֆինանսների և Գյուղատնտեսության նախարարությունները):

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 3. Ներդրողների պաշտպանության և պահպանման արդյունավետ միջոցառումներ

Ավելի վաղ ներկայացված վկայությունների համաձայն, ներդրողները խնդիրների բախվում են բիզնես հիմնելու գործընթացի տարբեր ոլորտներում, մասնավորապես՝ ծանր հարկային վարչարարությունը կամ մաքսային ընթացակարգերը: Ներդրողների պաշտպանության այս խնդիրները ծագում են կանոնակարգային թափանցիկության անբավարարությունից, որը բացասական հետևանքների է բերում ներդրումների ներգրավման գործում: Այս խնդիրներից շատերն ի հայտ են գալիս իրականացման, այլ ոչ թե անկատար օրենքների կամ կանոնակարգերի մակարդակում:

Ներդրողների պաշտպանության խնդիրներին անդրադառնալու, ներդրող-պետություն վեճերից խուսափելու և ներդրողների վստահությունն ամրապնդելու համար կարևոր է ձեռնարկել իրավական/կանոնակարգային բարեփոխումներ՝ հետևյալ նպատակներով. (i) համակարգված ձևով բարելավել ներդրողների պաշտպանության երաշխիքներն ու հարակից ընթացակարգերը, ներառյալ՝ Ներդրումների մասին Հայաստանի (1994թ.) օրենքը (տես քաղաքական բնույթի թիվ 6 առաջարկությունը), (ii) արդյունավետ լուծում տալ ներդրողների խնդիրներին/բողոքներին: Այս համատեքստում կարելի է քննարկել ներդրողների բողոքները գրանցելու, դրանց հետևելու և լուծելու մեխանիզմ, որը կձառայի ներդրումների պահպանման նպատակներին (Հավելված 4):

Առաջարկվող գործընկերները՝ Կառավարության կողմից. ԷՆ, ՀԶՀ և Արդարադատության նախարարություն:

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 4. Ներդրումային քաղաքականության և ՕՈՆ հետ կապված խնդիրների արդյունավետ միջգերատեսչական համակարգում

Բարելավված քաղաքականությունը և խթանումը համակարգող մեխանիզմը թույլ կտա ընդլայնել փոխգործակցությունն ու վերացնել ինստիտուցիոնալ մակարդակում գործողություններում տեղ գտած կրկնություններն ու հակասությունները: Օրինակ, ներդրումների **խթանման** տեսանկյունից, բարելավված համակարգումը կամրապնդի ՀԶՀ-ի դիրքերը՝ Էկոնոմիկայի նախարարության, Գյուղատնտեսության նախարարության, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության, համապատասխան այլ գերատեսչությունների (օրինակ՝ Սփյուռքի նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության) հետ ստեղծելով համակարգող մեխանիզմ: Ներդրողների պաշտպանության տեսանկյունից, բողոքների արդյունավետ լուծման մեխանիզմների համար անհրաժեշտ կլինի համակարգված գործակցություն բողոքների քննության գործում «առաջատար գերատեսչության» և տարբեր նախարարությունների և պետական այլ գերատեսչությունների, այդ թվում՝ ՀԶՀ-ի միջև:

Առաջարկվող գործընկերները՝ Կառավարության կողմից. ԷՆ, ՀԶՀ, այլ նախարարություններ (ենթակա է որոշման՝ ելնելով բարեփոխումների ուղղությունից)։

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 5. Հայաստանի կայուն ներկայացվածություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովում՝ առևտրի և ներդրումային քաղաքականության հետ կապված հարցերով

ԱՀԿ առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների լույսի ներքո, և հաշվի առնելով ԵՏՄ ինտեգրացիոն գործընթացներում ներառված առևտրային և ներդրումային քաղաքականության հարցերի փոխկապակցված բնույթը, հատկապես անհրաժեշտ է առավելագույնի հասցնել մաքսային, հարկային, մտավոր սեփականության իրավունքների և գյուղատնտեսության քաղաքականության գնահատման կարողությունները, ինչպես նաև Հանձնաժողովի հետ ինտեգրացիոն գործընթացների տարբեր հարցերի շուրջ բանակցելու և դրանք կառավարելու ռեսուրսները: Առաջարկվող գործողություններից են՝ ԵՏՄ/ԱՀԿ հետ կապված ներդրումային քաղաքականության հարցերի վերաբերյալ տեխնիկական կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումները և

Հայաստանը ԵՏՄ-ում/ԱՀԿ-ում ներկայացնող գերատեսչությունների գործունեության ինստիտուցիոնալ ներդաշնակեցումը:

Առաջարկվող գործընկերները՝ Կառավարության կողմից. ԷՆ, Գյուղատնտեսության նախարարություն, Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն և այլ նախարարություններ, որոնք Հայաստանը ներկայացնում են ԵՏՄ հանձնաժողովում և ԱՀԿ-ում:

Քաղաքական բնույթի առաջարկություն թիվ 6. Արդիականացված օրենք Օտարերկրյա ներդրումների մասին

Երկրի ներդրումային օրենքն առաջին փաստաթղթերից է, որ ներդրողներն ուսումնասիրում են՝ նախքան երկիր մուտք գործելը: Այն հաճախ ծառայում է նաև որպես հովանու դեր տանող իրավական փաստաթուղթ, որը սահմանում է ներդրումային քաղաքականության շրջանակի համընդհանուր սկզբունքները: Ներդրումների մասին Հայաստանի ներկայումս գործող 1994թ. օրենքը, ուժի մեջ մտնելու պահին, առաջընթաց էր համարվում, սակայն ներդրումային քաղաքականությունը, օրենսդրությունն ու ներդրումային գործունեությունը ստատիկ երևույթներ չեն, ժամանակի ընթացքում զարգանում են, ինչը օգտակար է դրանց համար: Երկրները մրցակցում են իրենց տնտեսություններն ավելի բաց դարձնելու և իրենց ներդրումային շրջանակներն արդիականացնելու հարցում՝ ՕՈՆՆ ներգրավելու և համաշխարհային տնտեսության հետ իրենց կապերն ընդլայնելու նպատակով: Համաշխարհային բանկի խմբի կողմից արդեն իսկ ձեռնարկված վերուծության (հավելված 3) իրականացումը կհանգեցնի Հայաստանի ներդրումային քաղաքականության ժամանակին և պատշաճ կատարելագործման:

Թեև Ներդրումների մասին օրենքն ընդհանուր առմամբ վատ օրենք չէ, այն մի շարք ոլորտներում կատարելագործման էական կարիք ունի (վերլուծությունը տես թիվ 3 հավելվածում): Դրական փոփոխություններից մեկը կարող է լինել «բացասական ցանկի» կիրառումը՝ ոլորտ մուտք գործելու սահմանափակումների թվարկմամբ, ինչպես նաև Օրենքով այդ ցանկի պարբերական վերանայման պահանջի սահմանումը: Այլ օրինակներ են՝ ԱԱՎ ստանդարտների սահմանումը, օտարումներից պաշտպանող դրույթների ամրապնդումը՝ անդրադառնալով թե՛ ուղղակի, և թե՛ անուղղակի օտարումներին, և առավել մանրամասն սահմանելով փոխհատուցման մասին դրույթները, արտարժույթի փոխարկելիության ամրապնդումը և փոխանցումների երաշխավորումը՝ ավելացնելով երաշխիքներից օգտվող գործառնությունների թիվը և պատեհաժամության բաղադրիչը՝ նշելով նաև հնարավոր բոլոր բացառությունները, պարզեցնելով վեճերի լուծման մասին դրույթը՝ վերապահելով Ներդրող-Պետություն վեճերի լուծման միջազգային արբիտրաժ դիմելու ուղղակի և անվերապահ իրավունք և հղումներ կատարելով ICSID կոնվենցիային, Նյու Յորքի կոնվենցիային և, մասնավորապես՝ UNCITRAL կանոններին:

Առաջարկվող գործընկերները Կառավարության կողմից. ՖՆ և ՀԶՀ և օրենքի վերանայման քաղաքական հետևանքներին առնչություն ունեցող այլ նախարարություններ:

Հավելված աղյուսակ 1. Ներդրման տիպոլոգիան

Օճւն տեսակը	Բնական ռեսուրսների բնագավառում	Շուկաների հայտնաբերմանն ուղղված	Արդյունավետության բարձրացմանն ուղղված	Ռազմավարական ակտիվների հայտնաբերմանն ուղղված
Վճռորոշ հանգամանքները	Բնական ռեսուրսների գտնվելու վայրը	<ul style="list-style-type: none"> • Շուկայի չափորոշիչները և մեկ շնչի հաշվարկով եկամուտը. • Շուկայի աճը. • Սպառողների առանձին նախընտրությունները. • Տրամադրվելիք ապրանքների և ծառայությունների տեսակը. 	<ul style="list-style-type: none"> • Արտադրության միջազգային փորձը. • Ընդունող երկրի համակարգային մրցունակությունը՝ հավանական այլ ընդունող երկրների համեմատ. • Արտահանման հիմնական շուկաներից օգտվելու ապահով (կամ նախընտրելի) հնարավորությունը (տես կապն առևտրի հետ). 	Միջազգային շուկա մուտք գործելու համար բավականաչափ փորձառու ֆիրմաները.

<p>Հիմնական հատկանիշները/Գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Նպատակակետ երկրի ներդրումային քաղաքականության ամենահաճախ պատահող մեկնակետը. • Համաշխարհային տնտեսությունում ինտեգրվելու ավանդական միջոց. • Վերցված է հյուսիս-հարավ ուղղությունը, թեև աճում է հարավից հարավ. • Այս ոլորտում արտահանման ջանքեր գործադրվում են (իսկ քաղաքականությունը հակված է արտացոլելու այդ միտումը). • Արտահանումների ավելացմանը զուգընթաց ՕՈւՆ-ը աճի միտում ունի (նաև արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈւՆ-ները համապատասխան ոլորտներում). 	<ul style="list-style-type: none"> • Ի հայտ է գալիս ՄԳ-ի միջոցով. • Ավանդաբար եղել է հյուսիս-հյուսիս, ապա՝ հյուսիս-հարավ, վերջին երկու տասնամյակներում դառնում է հարավ-հարավ և հարավ-հյուսիս. • Նպատակակետ երկրներում ՓՄՁ-ների միջազգայնացման միջոց • Ծառայությունները, որոնց միտված է այս տեսակի ՕՈւՆ-ը (թեև արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման դեպքում առկա է աճ՝ պատվիրակման միջոցով). • Տարածաշրջանային ինտեգրումն օգնում է խթանել այս տեսակի ՕՈւՆ-ներն առավել փոքր նպատակակետ երկրներում (ընդլայնելու համար շուկաներն ինչպես տարածաշրջանից դուրս, այնպես էլ տարածաշրջանում գործող բիզնեսների համար). • Տես նաև CU vs. FTA բանավեճը. 	<ul style="list-style-type: none"> • Արտահանմանն ուղղված. • Հավանական է՝ զուտ արտարժույթի փոխանակման խթանիչ. • Աշխատատեղեր ստեղծող. • Հավանական նշանակալի օգուտներ՝ ընդունող տնտեսության արտահանման ընդլայնման և դիվերսիֆիկացիայի առումով, ինչպես նաև տեխնոլոգիաների փոխանցում. • Կարող է նաև հանգեցնել ՕՈւՆ-ի ոչ կանոնադրական կապիտալի ձևերի. 	<p>Նպատակակետ երկրների առաջատար ընկերությունները Նպատակակետ շատ երկրներում այդ առաջատարները պետական ներդրողներն են (SOE-ներ և SWE-ներ)</p>
---	--	--	---	--


<p>Քաղաքատնտեսություն/Մարտահրավերներ</p>	<ul style="list-style-type: none"> • Հասույթների բաշխում. ռեսուրսների շահագործումից ստացված օգուտների արդարացի բաշխում. • Բնական ռեսուրսների տիրապետում. • Հոլանդական հիվանդություն (ապարդյունաբերացում). • Հասույթ ակնկալող քաղաքական կառույցներ. • Ուժեղ կոռուպցիոն ճնշումներ. • Աշխատանքային իրավունքներ և աշխատուժի հետ կապված սոցիալական այլ պայմաններ (օրինակ՝ առողջապահություն). • Բնապահպանական նկատառումներ. 	<p>Իրական կամ ենթադրվող ազդեցություն հետևյալի վրա.</p> <ul style="list-style-type: none"> • Տեղական արտադրություն (ապրանքների դուրսմղման հակափաստարկ). • Տեղացի մատակարարների արձագանքը. • Մրցակցային քաղաքականություն. • Ազգային անվտանգություն. 	<ul style="list-style-type: none"> • Համակարգային մրցունակությունն ապահովելու բարդություն. • Մրցակցություն երկրների միջև (արտոնություններ). • Ազդակների կարևորությունը (ավելի փոքր երկրների խոցելիությունը). • Ահագնացող հակասություններ ծագման երկրում. 	<ul style="list-style-type: none"> • Ավելացող տնտեսական հովանավորչություն. • Առավել տարածված հարավ-հյուսիս ՕՈՆՆ. • Ռեակցիան ընդդեմ SOE-ների և SWF-ների (պետական ներդրողների).
<p>Պատմական ակնարկ</p>	<ul style="list-style-type: none"> • ՕՈՆՆ ամենահին տարատեսակը. • Ծագել է գաղութատիրության ժամանակ. • Հյուսիս-հարավ բաժանման ծնունդ է. • Ներկայումս աճում է հանքանյութերի և սննդամթերքի ավելացած պահանջարկի պատճառով. 	<ul style="list-style-type: none"> • XIX դարում որոշակի նախնական հոսքեր զարգացող երկրներում. • Ի սկզբանե նախատեսված է եղել Հյուսիսի երկրների համար. • Ներմուծման փոխարինման և ինդուստրիալիզացիայի (I.S.I) քաղաքականությամբ պայմանավորված փոփոխություններ. • Ներկայումս ավելանում է և վերածվում է շուկային մատուցվող ծառայության (մասնավորապես, հաշվի առնելով ծառայությունների առուվաճառքը և BRIC-երի աճը). • Նախահաստատման հետ կապված հարցերի ավելացող շեշտադրում. 	<ul style="list-style-type: none"> • Դրույքաչափերի և առևտրի ընդհանուր համաձայնագրի (GATT) ազդեցություն արտադրական առևտրի ազատականացման վրա. • Ներկայումս ընդունված է միջազգային արժեշոթանների միջոցով. 	<p>Ավանդաբար սահմանափակված էր հյուսիս-հյուսիս ՕՈՆՆ-ով. վերջին 20 տարիներին սկսել է ավելի տարածում գտնել զարգացող երկրներում.</p>

<p>Առնչությունն առևտրին</p>	<ul style="list-style-type: none"> • Առևտրի առաջացման սկզբնական միջոց. • Ձևավորում է աշխատանքի միջազգային բաժանում, որը հանգեցնում է սկզբնական հյուսիս-հարավ բաժանման (ինչը ներկայումս փոփոխվում է). 	<ul style="list-style-type: none"> • Հովանավորչական քաղաքականություններ (նախնական արդյունաբերական բանավեճ և ներկայումս հովանավորչական դիրքորոշումներ որոշ BRIC-երում). • Ի սկզբանե առկա ընկալումը, որ ՕՈւՆ-ը փոխարինում է առևտրին (տուրքերի շրջանցում). • Առկա սերտ կապեր միջազգային մրցակցությունից գոյացած միջազգային արտադրական փորձից. • Ավելի շատ ՕՈւՆ-ը հանգեցնում է ավելի շատ առևտրի, ընդ որում, ոչ միայն ապրանքների, այլև ծառայությունների. 	<ul style="list-style-type: none"> • Առևտրին ստիպում է աճել կայծակնային արագությամբ. • Խթանում է միջֆիրմային առևտուրը. 	
-----------------------------	--	---	--	--

<p>Ենթադրություններ քաղաքականություն մշակելու համար/Բնչայես ընդունող երկիրն ինտեգրել արժեշղթայում</p>	<ul style="list-style-type: none"> • ՕՈՆ-ը միշտ չէ, որ օգուտներ է բերում տեղի տնտեսությանը. • ՕՈՆ-ը, որ ամենից դժվարն է կառավարել թերությունները նվազագույնի հասցնելու և հնարավոր օգուտներն առավելագույնի հասցնելու առումով (Նորվեգիան ընդդեմ Նիգերիայի). • Արտահանումների ավելացված արժեքն ավելացնելու կառավարությունների մշտական պահանջարկը. • Օգտակար ավելցուկն ավելացնելու անհրաժեշտություն. այդ ոլորտները կիրառել մյուսները զարգացնելու համար (Ավստրալիա, Կանադա). • Ապրանքների և ծառայությունների արտահանման խթանում և դիվերսիֆիկացիա (շուկայում զբաղեցրած տեղը). 	<ul style="list-style-type: none"> • Հաճախ անհրաժեշտություն է առաջանում հաղթահարել շահագրգիռ խմբերի ուժեղ դիմադրությունը. • Նպատակակետ երկրների ՓՄՁ-ների համար միջազգային շուկաներում հայտնվելու ընդունված միջոց է. • Ազատականացումը վերածվում է հիմնախնդրի, որի շուրջ ծավալվում են քաղաքական քննարկումները. • Մրցակցային խնդիրները կարևորվում են. 	<ul style="list-style-type: none"> • Օգուտների ակնհայտությունից դատելով՝ սա ՕՈՆ-ի առավել պահանջված տարատեսակն է. • Համակարգային մրցակցությունը վերածվում է հիմնախնդրի, որի շուրջ ծավալվում են քաղաքական քննարկումները. • ՕՈՆ-ները կարևորվում են. • Միջազգային շուկաներում ինտեգրվելու լոգիստիկան վճռորոշ է դառնում. 	
---	--	--	---	--


Հավելված 2. Հայաստանի ներդրումների 2014թ. ուսումնասիրություն. Ժողովրդագրական տվյալներ

Ոլորտի կազմությունը




Մունդ/խմիչք
 Ճշգրիտ ինժեներիա
 Դեղագործություն
 Գյուղատնտեսություն – չոր փրգեր
 Այլ (զբոսաշրջություն, մեքենաշինություն, էներգետիկա, ստեղծարար աշխատանքներ)

Մայր ընկերության գտնվելու վայրը



Օտարերկրյա սեփականության բաժնեմասը



Առկա չէ 41-50% 71-80% 91-100%

Հավելված 3. Համաշխարհային բանկի խմբի դիտողությունները Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության 1994թ. օրենքի վերաբերյալ

Ընդհանուր տեղեկություններ

Ներդրումների համար քաղաքականություն և իրավական շրջանակ սահմանելը և լիարժեք իրականացնելը երկարաժամկետ և բարդ նախաձեռնություն է, հատկապես այն երկրներում, որոնք կենտրոնական պլանավորմամբ աշխատող տնտեսությունից անցում են կատարել շուկայական տնտեսության, ինչպես և Հայաստանի Հանրապետությունը՝ սկսած 1980-ականների վերջերից:

Բազմաթիվ երկրներ տասնամյակներ են ծախսել և բարեփոխումների մի քանի շրջափուլ անցել, մինչև գտել են «ճշգրիտ բանաձևը»: Հայաստանն այս գործընթացում միայնակ չէ, և կարող է օգուտ քաղել այլ, այդ թվում նաև ԵՄ մի շարք երկրների երկրների փորձից, որոնք հաղթահարել են անցումային միևնույն փուլը:

Ներդրումների մասին 1994թ. օրենքը, որը դիտարկվում է այստեղ և որը դեռևս գործող օրենք է, ուժի մեջ մտնելու պահին քայլ առաջ էր համարվում: Սակայն ներդրումային քաղաքականությունը, օրենսդրությունն ու ներդրումային գործունեությունը ստատիկ երևույթներ չեն: Դրանք ժամանակի ընթացքում զարգանում են: Երկրները մրցակցում են իրենց տնտեսություններն ավելի բաց դարձնելու և իրենց ներդրումային շրջանակներն արդիականացնելու հարցում՝ փորձելով այդ ուժեղ մրցակցության արդյունքում ներգրավել օտարերկրյա ներդրումների ավելի շատ հոսքեր կամ բարելավել իրենց կապերը համաշխարհային տնտեսության հետ:

Այդ երկրները բազմակողմ և տարածաշրջանային առևտրի, ներդրումների ազատականացմանը և խթանմանն ուղղված ջանքերի ամբողջության մաս են կազմում, որոնք ուղղված են տնտեսությունն ավելի բաց դարձնելուն և ներդրողների պաշտպանության ավելի բարձր ստանդարտներ սահմանելուն: Հայաստանը ճիշտ նման իրավիճակում է. նրան անհրաժեշտ են ավելի շատ ներդրումներ, այդ թվում՝ Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈւՆ), գլոբալ և տարածաշրջանային արժեշտներում ավելի մեծ ներգրավվածություն: Հայաստանը նաև ակտիվ մասնակցում է ազատականացմանն ուղղված ջանքերին, հատկապես՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում: Ուստի, ներդրումային քաղաքականության վերանայմանն ու կատարելագործմանն ուղղված ջանքերը ժամանակին են և անհրաժեշտ:

Համաշխարհային բանկը, իր գլոբալ Առևտուր և մրցունակություն (ԱՄ) նախաձեռնության շրջանակներում այս գործընթացում աջակցում է Հայաստանի կառավարությանը՝ Հայաստանի ներդրումային միջավայրի II ծրագրի ներդրումային քաղաքականության բաղադրիչի միջոցով:

Ծրագրային այս գործողության շրջանակում է, որ Համաշխարհային բանկից խնդրվել է պատրաստել ներդրումների մասին գործող օրենքի նախնական վերանայումը՝ ի հայտ բերելու համար այն հարցերն ու դրույթները, որ բարելավման կարիք ունեն: Այն նախնառաջ ծառայում է որպես տեղեկատվական փաստաթուղթ՝ Էկոնոմիկայի նախարարության համապատասխան ներկայացուցիչների հետ օրենքի վերանայման շուրջ քննարկումներն սկսելու նպատակով: Այն նաև ծառայում է որպես ներդրում՝ ներկայումս Նախարարության և ներդրումային ոլորտի շահագրգիռ կողմերի հետ

ընթացող Ներդրումային բարեփոխումների քարտեզագրման գործընթացում, որի նպատակն է օգնել Հայաստանի կառավարությանը՝ ներդրումային քաղաքականության ասպարեզում բարեփոխումների գերակայությունները որոշելու հարցում:

1. Վերանայման շրջանակը, նպատակը, մեթոդաբանությունը և սահմանափակումները

1.1. Շրջանակն ու նպատակը

Այստեղ քննության է առնվում Հայաստանում օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրությունը, մասնավորապես՝ Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության 1994թ. հուլիսի 31-ի օրենքը (այսուհետ՝ Ներդրումների մասին օրենք կամ Օրենք): Նպատակն է՝ ի հայտ բերել գործող օրենքում հարցերը, որ կարող են վանել ՕՈՒՆ-ները:

Առկա փաստաթղթերի ուսումնասիրությամբ կարող ենք ի հայտ բերել այն բացերը, որ կարող են տեղ գտնել երկրի օրենսդրության և միջազգային լավագույն փորձի և/կամ երկրի ստանձնած պարտավորությունների միջև (միջազգային ներդրումների մասին վերջինիս համաձայնագրերի կամ միջազգային ներդրումների համաձայնագրերի շրջանակներում²⁰)՝ առանձնակի ուշադրություն դարձնելով օտարերկրյա ներդրողների մուտքին և ներդրողների պաշտպանությանը: Անհրաժեշտության դեպքում կարող ենք հանձնարարականներ մշակել այն փոփոխությունների մասին, որոնց նպատակը կլինի ներդրողների վստահության ամրապնդումը:

Ներդրողների ամրապնդված վստահությունը կարող է օգնել Հայաստանին՝ Հայաստանում ներդրումներ կատարելու հարցում հավանական ներդրողներին համոզելու գործում, իսկ գործող ներդրողներին՝ կրկին կատարել այդ ներդրումները՝ դրանով իսկ օգնելով կառավարությանը՝ հասնել առաջադրված նպատակներին: Այս դեպքում ներդրումների մասին օրենքը երեք հստակ նպատակ ունի (ամփոփ)²¹.

- օտարերկրյա ներդրողների իրավունքների և սեփականության պաշտպանություն,
- օտարերկրյա ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
- օտարերկրյա առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի արդյունավետ օգտագործում:

1.2. Մեթոդաբանությունը

Այս ակնարկը մշակվել է Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի օրենքի ուսումնասիրման հիման վրա: Եզրահանգումներն ու հանձնարարականները հիմնված են Հայաստանի Օրենքը համաշխարհային լավագույն փորձի հետ համեմատելու, ինչպես նաև Ներդրումների մասին օրենքով սահմանված ներդրողների պաշտպանության ստանդարտների և Հայաստանի կողմից կնքված ներդրումային մի շարք միջազգային համաձայնագրերով սահմանված ստանդարտների համադրության վրա:

Այս վերանայման շրջանակներում, Օրենքը հողված առ հողված մեկնաբանելու փոխարեն մենք հարցերը խմբավորել ենք ըստ երկու խոշոր ոլորտների.

²⁰ Այդ տերմինը վերաբերում է երկկողմ ներդրումային պայմանագրերին և ներդրումներին առնչվող այլ համաձայնագրերին:

²¹ Այս երեք նպատակները սահմանված են Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախաբանում:

- Ներդրումների պաշտպանություն, մասնավորապես՝ ներդրողների վրա տարածվող երաշխիքներ,
- Ներդրումների մուտքը երկիր, մասնավորապես՝ այդ մուտքին խանգարող սահմանափակումները:

Այս ակնարկն իրենից ներկայացնում է ամփոփում, որում ներկայացված են տարբերակներ Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի օրենքի հետագա բարելավումների հավանական ոլորտների վերաբերյալ:

1.3. Սահմանափակումները

Կարևոր է նկատի ունենալ, որ այս ակնարկում վերանայվել է միայն մեկ փաստաթուղթ՝ Օտարերկրյա ներդրումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքը՝ գնահատելու համար, թե որքանով է այն համահունչ կամ համապատասխան միջազգային լավագույն փորձին և Հայաստանի միջազգային պարտավորություններին, և թե ինչպես այն կարող է բարելավվել:

Օտարերկրյա կամ տեղական ներդրումները կանոնակարգող կամ դրանց կիրառումն ապահովող Հայաստանի այլ կարևոր օրենքներն ու կանոնակարգերը սույն ակնարկի մշակման ժամանակ չեն ուսումնասիրվել: Այդ օրենքների կիրարկման կամ գործնական կիրառության հետ կապված հարցերը ևս դուրս էին այս վերանայման շրջանակներից:

Համարելով, որ սույն վերլուծությունն իրավական բնույթի է, մեկնաբանություններ չենք ներկայացնի ներդրումների հետ կապված արտոնությունների կամ Հայաստանում ներկայումս առկա արտոնությունների տևողության վերաբերյալ: Ըստ էության, անհնար է կարծիք կազմել արտոնությունների ռեժիմի մասին՝ ընդամենը ընթերցելով Ներդրումների մասին օրենքը, որը միայն մի քանի ընդհանրական դրույթ է պարունակում արտոնությունների մասին:

Եվ վերջապես, պետք է նշել, որ մեր մեկնաբանությունները բացառապես հիմնված են Օրենքի անգլերեն տարբերակի վրա, և մեր վերանայման արդյունքում ի հայտ բերված մի շարք հարցեր կարող են բնօրինակում առկա չլինել: Ի սկզբանե կցանկանայինք առաջարկել կազմակերպել Ներդրումների մասին օրենքի բարձրորակ թարգմանությունը այնպիսի մեկի կողմից, ով փորձառու է անգլերեն իրավական և ներդրումային տերմինաբանության հարցում: Նման փաստաթուղթն օգտակար կլինի ոչ միայն մեզ նման միջազգային գործընկերների ուսումնասիրության համար. այն նաև կծառայի հայերենի չտիրապետող օտարերկրյա ներդրողների գործողությունները խթանելու հարցում երկրի ջանքերին:

2. Ներդրումների պաշտպանություն

Ներդրումների պաշտպանությունը այն կարևոր հարցերից է, որը պետք է քննության առնվի երկրի ներդրումային քաղաքականությունն ու օրենսդրությունը վերանայելիս: Եթե ներդրողները վստահ չեն, որ իրենց ներդրումը, ակտիվները, շինությունները, աշխատողները և հենց իրենք պատշաճ պաշտպանություն կարող են ակնկալել, նրանք պարզապես չեն կատարի այդ ներդրումները կամ այլևս չեն կատարի դրանք: Արդեն իսկ գործող ներդրողները կարող են լքել ընդունող երկիրը, եթե գտնեն, որ իրենց

ներդրումների պաշտպանվածության մակարդակն այլևս բավարար չէ (կամ եթե ռիսկի աստիճանը բարձր է, ինչն, ըստ էության, նույնն է): Ուստի, կարևոր է ապահովել ներդրումների պաշտպանությունը ամենաբարձր ստանդարտների համաձայն, եթե նպատակ է դրված ներգրավել ավելի շատ տեղական և օտարերկրյա ներդրումներ:

Օտարերկրյա ներդրողներն ուսումնասիրում են օտարերկրյա ներդրումների մասին երկրի օրենքը և դրանով սահմանված պաշտպանության երաշխիքները՝ որպես ներդրումային առաջադեմ միջավայրի առաջին ցուցիչներ: Ուստի, կարևոր է, որ Ներդրումների մասին օրենքն արտացոլի ներդրողների պաշտպանության երաշխիքները: Ներդրողների լավ պաշտպանությունն ի վերջո կնպաստի Հայաստանի՝ որպես ներդրումային նպատակակետ երկրի վստահությունը ներդրողների մոտ ամրապնդելուն: Այս դրույթների իրականացման համար Հայաստանը պետք է հավուր պատշաճի ներառի դրանք իր ներպետական օրենքներում և քաղաքականությունում:

Երաշխիքները, որոնք ամենուրեք համարվում են որպես հիմնական երաշխիքներ կամ ժամանակակից և բաց ներդրումային ռեժիմի անհրաժեշտ պայման (ինչը նշանակում է, որ եթե այդ երաշխիքներից որևէ մեկը բացակայում է կամ թույլ է, ապա ներդրումային համակարգը չի կարող լավագույն փորձ համարվել), ներառում են հետևյալը.

1. Խտրականության բացառում
 - Համահավասար վերաբերմունք.
 - Առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկիր.
2. Արդարացի և անկողմնակալ վերաբերմունք.
3. Արտարժույթի փոխարկելիություն/փոխանցում.
4. Պաշտպանություն օտարումից.
5. Վեճերի լուծում. Արբիտրաժներից օգտվելու հնարավորություն.

Հայաստանում ներդրումների պաշտպանության վերաբերյալ ստորև շարադրված իրավական վերլուծության մեկնակետը Ներդրումների մասին օրենքն է և Հայաստանի մասնակցությամբ Միջազգային ներդրումային համաձայնագրերը:

Սույն վերլուծության նպատակն է՝ պարզել Ներդրումների մասին օրենքով ներդրողների պաշտպանության համար սահմանված երաշխիքների հետ կապված բոլոր բացերը՝ համեմատելով դրանք Հայաստանի կողմից կնքված Միջազգային ներդրումային համաձայնագրերով սահմանված ավելի բարձր ստանդարտների հետ: Այդ բացերի հայտնաբերումը ծանրակշիռ հիմք կձևառայի ներդրումային օրենսդրության բարեփոխման և բարելավման համար՝ երկիրը ներդրումների համար առավել գրավիչ ուղղություն դարձնելու նպատակով:

Մենք վերլուծությունն սկսել ենք Միջազգային ներդրումների մասին այն հիմնական համաձայնագրերի ցուցակագրմամբ, որոնք ստորագրվել են Հայաստանի կողմից կամ որոնցով ենթադրվում են ներդրումներ Հայաստանում՝ պայմանավորված տարածաշրջանային կազմակերպություններին երկրի անդամակցությամբ: Ցանկը նաև ներառում է առևտրային այն համաձայնագրերը, որոնցում առանձին գլուխ կամ դրույթներ կան ներդրումների մասին: Համաձայնագրերը թվարկված են ստորև բերված աղյուսակում.

Գործող երկկողմ ներդրումային համաձայնագիր	Երկկողմ ներդրումային համաձայնագրեր, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել	Ներդրումային համաձայնագրեր այլ
Արգենտինա, Ավստրիա, Միացյալ Նահանգներ, Բուլղարիա, Բելգիա-Լյուքսեմբուրգ, Գերմանիա, Իրան, Լիբանան, Կանադա, Կիպրոս, Հնդկաստան, Հունաստան, Դոմինիկա, Միացյալ Թագավորություն, Չինաստան, Ռումինիա, Վիետնամ, Վրաստան, Ուկրաինա, Ֆրանսիա, Իտալիա, Շվեյցարիա, Իսրայել, Քաթար, Տաիվան, Ռուսաստան, Բելառուս, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ուրուգվայ, Ֆինլանդիա, Եգիպտոս, Նիդերլանդներ, Լատվիա, Շվեդիա, Լիտվա, Ղազախստան և Սիբիա.	Թուրքմենստան, Քուվեյթ.	Եվրասիական տնտեսական միության համաձայնագիր, ԱՊՀ ներդրողների իրավունքների մասին կոնվենցիա, Հայաստան-ԵՄ ասոցացման համաձայնագիր, Էներգետիկ խարտիայի համաձայնագիր.

Այնուհետ Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը համեմատել ենք պատահական ընտրված երկկողմ ներդրումային երեք համաձայնագրերի հետ՝ պարզելու համար, թե որքանով են դրանք ապահովում ներդրողների պաշտպանության՝ մեր կողմից առանձնացված վեց հիմնական երաշխիքները: Ստորև ներկայացված է այդ համեմատության արդյունքը.

Ներդրողի պաշտպանության հիմնական երաշխիքը	Ներդրումների մասին Հայաստանի օրենք	Հայաստան-Եգիպտոս երկկողմ ներդրումային համաձայնագիր	Հայաստան-Նիդերլանդներ երկկողմ ներդրումային համաձայնագիր	Հայաստան-Հնդկաստան երկկողմ ներդրումային համաձայնագիր
1. Համահավասար վերաբերմունք	Այո, առանց սահմանափակումների	Այո, ներդրումներն ու ներդրողները՝ միայն իրենց կառավարման, առօրյա գործունեության ապահովման, իրենց ներդրումների կիրառման, տիրապետման կամ տնօրինման առումով.	Այո, առանց սահմանափակումների	Այո, առանց սահմանափակումների
2. Առավել նպաստավոր պայմաններ առաջարկող	Ներառված չէ	Այո, ներդրումներն ու ներդրողները՝ միայն իրենց կառավարման,	Այո, առանց սահմանափակումների, բացառությամբ	Այո, առանց սահմանափակումների

երկիր		առօրյա գործունեության ապահովման, իրենց ներդրումների կիրառման, տիրապետման կամ տնօրինման առումով.	մաքսային միությունների, տնտեսական միությունների, դրամական միությունների կամ նման այլ կառույցների.	
3. Արդարացի և անկողմնակալ վերաբերմունք	Ներառված չէ	Ներառված չէ	Այո	Այո
4. Պաշտպանություն օտարումից	Ոչ այնքան հստակ	Այո	Այո	Այո
5. Արտարժույթի փոխարկելիություն և փոխանցում	Այո, բայց ոչ լիարժեք	Այո	Այո	Այո
6. Ներդրող-պետություն վեճերի լուծման ապահովում	Ներառված չէ	Այո, UNCITRAL կանոններով	Այո, ICSID կանոններով	Այո, UNCITRAL և ICSID կանոններով

Համեմատական վերլուծության այս առաջին աստիճանն օգտակար է՝ ցույց տալու համար Ներդրումների մասին օրենքը կատարելագործելու ուղիները՝ այն միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու և երկկողմ ներդրումային համաձայնագրերում նախանշված մակարդակի բերելու նպատակով: Երկրորդ պլանակում կարող ենք տեսնել, որ Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը կամ չի նախատեսում հիմնական երաշխիքներից մի քանիսը կամ ներառում է դրանք, սակայն որոշակի սահմանափակումներով կամ ոչ այնքան որոշակի, ինչը նվազեցնում է դրանց ազդեցությունն ու արդյունավետությունը:

Այնուհետ առավել մանրամասն ուսումնասիրել ենք հիմնական երաշխիքներից յուրաքանչյուրը՝ գնահատելու համար, թե ինչպես են դրանք ներառված (եթե ներառված են) Ներդրումների մասին օրենքում:

1) Խտրականության բացառման սկզբունքները. Համահավասար վերաբերմունք և առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկիր

Ներդրումների մասին օրենքն ընդհանուր առմամբ կողմնակից է օտարերկրյա և տեղացի ներդրողների միջև խտրականության բացառման ընդհանուր սկզբունքին:

Հոդված 6-ը նշում է, որ Պետությունը օտարերկրյա և տեղացի ներդրողներին տրամադրում է երաշխիքներ՝ սահմանելով, որ օտարերկրյա ներդրումների և դրանց հետ կապված իրավական ռեժիմը Հայաստանի Հանրապետությունում չի կարող *նվազ բարենպաստ* լինել, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների գույքի, գույքային իրավունքների և ներդրման գործունեության ռեժիմը:

Այդուհանդերձ, Օրենքը չի ներառում դրույթ Առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի սկզբունքի մասին՝ ներդրողի կամ ներդրման ծագման երկրով պայմանավորված խտրականությունը բացառելու նպատակով:

Վանդակ 1. Համահավասար վերաբերմունքի կամ Առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի վերաբերյալ դրույթի նմուշ

Հոդված X. Համահավասար վերաբերմունք կամ Առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկիր

(1) Համաձայն սույն օրենքի, այլ օրենքների, միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի [**X երկրի անվանումը**], օտարերկրյա ներդրողները պետք է ունենան նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ տեղացի ներդրողները:

(2) [**X երկրի անվանումը**], համաձայն Սահմանադրության, սույն օրենքի և ստանձնած միջազգային պարտավորությունների, օտարերկրյա ներդրողների նկատմամբ չպետք է որևէ ձևով խտրականություն դրսևորի՝ պայմանավորված վերջիններիս քաղաքացիությամբ, բնակության վայրով, գրանցման վայրով կամ ներդրման ծագման երկրով (ցանկը սպառիչ չէ):

2) Արդարացի և անկողմնակալ վերաբերմունք

Այս սկզբունքը բացակայում է Ներդրումների մասին օրենքից (սակայն ներառված է մեր ուսումնասիրած երկկողմ ներդրումային երեք համաձայնագրերից երկուսում): Արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի (ԱԱՎ) սկզբունքը շատ կարևոր է, որը հաճախ սխալ է հասկացվում, ինչը հեռահար հետևանքների է հանգեցնում: Այն ամբողջացնում է ներդրողներին խտրականությունից պաշտպանող շրջանակը՝ ապահովելով *պատշաճ ընթացակարգեր*, ներառելով բարեխղճության, *թափանցիկության* սկզբունքները և պաշտպանելով *արդարադատության ոտնահարումներից*:

Գործնական առումով, եթե Հայաստանն իր երկկողմ ներդրումային համաձայնագրերը տարածի օտարերկրյա ներդրողների վրա, դա կնշանակի, որ իր ներպետական օրենսդրությամբ Հայաստանը ներդրողներին պետք է տրամադրի հետևյալ 4 կամ 5 երաշխիքները.

ա. Խաղի կանոնների թափանցիկություն (օրինակ՝ բոլոր օրենքների, կանոնակարգերի, նման այլ փաստաթղթերի հրապարակում).

բ. Նախքան կանոնակարգերի փոփոխությունները կատարելը ծանուցվելու և կարծիք հայտնելու իրավունք.

գ. Արդարադատության մատչելիության երաշխիք. բողոք ներկայացնելու իրավունք, ընթացակարգերում արդարացի վերաբերմունքի իրավունք և դատական որոշման կատարում պահանջելու իրավունք, բողոքարկելու իրավունք.

դ. Երաշխիք, որ կառավարությունը կհարգի օտարերկրյա ներդրողների առջև ստանձնած բոլոր պարտավորությունները.

ե. Երաշխիք, որ կառավարությունը որոշումների կայացման ժամանակ կկիրառի համաչափության սկզբունքը:

Ինչպես կարելի է տեսնել, վերը շարադրված ԱԱՎ սկզբունքից բխող երաշխիքները տարբերվում են ներդրողներին տրամադրվող այլ երաշխիքներից և միանգամայն օգտավետ ձևով լրացնում են դրանց:

Ի տարբերություն համահավասար վերաբերմունք ցուցաբերող և առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկրի, որոնք համեմատաբար դրական դրույթներ են (այսինքն՝ դիտարկում են, թե ինչ վերաբերմունքի է արժանացել այս կամ այն օտարերկրյա ներդրողը՝ տեղական կամ օտարերկրյա այլ ներդրողների համեմատ), ԱԱՎ-ը բացարձակ չափանիշ է: Ուստի, անկախ տեղացի ներդրողների հանդեպ վերաբերմունքից, ԱԱՎ-ը օտարերկրյա ներդրողների համար պահանջում է վերաբերմունքի *նվազագույն* ստանդարտ: Այդ պատճառով, ԱԱՎ-ը համարվում է առավել համապարփակ և ներդրողի տեսանկյունից առավել հարմարավետ երաշխիք, նույնիսկ ավելի, քան համահավասար վերաբերմունքը կամ առավել նպաստավոր պայմաններ առաջարկող երկիրը:

Մյուս կողմից, ընդունող երկրի տեսանկյունից ԱԱՎ սկզբունքը որոշակի ռիսկեր է ենթադրում, քանի որ միջազգային սովորույթային իրավունքում կամ արբիտրաժային իրավական համակարգերում չկան հստակ սահմանում կամ հստակ սահմաններ, թե ինչ է այն ներառում, իսկ ինչ՝ ոչ: Ուստի, ներդրումների մասին օրենքում այն ներառելիս կարևոր է հստակ սահմանել դրա շրջանակն ու բովանդակությունը՝ դատավորներին կամ (ինչն ավելի հավանական է) արբիտրներին մեկնաբանությունների չափազանց լայն հնարավորություն չընձեռելու համար: Լավ մշակելու պարագայում ԱԱՎ ստանդարտը կարող է չափազանց ամուր գործիք լինել ներդրողների վստահությունն ամրապնդելու համար, և կարող է հանձնարարելի լինել Հայաստանում այն ընդունելու համար:

Այս փոփոխությունը ևս Հայաստանին կմոտեցնի լավագույն փորձին: Վերջերս կնքված միջազգային ներդրումային համաձայնագրերից շատերը, որոնք կոչվում են «գալիք սերնդի միջազգային ներդրումային համաձայնագրեր», պարունակում են հատուկ դրույթ, որով պետություններից պահանջվում է ապահովել *թափանցիկությունն ու պատշաճ ընթացակարգը*՝ արտացոլելով այս սկզբունքների շուրջ գնալով ավելի ծանրակշիռ դարձող միջազգային կոնսենսուսը: Միջազգային ներդրումային համաձայնագրերով թափանցիկության պարտավորությունը ներառում է ձեռնարկվող հատուկ միջոցների հրապարակումը, հանրային խորհրդակցությունը, դրանց մասին ծանուցումը, ինչպես նաև օրենքների ու կանոնակարգերի կիրառումից հետո դրանք վերանայելու գործընթացը: Այս պարտավորությունները կիրառելի են բոլոր օրենքների, կանոնակարգերի, որոշումների և ներդրումներին առնչվող ընդհանուր միջոցառումների նկատմամբ:

Վանդակ 2. «Գալիք սերնդի միջազգային ներդրումային համաձայնագրերում» թափանցիկության վերաբերյալ դրույթների օրինակ

Հոդված XX. Ներդրումների վերաբերյալ օրենքների ու որոշումների հրապարակումը

1. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի.

(ա) օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և ընդհանուր կիրառության վարչական որոշումների առկայությունը.

(բ) սույն պայմանագրի առարկա հանդիսացող ցանկացած խնդրի վերաբերող արբիտրաժային որոշումների անհապաղ հրապարակումը կամ այլ կերպ հանրության համար հասանելի դարձնելը:

2. Սույն հոդվածի իմաստով ընդհանուր կիրառության վարչական որոշումը վարչական այն որոշումը կամ մեկնաբանությունն է, որը կիրառվում է դրա կարգավորման ոլորտում գտնվող բոլոր այն անձանց ու փաստացի իրավիճակների նկատմամբ և սահմանում է վարքագծի կանոններ, սակայն չի ներառում հետևյալը.

(ա) վարչական կամ քվազի-դատական վարույթի շրջանակներում կայացված կարգադրությունը կամ որոշումը, որն առնչվում է տվյալ գործով անցնող մյուս կողմի ներդրմանը կամ ներդրողին.

(բ) որոշում, որը կայացված է որոշակի գործողության կամ գործունեության առնչությամբ:

Հոդված XX. Թափանցիկություն

1. Կոնտակտային կետեր

(ա) Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է կոնտակտային կետ կամ կետեր՝ Կողմերի միջև հաղորդակցությունը կամ սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած հարցի կարգավորումն ապահովելու նպատակով.

(բ) Մյուս կողմի խնդրանքով կոնտակտային կետերը պետք է մատնանշեն տվյալ հարցի համար պատասխանատու գրասենյակը կամ պաշտոնատար անձը և անհրաժեշտության դեպքում օժանդակեն խնդրող Կողմի հետ հաղորդակցությունն ապահովելու հարցում:

2. Հրապարակումը

Հնարավորության սահմաններում կողմերից յուրաքանչյուրը պետք է.

(ա) նախապես հրապարակի 10(1)(ա) հոդվածում հիշատակված այն միջոցառումները, որ առաջարկվում է հաստատել.

(բ) շահագրգիռ անձանց և մյուս կողմին տրամադրի առաջարկվող նման միջոցառումների վերաբերյալ նկատառումներ հայտնելու ողջամիտ հնարավորություն:

3. Ծանուցում և տեղեկատվության տրամադրում

(ա) Հնարավոր առավելագույն սահմաններում Կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմին պետք է ծանուցի առաջարկվող կամ փաստացի միջոցառումների մասին, որոնք, Կողմի կարծիքով, կարող են էապես անդրադառնալ սույն Պայմանագրի իրականացման վրա կամ այլ կերպ էապես ազդել մյուս կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված շահերի վրա.

(բ) Մյուս կողմի խնդրանքով Կողմը պետք է անհապաղ տեղեկատվություն տրամադրի կամ պատասխանի (ա) ենթապարբերությունում հիշատակված փաստացի կամ առաջարկվող ցանկացած միջոցառման մասին՝ անկախ այն հանգամանքից՝ մյուս կողմը նախկինում ծանուցվել է արդյոք տվյալ միջոցառման մասին.

(գ) Սույն պարբերությունում հիշատակված ցանկացած ծանուցում, խնդրանք կամ տեղեկատվություն մյուս կողմին պետք է փոխանցվի համապատասխան կոնտակտային կողմերի միջոցով.

(դ) Սույն պարբերությունում հիշատակված ցանկացած ծանուցում կամ տեղեկատվություն չպետք է կարծիք պարունակի սույն Պայմանագրին տվյալ միջոցառման համապատասխանության վերաբերյալ:

4. Վարչական վարույթ

10(1)(ա) հոդվածում հիշատակված բոլոր միջոցառումների հետևողական, անկողմնակալ

և ողջամիտ իրականացումն ապահովելու համար Կողմերից յուրաքանչյուրը պետք է իր վարչական վարույթներում ապահովի մյուս Կողմի որոշակի ներդրումների կամ ներդրողների նկատմամբ նման միջոցառումների իրականացումը, որպեսզի.

(ա) մյուս Կողմի՝ վարույթի ուղղակի ազդեցությանը ենթակա անձինք հնարավոր բոլոր դեպքերում ներպետական ընթացակարգերի համաձայն ստանան ողջամիտ ծանուցում նախաձեռնվող վարույթի մասին, այդ թվում՝ վարույթի բնույթի նկարագրությունը, վարույթն իրականացնող իրավական մարմնի անվանումը և խնդրո առարկա բոլոր հարցերի ընդհանուր նկարագրությունը.

(բ) նման անձանց տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ նախքան որևէ վերջնական վարչական գործողություն ձեռնարկելը ներկայացնել փաստեր ու փաստարկներ՝ ի պաշտպանություն իրենց դիրքորոշման, եթե վարույթի ժամկետներն ու բնույթը թույլ են տալիս դա.

(գ) վարույթը համապատասխանի ներպետական օրենսդրությանը.

5. Քննություն և բողոքարկում

(ա) Կողմերից յուրաքանչյուրը պետք է ստեղծի դատական, քվադր-դատական կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր՝ սույն Պայմանագրի առարկայի շուրջ ծագած հարցերի անհապաղ քննության և, համապատասխան դեպքերում՝ շտկման ու վերջնական վարչական գործողություններ իրականացնելու նպատակով: Այդ տրիբունալները պետք է լինեն վարչական իրավասություններով օժտված մարմիններից անկախ և անկողմնակալ, և որևէ կերպ շահագրգիռ չլինեն գործի ելքով.

(բ) Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ վարույթի կողմերը նման տրիբունալներում կամ վարույթներում օժտված լինեն հետևյալ իրավունքներով.

(i) իրենց համապատասխան դիրքորոշումը պաշտպանելու ողջամիտ հնարավորություն.

(ii) որոշման կայացում՝ ապացույցների կամ արձանագրությունների կամ, ներպետական օրենքով սահմանված դեպքերում, վարչական մարմնի կողմից կազմված արձանագրության հիման վրա.

(գ) Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ նման որոշումներն իրականացվեն վարչական տվյալ գործողության համար պատասխանատու մարմինների կողմից, ինչը ենթակա է բողոքարկման կամ լրացուցիչ քննության՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Աղբյուրը՝ ԱՄՆ-Ուրուգվայ երկկողմ ներդրումային պայմանագրի թիվ 10 և 11 հոդվածներ.

3) Արտարժույթի փոխարկելիության/փոխանցման երաշխավորումը

Ներդրումների մասին օրենքի 10-րդ հոդվածը օտարերկրյա ներդրողներին թույլ է տալիս տնօրինել իրենց եկամուտները, Հայաստանում բացել բանկային հաշիվներ և օգտագործել իրենց «օրինական կարգով ստացած միջոցները՝ արտարժույթ ձեռք բերելու նպատակով»: Ավելին, 11-րդ հոդվածը օտարերկրյա ներդրողներին երաշխավորում է հնարավորություն՝ «ազատորեն արտահանելու իրենց սեփականությունը, շահույթը և այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես փոխհատուցում»: Այս երկու հոդվածները միասին վերցրած կարող են արտարժույթի փոխարկելիության և փոխանցման ողջամիտ երաշխիքի

տրամադրում համարվել, եթե ուշադրություն չդարձնենք կիրառված տերմինոլոգիայի հետ կապված մի շարք խնդիրներին (օրինակ՝ «արտահանելու իրենց սեփականությունը») և պակասող մի քանի բաղադրիչներին:

Փոխանցման երաշխիքի լավագույն փորձի կարևոր տարրերից մեկն այն է, որ փոխանցումը պետք է կատարվի ժամանակին և արագորեն: Լավագույն օրենսդրություններով անգամ սահմանվում է, որ կառավարության գործողությունների հետևանքով փոխանցման ձախողման դեպքում հաշվարկվում են տոկոսներ (բացառությամբ նախապես համաձայնեցված դեպքերի, օրինակ, երբ վճարումների հաշվեկշիռը ճգնաժամային վիճակում է): Այս առումով Ներդրումների մասին օրենքը որևէ հիշատակում չի պարունակում «ժամանակին և արագ փոխանցման» մասին: Նման փոխանցում կատարելու համար անհրաժեշտ իրավական և վարչական պահանջների ուսումնասիրությունը թույլ կտա առավել ճշգրիտ գնահատել, թե օտարերկրյա ներդրողի համար միջին հաշվով որքանով է հեշտ կամ դժվար իրականացնել դիվիդենդի փոխանցումը և գործնականում որքան ժամանակ է անհրաժեշտ դրա համար:

Բացի այդ, պետք է նշել, որ մեր ուսումնասիրած երկկողմ ներդրումային համաձայնագրերով Հայաստանը պարտավորվել է ժամանակին ապահովել փոխանցումները: Հետևաբար, խորհուրդ կտայինք վերանայել համապատասխան դրույթները՝ ներառելով դրույթ «ժամանակին արվող փոխանցման» մասին, կատարելագործելով ու հստակեցնելով կիրառված որոշ տերմիններ և սահմանելով երաշխիքների հետ կապված բացառությունները, եթե այդպիսիք առկա են (օրինակ՝ ժամանակավոր սահմանափակումները՝ պայմանավորված վճարման հաշվեկշռի ճգնաժամային վիճակով): Եվ վերջապես, լավ կլիներ որպես փոխարկման փոխարժեք համարել փոխանցման օրվա դրությամբ փոխանակման շուկայական փոխարժեքը:

4) Պաշտպանություն օտարումից

Ներդրումների մասին օրենքի 8-րդ հոդվածը ներդրողներին պաշտպանում է ազգայնացումից և բռնագրավումից: Այն սահմանում է, որ օտարերկրյա ներդրումները ազգայնացման ենթակա չեն: Եվ որ առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ: Այս հոդվածը օտարման մասին որևէ բան չի ասում:

Ամենից առաջ կարևոր է պարզաբանել, որ ազգայնացումը, բռնագրավումը և օտարումը տարբեր հասկացություններ են: Ազգայնացումը, լայն առումով, մի գործընթաց է, որով արտադրությունը կամ ակտիվները վերցվում են որպես կառավարության կամ պետության հանրային սեփականություն: Բռնագրավումը սեփականությունն առգրավելու և այն պետական գանձապետարան հանձնելու գործողություն է: Բռնագրավումն ամենից հաճախ կիրառվում է անօրինական առարկաների, օրինակ՝ թմրանյութերի կամ զենքի, կամ անօրինական ապրանքների վաճառքից ստացվող շահույթի վրա, և դեպքերի մեծամասնությունում այդ գործողությանը փոխհատուցում չի հետևում: Օտարումը պետության կողմից մասնավոր սեփականությունը վերցնելու գործողություն է. օտարման իրավունքը իրավական տերմին է, որը սահմանում է այդպես վարվելու՝ կառավարության իրավունքը: Ուստի, տիպոլոգիան ամբողջական տեսքի բերելու համար հարկավոր է

կիրառել երեք տերմին (ազգայնացում, բռնագրավում և օտարում): Իսկ եթե պետք է կիրառվի տերմիններից միայն մեկը, ապա այդ մեկը պետք է լինի օտարումը:

Երկրորդ, որևէ մեկը չի ասում, թե կառավարությունը պետք է խոստանա երբևէ չօտարել կամ երբևէ չդիմել օտարման: Ընդամենը ակնկալվում է պաշտպանություն անօրինական, չարաշահումներով զուգորդվող, առանց պատշաճ ընթացակարգերի, առանց հիմնավոր պատճառաբանության, խտրականությամբ զուգորդվող և/կամ առանց փոխհատուցման օտարումներից: Հետևաբար, այս դրույթի նպատակը ոչ թե ազգայնացման կամ օտարման հարցում կառավարության առջև արգելքներ դնելն է, այլ ապահովության որոշ միջոցներ և երաշխիքներ սահմանելը (միայն հանրային նպատակներով, պատշաճ ընթացակարգերով, առանց խտրականության և անհապաղ, պատշաճ ու արդյունավետ փոխհատուցմամբ):

Երրորդ, լավագույն փորձի պայմաններում ներդրողները պաշտպանված են ոչ միայն ուղղակի օտարումից, այլև անուղղակի գործողություններից, որոնք նույնանման հետևանք են ունենում (անուղղակի օտարում), այսինքն, այնպիսի գործողություններից, որոնք ներդրողներին զրկում են իրենց սեփականությունից կամ ներդրման տնօրինումից, ընդ որում, ոչ բոլոր դեպքերում զրկելով անվանական իրավունքից: Սեփականության ուղղակի առգրավումից բացի, մեր ժամանակներում օտարերկրյա ներդրողներին սպառնացող ավելի մեծ վտանգ են այն գործողությունները (ներառյալ կանոնակարգող միջոցառումները), որոնց հետևանքները համարժեք են ուղղակի օտարմանը: Հետևաբար, պաշտպանության շրջանակները պետք է ավելի լայն լինեն՝ ներառելով օտարման երկու եղանակները:

Չորրորդ, ներկայիս դրույթը սահմանում է, որ բռնագրավումը ենթակա է «անհապաղ փոխհատուցման՝ ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտների գնահատումներով որոշված գներով»: «Անհապաղ փոխհատուցման՝ ընթացիկ շուկայական կամ անկախ աուդիտների գնահատումներով որոշված գներով» արտահայտության իմաստն անորոշ է: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ միջազգային մակարդակով գոյություն ունի գրեթե համընդհանուր կոնսենսուս առ այն, որ օրինական օտարման ստանդարտ չափանիշները «անհապաղ, պատշաճ և արդյունավետ» արտահայտություններն են: Երկրների մակարդակով դեռևս որոշակի տարբերակներ շրջանառվում են, սակայն, որպես կանոն, երկրների ներդրումային պարտավորությունները համապատասխանում են «անհապաղ, պատշաճ և արդյունավետ» ստանդարտներին: Պետություններն ազատ են որոշելու դրանցից բացի այլ ստանդարտների հարցը, եթե դրանք պայմանավորված են փոխհատուցման փաստացի վճարման համար ներպետական անհրաժեշտ ընթացակարգերով:

«Անհապաղ, պատշաճ և արդյունավետ» ստանդարտից բխում է, որ փոխհատուցումը պետք է վճարվի ժամանակին/առանց ձգձգումների և ազատ փոխարկելի արժույթով: Բացի այդ, պահանջվում է, որ փոխհատուցումը լինի պատշաճ, այսինքն, գնահատումը պետք է իրականացվի իրական շուկայական արժեքով: Օտարերկրյա ուղղակի ներդրումներին ընթացք տալու մասին Համաշխարհային բանկի ուղենիշները շուկայական արժեքը սահմանում են որպես «գումար, որը գնել ցանկացողը կվճարեր վաճառել ցանկացողին՝ հաշվի առնելով ներդրման բնույթը, հանգամանքները, որոնց պայմաններում այն օգտագործվելու է հետագայում, և դրան բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում այն

գոյություն է ունեցել, ընդհանուր ներդրման մեջ տեղ գտած նյութական արժեքների մասնաբաժինը և տվյալ դեպքի առանձնահատկություններից բխող համապատասխան այլ գործոններ»։ Սովորաբար ենթադրվում է, որ գնահատումը պետք է ներառի գործող ձեռնարկության արժեքը, ակտիվների արժեքը, ներառյալ՝ նյութական գույքի հայտարարագրված հարկային արժեքը։ Հարկ է նշել, որ թե՛ փոխհատուցումը ժամանակին վճարելը, և թե՛ փոխհատուցման գումարը չափազանց կարևոր են ներդրողների համար, հետևաբար, կարող են իրենց տեղը գտնել Ներդրումների մասին օրենքում։

Վերը նշված դրական փորձի բոլոր օրինակները ներկայացված են նաև ուսումնասիրված և Հայաստանի իրավական համակարգի մաս կազմող երկկողմ ներդրումային համաձայնագրերում։ Այդ համաձայնագրերին համապատասխանելու և դրանց հետևելու նկատառումներից ելնելով, ինչպես նաև օտարերկրյա ներդրողներին ճիշտ ազդակ ուղարկելու, որոշակիությունն ու հստակությունն ավելացնելու նպատակով Հայաստանի համար չափազանց կարևոր է այս սկզբունքները ներառել ներպետական օրենսդրությունում, ինչպես նաև ապահովել դրանց արդյունավետ իրականացումը։

Վանդակ 3. Օտարման մասին դրույթի օրինակ (Հայաստան – ԱՄՆ երկկողմ ներդրումային համաձայնագիր)

Հոդված X. Օտարում և ազգայնացում

Ներդրումները չպետք է ուղղակի կամ անուղղակի օտարվեն կամ ազգայնացվեն օտարմանը կամ ազգայնացմանը հավասարեցված միջոցներով (օտարում), բացառությամբ այն դեպքերի, երբ դա իրականացվում է հանրային նպատակներով, առանց խտրականության, անհապաղ, պատշաճ և արդյունավետ փոխհատուցման վճարմամբ և օրենքով սահմանված կարգով։ Փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրման իրական շուկայական արժեքին՝ օտարման գործողությունից կամ դրա մասին իմանալուց անմիջապես առաջ (որը որ ժամանակային առումով ավելի վաղ է տեղի ունեցել), հաշվարկվի ազատորեն կիրառելի արժույթով՝ տվյալ պահին գերակշռող փոխարժեքի հիման վրա, վճարի առնց ձգձգումների, ներառի տոկոսագումար օտարման օրվա դրությամբ ողջամիտ առևտրային դրույթաչափով, լինի լիարժեք իրագործելի և ազատ փոխարկելի։

5) Վեճերի լուծումը

Համաձայն Ներդրումների մասին օրենքի 24-րդ հոդվածի, օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը, որոնք ծագել են օտարերկրյա ներդրողի և Հայաստանի Հանրապետության միջև, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում։

Ներդրումների մասին օրենքը լրջորեն թերանում է օտարերկրյա ներդրումների մասին օտարերկրյա համանման օրենսդրությունում տեղ գտած լավագույն փորձի ստանդարտների արտացոլման հարցում։ Ներկայումս տարածված պրակտիկան ենթադրում է հստակ հիշատակում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներից, մասնավորապես՝ միջազգային արբիտրաժից օգտվելու երաշխավորված հնարավորության մասին, ընդ որում, ոչ միայն բիզնես-բիզնես, այլև ներդրող-պետություն վեճերի ժամանակ։

ICSID-ին (որի լիիրավ անդամ է Հայաստանը, և որը Հայաստանի համար ուժի մեջ է մտել 1992թ. հոկտեմբերի 16-ին) և UNCITRAL-ին կատարվող հղումները շատ ընդունված են, և օտարերկրյա ներդրումների մասին օրենսդրությունում նման հղումների բացակայությունը կարող է մտահոգության առարկա դառնալ բազմաթիվ օտարերկրյա ներդրողների համար: Հայաստանը 1998 թվականին միացել է նաև Նյու Յորքի կոնվենցիային, որի հիշատակումը կարող է ներդրողներին հավաստիացնել, որ արտերկրում կայացված արբիտրաժային որոշումների դեպքում իրենք կարող են դիմել դրանք Հայաստանում ճանաչելու և իրականացնելու հարցով:

Վեճերի լուծման դրույթների հետ կապված լավագույն փորձի նման բաղադրիչներ ներառված են նաև մեր կողմից ուսումնասիրված երկկողմ ներդրումային համաձայնագրերում, որոնք Հայաստանի իրավական համակարգի մաս են կազմում: Այդ համաձայնագրերին համապատասխանելու և դրանց հետևելու նկատառումներից ելնելով, ինչպես նաև օտարերկրյա ներդրողներին ճիշտ ազդակ ուղարկելու, որոշակիությունն ու հստակությունն ավելացնելու նպատակով Հայաստանի համար չափազանց կարևոր է այդ դրույթը ներառել ներպետական օրենսդրությունում, ինչպես նաև ապահովել դրանց արդյունավետ իրականացումը:

6) Այլ երաշխիքներ և պարտավորություններ

Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը նախատեսում է օտարերկրյա ներդրողներին տրամադրվող այլ երաշխիքներ ևս.

<i>Հոդված 2. Միջազգային համաձայնագրերի ճանաչումը</i>	Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի հետ հակասությունների դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները:
<i>Հոդված 7. Իրավական շրջանակի կայունացումը</i>	Օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը:
<i>Հոդված 9. Նյութական և բարոյական վնասների հատուցումը</i>	Օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական այն վնասների, ներառյալ բաց թողնված օգուտի դատական կարգով փոխհատուցման իրավունք, որոնք հասցվել են պետական մարմինների անօրինական գործողությունների կամ պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:
<i>Հոդված 19. Գույքային իրավունքներ հողի և բնական այլ ռեսուրսների նկատմամբ</i>	Օտարերկրյա ներդրողների կողմից հողի և բնական այլ ռեսուրսների վերաբերյալ գույքային իրավունքների ձեռքբերումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենսդրական ակտերով:
<i>Հոդված 20. Գույքը վարձակալությամբ տրամադրելը</i>	Օտարերկրյա ներդրողներին և օտարերկրյա ներդրումներով ձեռնարկություններին վարձակալությամբ գույքի տրամադրումը իրականացվում է վարձակալական պայմանագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
<i>Հոդված 21. Կոնցեսիոն պայմանագրեր</i>	Օտարերկրյա ներդրողները կարող են վերարտադրվող և չվերարտադրվող բնական ռեսուրսները շահագործել կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
<i>Հոդված 22. Մտավոր սեփականության</i>	Օտարերկրյա ներդրողների մտավոր սեփականության իրավունքների իրացումն ու պաշտպանությունն ապահովվում

<i>իրավունքներ</i>	են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
<i>Հոդված 23. Գույքի և ռիսկերի ապահովագրություն</i>	Օտարերկրյա ներդրողի գույքի և ռիսկի ապահովագրությունը կատարվում է նրա հայեցողությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ կարգ նախատեսված չէ:
<i>Հոդված 25. Օտարերկրյա ներդրողների պատասխանատվությունը և պարտավորությունները</i>	Օտարերկրյա ներդրողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար: Օտարերկրյա ներդրողի գույքը, ներառյալ՝ ներգրավված միջոցները, գույքային իրավունքները կարող են նրա կողմից օգտագործվել որպես իր պարտավորությունների ապահովման միջոց:

Այս երաշխիքները էական նկատառումներ չեն պարունակում: Դրանք հղումներ են երկրի այլ օրենքներին: Դրանց նախատեսումը դրական, սակայն ոչ միշտ՝ էական հանգամանք է, այն առումով, որ ներդրողները ամեն դեպքում կարող էին գույք վարձակալել, իսկ Հայաստանում նրանց սեփականության իրավունքները պաշտպանված կլինեին անգամ այն դեպքում, եթե Ներդրումների մասին օրենքը ոչինչ չնախատեսեր այդ հարցերի մասին (քանի որ այդ իրավունքները կարգավորված են երկրի այլ օրենքներով, հնարավոր է նաև՝ Սահմանադրությամբ): Մյուս կողմից, քանի դեռ Ներդրումների մասին օրենքը ներդրողներին հատուկ չի պաշտպանում անուղղակի օտարումից կամ հատուկ չի սահմանում Արդարացի և անկողմնակալ վերաբերմունքը, կա ռիսկ, որ այդ երաշխիքները չեն ընդունվի և իրականացվի (բացառությամբ այն երկրների ներդրողների, որոնք Հայաստանի հետ ունեն երկկողմ ներդրումային համաձայնագրեր, որոնցով ճանաչվում են այդ երաշխիքները): Նմանապես, քանի դեռ միջազգային արբիտրաժը հատուկ արտացոլում չի գտել Ներդրումների մասին օրենքում, հնարավոր է, որ այն գործուն տարբերակ չլինի այդ ներդրողների համար, և կրկին, բացառությամբ այն երկրները ներկայացնող ներդրողների, որոնք երկկողմ ներդրումային համաձայնագիր կամ պայմանագիր ունեն Հայաստանի հետ, ինչը նրանց թույլ կտար հավանական կամ փաստացի վեճը ներկայացնել միջազգային արբիտրաժի քննությանը: Դա է նաև պատճառը, որ ներդրողների պաշտպանության «հիմնական» և «ոչ հիմնական» բաղադրիչները առանձնացվում են միմյանցից:

3. Ներդրման մուտքը երկիր. Շուկայից օգտվելու հնարավորությունը և ներդրումային ընթացակարգերը

3.1. Շուկայից օգտվելու հնարավորությունը

Աշխարհի շատ (եթե ոչ՝ բոլոր), այդ թվում՝ ՏՀԶԿ տնտեսություններում, առկա են ներդրումների հետ կապված սահմանափակումներ կամ արգելքներ, որոնք վերաբերում են օտարերկրյա ուղղակի ներդրումներին: Եթե տվյալ տնտեսությունում նման սահմանափակումներ առկա են, այդ մասին հարկավոր է նշել Օտարերկրյա ներդրումների մասին օրենքում՝ առաջնորդվելով թափանցիկության, կանխատեսելիության և արդարացիության ոգով:

Որոշ դեպքերում սահմանափակումները կարող են ուղղակի թվարկվել օրենքում, սակայն կլինեն դեպքեր (օրինակ՝ այս կամ այն ոլորտում/արդյունաբերության ճյուղում ներդրում կատարելու առավելագույն սահմանաչափ կամ արգելք), երբ ավելի ճիշտ կլինի սկզբունքը ներառել Օրենքում, սակայն ոլորտները թվարկել օրենքին կից ներկայացվող

«բացասական ցանկում», որը կարգավիճակով ավելի ցածր փաստաթուղթ է (օրինակ՝ որոշում կամ կանոնակարգ): Այս համակարգը լավագույն փորձ է համարվում երկու պատճառով.

- Այն ներդրողներին թույլ է տալիս անմիջապես տեղեկանալ, թե որտեղ կարող են ներդնել կամ հրաժարվել ներդրում կատարելուց, կամ որտեղ է առկա բաժնեմասերի հետ կապված սահմանափակում.
- Որոշման մեջ ոլորտների թվարկումը Կառավարությանը թույլ է տալիս ժամանակի ընթացքում է՛լ ավելի ազատականացնել տնտեսությունը՝ առանց Ներդրումների մասին հիմնական օրենքը վերանայելու անհրաժեշտության (քանի որ որոշումների վերանայումը սովորաբար ավելի հեշտ է, քան օրենքներինը):

Հայաստանի պարագայում 1994թ. օրենքը չի խոսում ներդրումների հետ կապված սահմանափակումների առկայության կամ այդպիսիք սահմանելու դեպքերի մասին:

Այս հարցի շուրջ Ներդրումների մասին օրենքի լրությունը կարող է նշանակել, որ տնտեսությունը լիովին բաց է ՕՈՆ-ների համար՝ առանց որևէ տեսակի սահմանափակման: Թե՞ դա նշանակում է, որ տեղեկատվության մի կարևոր հատված բացակայում է Օրենքից:

Եթե ճիշտ ենթադրությունը վերջինն է, ապա հարկավոր է Օրենքի վերանայմամբ շտկել դա: Ներդրումային բարեփոխումների քարտեզագրման միջոցով կարող ենք պարզել հավանական սահմանափակումները, գնահատել դրանք միջազգային միտումների և լավագույն փորձի հիման վրա, սահմանափակումների չափազանցության դեպքում ռացիոնալացնել դրանք, կարող ենք օգնել դրանք բացասական ցանկի տեսքով Օրենքում ներառելու հարցում: Դա կօգնի լուծել ներկայիս անորոշությունները առկա սահմանափակումների վերաբերյալ:

Բացի այդ, բացասական ցանկի պարբերական վերանայման անհրաժեշտությունը ևս կարող է նախատեսվել Ներդրումների մասին օրենքով՝ սահմանելով սկզբունք առ այն, որ «բացասական ցանկը կարող է վերանայվել միայն լրացուցիչ ազատականացման նպատակով» (այսինքն, կառավարությունը կարող է պարտավորվել ժամանակի ընթացքում վերանայել ցանկը և ձեռնպահ մնալ որոշակի ոլորտների ազատականացումից հետո պարտավորությունների վերանայումից): Այս գաղափարների իրագործման համար երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի Հայաստանը տեղ զբաղեցնի ամենից արդիական և բաց ներդրումային քաղաքականություն ունեցող երկրների շարքում:

3.2. Ներդրումների ընթացակարգը. օտարերկրյա ներդրման գրանցումը

Համաձայն 12-րդ հոդվածի, օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները, դրանց բաժանմունքները, մասնաձյուղերը, ներկայացուցչությունները, ձեռնարկությունների տնտեսական միավորումները հիմնադրվում և գրանցվում են «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով:

Ավելին, 14-րդ հոդվածը սահմանում է, որ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները կարող են իրականացնել իրենց կանոնադրությամբ նախատեսված

նպատակներին համապատասխանող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած տեսակի տնտեսական գործունեություն: Հատկանշական է, որ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տնտեսական գործունեության առանձին տեսակներով կարող են զբաղվել միայն սահմանված կարգով լիցենզիա ստանալուց հետո:

Մեր կարծիքով, Ներդրումների մասին օրենքը ստուգման և հաստատման պահանջ չի սահմանում, այլ պահանջում է միմիայն գրանցում (ինչը շատ դրական հանգամանք է), եթե Հայաստանի օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Կարող է օգտակար լինել այն օրենքների ու կանոնակարգերի վերանայումը, որոնք տնտեսական գործունեության որոշակի տեսակների համար լիցենզավորում են սահմանում՝ լավագույն փորձին դրանց համապատասխանության աստիճանը գնահատելու և հիշյալ լիցենզավորման պահանջների հստակեցման կամ պարզեցման նպատակարարությունը որոշելու համար: Այս խնդիրը Ներդրումների մասին օրենքի սույն վերանայման շրջանակներից միանգամայն դուրս է:

Եզրահանգում

Մեր եզրահանգումը հետևյալն է. Ներդրումների մասին 1994թ. Օրենքը, այն ուժի մեջ մտնելու պահին դրական տեղաշարժ էր հանդիսանում: Այն բազմաթիվ դրական դրույթներ է պարունակում և վկայում է օտարերկրյա ներդրումների և ներդրողների նկատմամբ կառավարության ու պետական քաղաքականության բացության բարձր աստիճանի մասին: Թեև այն խիստ թույլ կամ անկատար չէ, և մեր ուսումնասիրած օրենքներից ամենավատթարը չէ, մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքը էական բարելավման կարիք ունի այն ոլորտներում, որ ի հայտ ենք բերել այս ուսումնասիրության արդյունքում:

Մասնավորապես, Ներդրողների պաշտպանության հիմնական երաշխիքները պետք է ամրապնդվեն հետևյալ միջոցառումներով.


- Արդարացի և անկողմնակալ վերաբերմունքի ստանդարտների ներդրում.
- Օտարումից պաշտպանության ամրապնդում՝ լավագույն փորձի բաղադրիչների ներդրմամբ, անդրադառնալով թե՛ ուղղակի, և թե՛ անուղղակի օտարումներին և առավել մանրամասն ներկայացնելով փոխհատուցման պայմանները.
- Արտարժույթի փոխարկելիության և փոխանցման երաշխիքների ամրապնդումը՝ ավելացնելով երաշխիքից օգտվող գործառնությունների տեսակները և ներդնելով դրանք ժամանակին կատարելու բաղադրիչը՝ միաժամանակ նշելով հնարավոր բոլոր բացառությունները.
- Հստակեցնել վեճերի լուծման մասին դրույթը՝ նախատեսելով Ներդրող-պետություն վեճերի պարագայում միջազգային արբիտրաժ դիմելու հստակ և անվերապահ իրավունքը և հատուկ հղումներ կատարելով ICSID կոնվենցիային, Նյու Յորքի կոնվենցիային, և, մասնավորապես՝ UNCITRAL կանոններին:

Ինչ վերաբերում է ներդրման ձևակերպմանը, Օրենքը պետք է պարզաբանի ՕՈՒՆ ձևակերպումների հետ կապված սահմանափակումների առկայությունը, և, իդեալական պարագայում, կիրառի «բացասական ցանկի» համակարգը՝ հստակ թվարկելով բոլոր այդ

սահմանափակումները: Հարկավոր է նաև բացասական ցանկի պարբերական վերանայումը բերել ինստիտուցիոնալ մակարդակի: «Բացասական ցանկը միայն լրացուցիչ ազատականացման նպատակով վերանայելու» (այսինքն, Կառավարության կողմից ժամանակի ընթացքում ցանկի վերանայման և որոշակի ոլորտների ազատականացումից հետո պարտավորությունների վերանայումից ձեռնպահ մնալու) սկզբունքը ևս պետք է քննարկվի՝ որպես տարբեր երկրների կողմից որդեգրված լավագույն փորձ:

Համաշխարհային բանկի խմբի Առևտրի և մրցունակության թիմը լիովին պատրաստ է իշխանությունների հետ քննարկվել վերը ներկայացված եզրակացություններն ու առաջարկությունները, ինչպես նաև պարզել, թե տեխնիկական ինչ օժանդակություն կարող է ցուցաբերվել այդ առաջարկությունների հիման վրա Ներդրումների մասին օրենքը վերանայելու հարցում:

Հավելված 4. Ներդրողներին երկրում պահելու և վերջիններիս վստահությունը ձեռք բերելու մեխանիզմի օրինակ



ՆԵՐԴՐՈՂՆԵՐ	Ներդրողները խնդիրներ են ունենում հետևյալ հարցերում.	1. Հետևելու և մոնիթորինգի համակարգ
	Օտարում	Յուրաքանչյուր բողոքի / խնդրի առնչությամբ պետք է արձանագրվի հետևյալը. ա) Ներդրողի նկարագիրը և ներդրումների արժեթղթերի քանակը. բ) Խնդրի ոլորտը. գ) Ներգրավված պետական գերատեսչությունները. դ) Բողոքի առարկայի ազդեցությունը ներդրումային պլանի վրա. ե) Բողոքի առարկայի ազդեցությունը եկամուտների և այլ հարցերի վրա. զ) Ներդրողի կողմից ձեռնարկված քայլերը. է) Բողոքի առարկայի վերաբերյալ ներպետական/միջազգային դատական գործի առկայությունը, գործի ներկայիս կարգավիճակը.
	Պայմանագրի խախտում	2. Ներդրողին երկրում պահելու և վստահության մեխանիզմները
	Թափանցիկության պակաս, պետական մարմինների անկանխատեսելի և կամայական գործողություններ Արտարժույթի փոխարկում և փոխանցում	Հիմնական նպատակներն են՝ ա) Ղեկավար գերատեսչության ստեղծումը և վերջինիս ներկայացվող պահանջները. բ) Տեղեկատվության տրամադրումը. գ) Վաղ նախազգուշացումը. դ) Խնդրի լուծման դրական փորձը. ե) Լուծման իրականացումը: